

# ԽՍՔԱՐՔՉԻԿ

«Մանկանց երկիրը» մանկապատանեկան ալմանախի հավելված | 5/6'2015





## Աշխարհ, հեռանկարներ, բազմակարծություն


Նոյեմբերի քսաներեքից քսանինը Հովհանիսի մայրաքաղաք Բուլղարիայի մայրաքաղաք Բուլղապետուում տեղի ունեցավ Եվրոպական երիտասարդական մամուլ (European Youth Press - EYP) կազմակերպության, որի անդամ է նաև «Մանան» կենտրոնը, կազմակերպած «World Perspectives: Diversity Voices» ծրագրի յոթօրյա սեմինարը, որտեղ Ծովինարը, Հովհանը և ես ներկայացնում էինք «Մանան» և Հայաստանը: Այս անգամ սեմինարը մասնավորապես վերաբերվում էր փախստականների և ազգային փոքրամասնությունների խնդիրները լուսաբանելու դժվարություններին: Տարբեր երկրներից հավաքվել էին մեդիա ոլորտի ներկայացուցիչներ՝ լրագրողներ, բլոգերներ, հասարակական կազմակերպությունների անդամներ և ակտիվիստներ՝ հասկանալու և իրենց համար պարզաբանելու աշխարհում տեղի ունեցող մի շարք իրադարձությունների հնարավոր պատճառները, հետևանքները և դրանց հաղթահարման ուղիները:

Փախստականների խնդիրները ավելի լավ հասկանալու համար մեզ համար կազմակերպել էին հանդիպումներ, դասախոսություններ, քննարկումներ՝ մարդու իրավունքների, սոցիալական խնդիրների մասին: Դրանցից մեկի

ժամանակ մենք նոյնիսկ հասցրեցինք փոքրիկ ներկայացում բեմադրել, որի ժամանակ մի խումբը պետք է հանդես գար սահմանապահի դերում, իսկ մյուս խմբի անդամներից յուրաքանչյուրը պետք է հանդես գար սիրիացի փախստականի դերում: Ներկայացումից հետո բուռն քննարկում եղավ, և մենք բոլորս խուցինք այն մասին, թե ինչ էինք գգում այդ պահին և ինչպես կվարվեինք սահմանապահների տեղը լինելու դեպքում: Սեմինարի հիմնական նպատակներից մեկը մամուլում տարածվող կեղծ ինֆորմացիայի դեմ պայքարի միջոցներին ծանրանալ էր: Մենք մի ամրությ օր ուսումնասիրում էինք ինֆորմացիան ստուգելու և

այն իրապարակելուց առաջ ամեն հնարավոր ծներով դրա կեղծ իններու հավանականությունը կանխելու ծները: Մեզանից յուրաքանչյուրը իր թիմակցի հետ այդ յոթ օրերի ընթացքում կատարած ուսումնասիրությունների արդյունքում պետք է պատրաստեր փոքրիկ նախագիծ վիդեոռեպորտաժի, ֆուսոռեպորտաժի կամ հոդվածի տեսքով: Վերջին օրը տեղի ունեցավ մեր կատարած աշխատանքների ներկայացում և քննարկում այն ամենի մասին, ինչ մենք հասկացանք և ինչի միջոցով գուցե մեզանից յուրաքանչյուրը հետագայում կարողանա օգնել աշխարհին: Այս խնդիրները, որոնց շուրջ մենք քննարկումներ էինք անցկացնում սեմինարների ժամանակ, շատ հրատապ են նաև մեր երկրում, և մենք հուսով ենք, որ այսուհետ այս թեմաներին շատ ավելի խորությամբ կանդրադառնանք մեր նյութերում: Նա, չմոռանամ ասել, որ այդ օրերի ընթացքում չնայած նրան, որ Հովհարիայում տվյալականից շատ ավելի շուտ էր մթնում, մենք հասցրինք գրունել Բուլղապետութիւն և գեղեցիկ փողոցներով: Շանօթանալ շինություններին, վիճել «հանուն ճշշտ ժանապարհի» քարտեզը ծերքներին, ուտել ամենատարբեր ուտելիքներ և կորցնել իմ երկու գլխարկները, որոնք հուսամ հիմա Հովհարիայում ինչ-որ մեկին տաքացնում են:

## Դիանա Շահբազյան





Լուսամեալը՝ Արդիա Արտահայտութիւն

## Չուտով

-Ամիս-ամսաթիվն է՝ և նոք գրում թեստի վրա, - հարցրեց կողքիս նստողը:  
-Չա, էսօր քանի՞ն ա, - հարցին հարցով պատասխանեցի ես:  
-Դեկտեմբերի 21-ն ա, - զոյն իր թեստի վրա դասընկերուիիս ու նայելով զարմացած դեմքիս, հարցրեց.  
-Ի՞նչ եղավ:  
-Արդեն դեկտեմբերի 21-ն ա՞: Արագ անցավ: Ջեսա Նոր տարի ա:  
-Չա, -անտարեր ասաց նա:  
Իսկ ես նայեցի թեստի վերևում գրված ամսաթիվն և ընկա մտքերի մեջ: Նոր տարին մոտենում է՝ շուտով կարծ, բայց շատ անհրաժեշտ ու սպասված արձակուրդներ առանց պարապմունքների, ինչ-որ հրաշքի սպասում, լավ տրամադրություն, նոր հույսեր, ջերմ զգացումներ, գեղեցիկ լուսավորված փողոցներ, ամանորյա հրաշալի ֆիլմեր, երգեր...  
Չնայած դրանք շատ սպասված էին, բայց այդքան մոտիկ լինելու ինձ մի պահ հածելի անակնկալի թերեցին: Անցյալ տարի ասես ամանորյա տրամադրություն կորած լիներ, իսկ այս տարի ես ոգևորությամբ ու մանկան պես հրաշքների հավատով

վերանում են, իսկ ժամանող դեմքերը տեղից էլ շատ քիչ են մեր փողոցներում:

**2.** Դուք անընդհատ ինչ-որ վատ բան եք տեսնում վիրտուալ շփման մեջ: Զգիտեմ ինչու, դա ծեղ համար հանցանքին հավասար մի բան է: Դեմ եք մեր վիրտուալ շփմանը, բայց մեզ անընդհատ հորդորում եք շատ շփվել մեր ընկերների հետ: Իսկ ինտերնետը ամենալավ միշոցն է միշտ կապի մեջ լինելու համար: Էլ չասեմ, որ ինքներդ էլ հավեսով օգտվում եք սքայփից ու ֆեյսբուքից՝ ծեր բարեկամների հետ խոսելու համար:

**3.** Նոյն, երկրորդ կետի թեմայով. այդքան կողմ լինելով կենդանի շփմանը, հաճախ ինքներդ եք մեզ արգելում դուրս գալ ընկերների հետ, կամ կարծում եք, որ այդ ժամանակը ավելի օգտակար բանի վրա կարելի է ծախսել: Զեք վստահում, որ մենք ինքներս կարող ենք տնօրինել մեր ժամանակը:

**4.** Չեմ կարողանում հասկանալ, թե ինչու եք բացասաբար վերաբերվում մեր տեխնիկային, իսկ ինքներդ ուզում եք ամեն նոր բան ունենալ, անկախ այն բանից, օգտվել գիտեք, թե ոչ: Ի՞նչ վատ բան կա ինտերնետի,

սպասում եմ Նոր տարվա գալուն: Զգիտեմ, թե ինչու էր իմ ամանորյա տրամադրությունն ինձ լրել, բայց նրա վերադարձին ես միայն ուրախ եմ:

### Անի Զիլավան, 16տ,

## Յոթ ուղերձ մեծերին

**1.** Խնդրում եմ, մի մեջադրեք մեզ, որ ծանոթ չեմ ծեր իր դժբախտություններին և կարող ենք հանգիստ ծիծաղելու ու փողոցում: Եթե բարձր ձայներով ծեղ չենք խանգարում, խնդրում եմ, բարս մի նայեք մեր ժափիներին, որովհետև դրանք շատ հեշտությամբ

ականջակալների ու հեռախոսների մեջ: Երբ մեզ ականջակալներով եք տեսմում, անպայման մի քիչ թարս եք նայում, կարծում եք, որ դա անուշադրության պատճառ է, որ կարող ենք իրեն թե չսել մեքենայի ծայնը ու մեքենայի տակ ընկնել, կարծում եք, ականջակալները անտարբերության նշան են: Իսկ իրականում մի՞թե վատ է, որ քո երաժշտությունը միշտ թեզ հետ է:

**5.** Ժամանակին, երբ մեր տարիքին եղել, դուք իհարկե շատ գեղեցիկ ու ոճային եք հագնվել, բայց ծաշակը ժառանգաբար չի փոխանցվում: Խնդրում եմ, մի մոռացեք, որ ձեր ժաշակը մեր ժաշակը չէ, և մենք առանձին անհատ ենք, մեր ժաշակով: Միգուցե դուք կուգենայիք, որ ձեր աղջիկը հագնվեր գեղեցիկ ու «աղջկական», ինչպես, օրինակ, ձեր հարևանի աղջիկը, բայց խնդրում եմ հաշվի առեք, որ ամեն մեկն իր ժաշակն ունի, և գուցե ձեր աղջկան կամ տղային դուր չի գալիս դասական ոճը, կամ հարմար չէ ամենօրյա խանաշփոթի համար:

**6.** Ինչ վերաբերվում է հարևանի աղջկան կամ տղային: Խնդրում եմ, երբեք մեզ մի համեմատեք ուղիղ մեկի հետ: Նախ, նորից կա անհատականության հարցը՝ ամեն մեկս մեր լավ ու վատ կողմերն ունենք, տարբեր ենք: Իսկ համեմատությունը մեր ականջին հաճախ այսպես է հնչում: «Այ, եթե նա լիներ իմ երեխան, և ոչ թե դու...»: Էլ չեմ շարունակում: Դուք հասկացաք, հուսով եմ:

**7.** Վերադառնամ ժաշկների տարբերությանը: Եթե ինչ-որ գիրք կարդալու համար մենք խորհուրդ ենք հարցնում ինտերնետից և ոչ թե ծեղնից, դա չի նշանակում, որ մենք ծեղ անտեսում ենք, կամ կասկածում, որ դուք բավականաշակ կարդացած եք: Պարզապես, հնարավոր է մեզ այլս չեն հետաքրքրում «Ձեյն երն» ու «Անգուխ ծիավորը»: Կարող է նաև ինչ-որ մեկին շատ հետաքրքի է: Նորից նոյն հարց է, որն ամենաշատն եմ ուղղում հասկանաք: Մենք տարբեր ենք, ծեր աշքին նույնը թվացող «այս սերնդի» մեջ լիիվ տարբեր մարդիկ են: Մի ընդհանրացրեք մեզ:

**Դ. 4.** Շնորհակալություն ուշադրության համար, խնդրում եմ, միշտ հաշվի առեք մեր կարծիքը, կամ գոնե լսեք:

**Մարիամ Նալբանդյան**

## Ի Խորոց սրտի

Իմ դպրոցում, որն ունի անգիտական թեքում, իններորդ դասարանցիները անում են շաբաթական չորս ժամ ֆիզիկա: Չորսն էլ իրար հետևից, գոնե մենք աստղագիտություն լիներ: Այսի, մենք ֆիզիկոս չենք դառնալու: Ինչ՝ է մեզ պետք շաբաթական չորս ժամ ֆիզիկա: Դիմա կարդացող ուսուցչուհին կասի. «ծրագիրն է շատ», ուրեմն, կարելի է այդքան չգրել գրի մեջ: Աշակերտները ֆիզիկա անցնում են յոթերորդ դասարանից, ուրեմն, թող հեղինակները թեմաները հավասար բաշխեն: Եվ ընդհանրապես, այդքան ծանրաբեռնել աշակերտներին չի կարելի: Չե որ մենք գալիս ենք դպրոց սովորելու համար, իսկ երբ մարդ իրար հետևից անում է համաշխարհային պատմություն, հանրահաշիվ, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, ռուս գրականություն և անգլերեն, նոր գիտելիքը հասկանալը դառնում է անմատուց բերդ: Բացի այդ, մենք դեռ պետք է այդքան տնային անենք, իսկ ինչպես նկատեցիք, մենք մասը պատմողական դասեր են: Ուղղակի ուզում եմ հիշեցնել: մենք ավարտական դասարան ենք: Դասարանի 70%-ը պարապում է ուրիշ առարկաներ, գնում է պարապմունքների, նրանց էլ են տնային տախիս, և պատկերացրեք այդ երեխաներին օրվա վերջում: Այսի, այդքան դաժան չի կարելի լինել: Դասերի քանակը պետք է կրծատել և դասավորել այնպես, որ աշակերտը եփած ուղեղով չգնա տուն: Կարելի է նաև այդքան շատ մեզմից չպահանջել: Մենք բացի իրենց առարկայից դեռ 15 հատ էլ ունենք, որը ասեմ՝ չեք հավատա, նոյնայեն պետք է սովորել: Զմոռանանք նաև ընդամենը հինգ րոպե դասամիջոց ունենալու մասին: Մեզ՝ աշակերտներիս, անհրաժեշտ է մաքուր օդ, որպեսզի մեր ուղեղները, որոնք 3-րդ ժամից արդեն հրաժարվում են դաս հասկանալ, կարողանան աշխատել և ամեն կերպ փորձում ենք ավելի երկար մնալ դրսում: Հետո է ուսուցչուհիները զայրանում են, թե ինչո՞ւ ենք մենք դասարան մտել զանգից հետո, իրենցից հետո: Այսի, ինչպես չեք հասկանում. այդ զոհաբերությունը ձեր համար է, ուսուցիչներ, մենք դա անում ենք, որպեսզի 45 րոպե կարողանանք հանգիստ նստել և դաս լսել: Վերջիվերջո, մենք էլ ենք

չ՝ մարդ, մենք էլ կարիք ունենք սնվելու, ոտ շնչելու: Անհրաժեշտ է դասամիջոցը երկարացնել: Կարծը թող տսի տասը րոպե, երկար՝ 20-30: Կարելի է նաև դասացուցակը փոխել: Մի դասը հեշտ լինի, մի դասը դժվար, կարելի է երկու դժվար դաս դնել իրար հետևից, բայց միայն երկու, ոչ ավել: Իսկ եթե համկարծ որոշվի շաբաթական վեց օր դարձող գնալ, ուրեմն, հավատացնում եմ. դա կինդի դաժանության գագաթնակետը: Մեկ օր հանգստի և տնայինների համար ուղարկի անկարելի կինդի: Այն է տարվա ընթացքում լինում է, որ պարտավորված ենք շաբաթ օրերին դասի գնալու: Բայց չէ՝ որ շաբաթ դասի գնում դպրոցի աշակերտների 20%-ը, այն էլ 3-րդ կամ 4-րդ ժամերից դասից փախչում է: Ստացվում է՝ շաբաթ օրը մենք գալիս ենք դպրոց դասերի ժամերը չկորցնելու համար: Մեզ տրվում է մեկ օր հանգիստ, ուրեմն, թողեք այդ մի օրը հանգիստ խղճով ուրախանանք, առանց շաբաթ օրվա մասին մտածելու: Ու ընդհանրապես, կարելի է փոխել դպրոցների այդ տաղտկալի, երբեմն նոյնինսկ վախենալու տեսքը: Վերջերս հաղորդում էի դիտում տարբեր երկրների լավագույն դպրոցների մասին: Օրինակ, մի երկրում սեղանները ոչ թե շարքերով էին դասավորված, այլ շրջանաձև: Իսկ մի այլ տեղ դասարաններում ոչ թե սովորում էին տարեկիցներ, այլ տարբեր տարիքի երեխաներ, որոնք ունեն նոյն մստածելակերպ, հետաքրքրությունները: Կային նաև գունավոր պատեր ունեցող դպրոցներ, որոնք կահույք չունեին, դասարաններ, որոնք չունեին միջանցքից բաժանող պատեր, դպրոցներ, որտեղ գնահատականներ չեն նշանակում: Այսինքն, փորձում են աշակերտների կյանքը ավելի ուրախ, գունավոր, հետաքրքրի դարձնել: Եթե հնարավոր չէ այսպիսի փոփոխություններ մտցնել մեր դպրոցներում, ուրեմն գոնե թող շուտ-շուտ կազմակերպվեն միջոցառումներ, համերգներ, մրցույթներ: Բայց ոչ թե սովետական հնադարյան երաժշտությամբ, հագուստներով ու սցենարով, այլ ժամանակակից, մեզ հասկանալի: Իհարկե, այդ ամենը կազմակերպելը խլում է շատ ժամանակ, բայց հենց դրա շնորհիվ է, որ աշակերտները իրար հետ են ծանոթանում, շփվում: Բայց փորձերը դասից հետո ամել, բացառվում է: Պետք է ամել դասերի

ընթացքում, իսկ հետո, ովքեր ուզում են նաև դասերից հետ չմնալ, շաբաթ օրը, կամ դասերից հետո կարող են պարապել: Ուսուցչուհիները հուսամ կիամաձայնվեն, քանի որ անընդհատ կրկնում են:

-Եթե չեք հասկացել, ասե՛ք, նորից կրացատրեմ:

Այսինքն, նրանք պետք է նոյն դասը բացատրեն դասերից հետո և ավելի քիչ թվով աշակերտների: Հետո էլ համերգին թող բոլոր ուսուցչուհիները լինեն, որ չըողոքեն, թե իմ դասերին չեն նստում, գնում են փորձերի:

Նայելով համարներին, նրանք կիամաձանան, որ իրենց աշակերտները տարանդապիր են:

Կարծ ասած, խնդրում եմ, սիրելի ուսուցչներ և մարդիկ, ովքեր այսպիս ասած, «վերներից են», իշեք, որ մենք չենք ուզում «դպրոց» ասելով հասկանալ քննություններ, դասեր, մինչև գիշեր տնային անել ու առավոտը շուտ արթնանալ: Մի ստիպեք սեպտեմբերի մենք կոչել «Հետ դեպի դժոխք»: Եղեք ավելի բարեհոգի մեր հանդեպ, չէ՝ որ դուք էլ եք եղել մեր տարիքին, դուք էլ եք ցանկացել, որ դասերը քիչ լինեն: Վերջիվերջո, երբեմն լսեք մեր կարծիքը: Այն հաստատ ոչ մեկին չի վնասի, և լսելով դրանք, փորձեք ի կատար ածել:

### Գոհար Կարախանյան



Լուսամկարը՝ Տաթևիկ Յարությունյանի



## Արկածի հետևից

Ամունք, երբ գնացել էինք Դիլիջան, մի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ: Մեր Դիլիջանում գտնվելու վերջին գիշերն էր, երբ մորաքրոջս և մորեղբայրներիս հետ որոշեցինք գնալ զբունելու. կամ սարից իշխել ներքն կամ բարձրանալ վերև, որտեղ գտնվում էր գերեզմանոցը: Մենք որոշեցինք բարձրանալ վերև, մտածելով, որ այնտեղ օդը ավելի թարմ կիմի: Մինչև բարձրացանք վերև, մթնեց: Մենք սկսեցինք վախենալ և փորձեցինք գերեզմաններից ավելի հեռու մնալ: Հանկարծ ձայներ լսվեցին: Վախեցանք, քայլ պարզվեց, որ մեզնից բացի այնտեղ էին մարդիկ կային: Սկսեց անձրև գալ, և գնալով ուժեղանում էր: Կայծակն այնքան ուժեղ էր, որ լուսավորում էր շրջակայքը: Որոշեցինք վերադառնալ: Դժվարությամբ հաջողվեց, քանի որ մուր էր, և մենք չէինք տեսնում ճանապարհը, որով քայլում էինք: Իշնելիս անձրևը վերածվեց կարկուտի: Գերեզմանոցից սկսեցին ձայներ, որ մեր հետևից գալիս էին շներ: Մենք փորձեցինք ավելի արագ քայլել: Երբ հասանք տուն, պարզվեց, որ պապիկը տնից գնացել է, և ոչ որ չփառեր, թե ուր է գնացել: Իսկ մենք բանալի չունեինք: Պապիկին գտնելուց հետո արդեն ամբողջովին թրջված եկանք տուն: Երբ մտանք տուն, լոյսերն անջատվեցին: Մորեղբայրս,

ով շատ էր սիրում սարսափ-ֆիլմեր նայել, փորձում էր վախեցնել մեզ, և դա նրան հաջողվեց:

Այդ օրը լոյսերն այդպես էլ չտվեցին, և քանի որ մորաքրոյսը մրսել էր, հաջորդ օրն արթնացավ տաքությամբ:

Հաջորդ օրերին մենք հիվանդ էինք խնամում ու զղում, որ ներքն իշնելու փոխարեն վերև բարձրացանք:

### Սարինա Աբրահամյան, 14տ.

## Տարօրինակ հեռախոսագրուց

Երեկ ես և ընկերուիս որոշել էինք մեր պատրաստած բաց դասի համար պարապել: Ես դասերից հետո ծաշեցի և զանգահարեցի ընկերուիս:

Հեռախոսը զբաղված էր, և ես մտածեցի, որ ինչպես միշտ մենք իրար միաժամանակ ենք զանգահարել: Փորձեցի նորից հավաքել և...

-Այլ:

-Այլ, բարև Կալերիա', - ուրախացած ասացի ես:

-Բայիկս, ո՞ւմ ես ուզում, - լսեցի ընկերուիս ձայնի նման ձայն:

-Լավ, Կալերիա', կատակ մի արա:

-Բայիկս, ո՞ւմ ես ուզում, -կրկնեց ձայնը:

-Լսի, ես իհմա կգամ ձեր շենքի մոտ, դու իշի, որ գնանք գրախանութ' մի հատ «պապկա» առնենք ու տեսր՝ «Պապկան» գիտե՞ս ինչի համար:

-Ինչի:

-Աշխարհագրության, ուզո՞ւմ ես դու է կառնես, - առաջարկեցի ես:

-Ի՞նչ աշխարհագրություն, - լսեցի ընկերուիս սիրած կատակներից մեկը:

-Դե աշխարհագրության համար:

-Բայց ինչի:

-Դե, որ հասարակագիտությունից ունենք: Ուժեղատների համար, - ձայնս մի փոքր ավելի բարձրացնելով ասացի ես:

-Բայիկս, ո՞ւմ ես ուզում...

-Վա՛յ... Տեսր էլ պարսկերենի համար:

-Ի՞նչ Պարսկաստան:

-Դե, որ պարսկերը ծախից աջ են գրում: Նայեմ՝ երկողմանի տեսր կա՞:

Հետո կգամ, կպարապենք:

-Բայիկս, ո՞ւմ ես ուզում, - լսվեց նոյն ձայնը, և միան այս անգամ հասկացա, որ ավելի նման է տատիկի ձայնի:

Մի պահ ձայն չհանեցի, հետո ասացի:

-Վա՛յ... Կներեք...

Եվ դրեցի լսափողը: Հենց այդ ժամանակ մտածեցի, թե ինչ կմտածեի ես, եթե լինեի այդ տատիկի փոխարեն:

### Լիլիթ Վարդանյան, 13տ.

## Փիսիկը

Տուն մտնելուն պես քոյս ասաց.

- Սուս, սիրու քաղցր բան ա ուզում, զնա խանութ, ինձ «Բառնտի» առ, քեզ էլ մի բան կառնես:

Ես համաձայնեցի և գնացի: Երբ բակում էի, լսում էի տարօրինակ ձայն, սակայն շուրջբոլորս նայեցի, չկար ոչինչ: Կերադանալուց էլի նոյն ձայները լսեցի: Գնացի դեպի վերելակը, քանի որ այնտեղից էր գալիս: Եվ այ քեզ բան: Երկի հագիւ



մի շարաթական կատու էր ծծվում: Հավանաբար մայրիկին էր կորցրել: Մեղքս Եկավ: Ամբողջ մարմնով դողրում էր, մի աչքը դեռ չէր բացվել և չէր կարողանում ուղիղ քայլել: Զանգեցի մայրիկին, նա ասաց, որ տուն բերեմ կատվին: Քանի որ մութ էր և ցուրտ, որոշեցինք, որ կատվիկը կմնա մեր տանը: Կատվին կերակրելու համար մայրիկս կաթը եռացրեց, ամանի մեջ լցրեց, սակայն նա չկերավ: Մայրիկին հաջողվեց ներարկիչով կերակրել կատվիկին: Նրա համար մի փոքր տեղ սարքեցինք, շորեր դրեցինք, և նա ընեց: Նետաքրքիրն այն է, որ գիշերը ձայն չի հանել, այլ իր համար քնել է: Առավոտյան դասի գնացի: Սակայն իմ մոտքում միայն կատվիկն էր: «Լավ, էս կատվի վերջը հ՞նչ ա լինելու, ո՞ւ ա իր մայրիկը կամ ո՞նց ա հայտնվել այդտեղ»:

**Տուն գնացի:** Տանը մարդ չկար,  
միայն փիսիկն էր: Նա մլավում էր,  
նշանակում է՝ սոված է:

- Եհ, ես ինձ չեմ կարողանում պահել, իմաս էս փիսոյին ի՞նչ անեմ:
  - Լավ է, մայրիկս շուտ եկավ: Նրան կերակրեց, և փիսոն էլի քնեց: Այսպես երկու օր նա մեր տանը մնաց: Իսկ երրորդ օրը մայրիկս նրան դուրս տարավ, ի վերջո կարող էր փիսիկի մայրիկը հայտնվել: Ճետո եկավ առանց փիսիկի: Ես զարմացած հարցրեցի:
  - Ո՞ւր ա փիսոն:
  - Փիսիկի մաման ջգտնվեց, բայց փիսիկին տվեցի դիմացի շենքի հարևանին: Իրենք լավ բակ ունեն, փիսոներ ունեն:
  - Սկզբում չէի համակերպվում այդ մտքի հետ: Մտածում էի՝ լավ չեն պահի: Սակայն խոսելով հարևանի հետ և տեսնելով փիսիկին, հանգստացա: Փառք Աստծո, նա գտնվում է ապահով ձեռքբերում:

## Սուսաննա Միկոյան, 13տ.

462nG

Պարզկա գիշեր, ոչինչ չի երևում,  
ես ու քոյս նստած ենք դեպի տուն  
բարձրացող աստիճանների վրա և,  
լեւով փոքրիկ քրոջ գիշերային լացը,  
խոսում ենք տարրեր թեմաներից: Ես  
բռնել եմ հանքափորի լապտերը, որով  
լուսավորում եմ շուրջը: Յանկարծ  
հարևանի ցանկապատի մոտից  
խշխցոց լսվեց, լույսը գցեցի այդ կողմ,  
խոտերի միջից ինչ-որ բան շարժվեց:

Ես նայեցի քրոջս, քրլյս՝ ինձ: Մենք  
արագ տուն բարձրացանք: Որ քննելուց  
առաջ շատ չվախենանք, որոշեցինք  
մի բանով զբաղվել: Մեր ծեռքն ընկապ  
այգում արդեն ութերորդ տարին  
մնացած գերմանական, նամառուտ  
դեմքով, իմ ափից մի փոքր մեծ  
«Գեշո» անունով տիկնիկը: Եվ մենք  
որոշեցինք այդ Գեշոյին գեղեցկացնել:  
Նա շիկահեր էր, ավելի ծիշտ, նրա  
կենդամը շիկահերի համար էր:  
Չուներ թարթիչներ, բայց ուներ  
կապուտ աչքեր: Մենք որոշեցինք  
Շորաձևության շոսսերի նման նրան  
նկարել «Ալոաց» և «Հետո», բայց  
այդ նկարները ավելի նման էին  
բանտարկյալների նկարներին: Մինչ



ՎԵՐԱԲԵՐՅԱԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ես հարմար հագուստ էի փնտրում,  
քոյրիկս մի տեղից մկրատ գտավ  
ու Գեշոյի համար «չոլկա» կտրեց և  
հավասարեցրեց մազերը: Ձեռքիս  
տակ ընկավ մածունի կափարիչը,  
որը մանուշակագոյն, պինդ կտոր  
էր: Չոյրս կտրեց վզի հատվածը  
և ամրացրեց եզրերը: Ստացվեց  
մի լարի կտոր, որը կարել է ասել,  
գեղեցկացրեց անհոյս Գեշոյին:  
Պետք էր նաև ինչ-որ կերպ ամրացնել  
նաև կերծամը, քանի որ առանց  
կերծամի մեր պատրաստած զգեստով  
նա տղախ նման էր, իսկ ավելի

Վերափոխման ընթացքում մենք լսում  
էինք դարպասի ձայնը, աստիճանների  
ժողողը, բայց երբ պատուհանից  
նայում էինք, ոչ որի չէինք տեսնում։  
Գեշոն արդեն գեղեցկացել էր,  
ժամն էլ ուշ էր։ Քույրս որոշեց գնալ  
իր սենյակ և քնել, բայց երբ նորից  
ճռողոց լսեցի, խնդրեցի նրան մնալ  
ինձ հետ։ Զայները կրկնվեցին, մենք  
արթնացրեցինք մայրիկին։ Իհարկե,  
ինչպես միշտ, այդ ժամանակ ոչ մի  
ձայն չլսվեց։ Մայրիկն  
ասաց, որ դա մեզ է  
թվացել կամ քամուց է։  
Քույրս արդեն վստահ  
էր, որ դրանք այլևս չեն  
կրկնվի և զնաց քնելու։  
Երբ արդեն աչքերս  
փակվում էին, լսեց  
դարպասի փակվելու  
ձայնը, ոտնածայներ։  
Ուզում էի նայել, բայց  
դրսի լոյսերն արդեն  
անջատել էին։ Տան դուռը  
բացվեց, ևս որոշեցի  
քնած ձևանալ։ Կիսաբաց  
աչքով տեսա սենյակ  
մտնող եղրոր։

-Վահա՞զն, վախեցրիր: Եղբայրս ուսե՞րծ թափ տալով պառկեց քնելու, իսկ ես դեռ երկար ժամանակ ինքս ինձ վրա ծիծաղում էի: Առավելույան պարզվեց, որ հարևանի կատուն փախել է և շրջել հարևան տների բակերում: Ես ու քոյսու մտածեցինք, որ այդ կատուն էր անցած գիշեր և խոտերի մեջ, և

Դարպասի մոտ, և աստիճանների վրա:  
Դեսոյ բոլորին ցոյց տվեցինք մեր՝  
արդեն մի թիչ սիրուն Գեշոյին:  
-Բայց հաստառ Գեշոյի հոգին ա եկել,  
Ան, ասում էի, չէ՞, պետք չի մազերը  
կտրել,- կատակով ասում էի ես:  
-Խաղալիքները հոգի չեն ունենում,  
Գոգ: Բայց կասկածում եմ, գիտե՞ս:  
-Գիտե՞ս, ես կ եմ արդեն կասկածում:

## Գոհար Կարախանյան, 14տ.



Լուսանկարը՝ Յոհվակիմ Եղիազարյանի

## Քեզ հետ և առանց քեզ

2015 թվականին Մեծ տասու կդառնար իննուն տարեկան:

-Էղ ն'լ էիք գնացել:

-Կինո, տա՛տ ջան, կինո:

-Տեղով կինո եք, էլի,- ասաց ու փակեց աչքերը: Վերջին օրերն էին:

Լուսիլ տասու էր, իսկական անունը՝

Ուսկեատ: Ծնվել ու մեծացել է

Ախրալա գյուղում: Գյուղը նրա համար աշխարհ էր, աշխարհ՝ գյուղ:

Ծնողներից հետո մենակ մնաց, բայց գյուղը էլի չքողեց: Խնդրեցինք,

համոզեցինք՝ զա քաղաք, մեզ հետ ապրի: Չլսեց, չհամոզվեց.

-Էղ իմ տեղը չի:

Ամրող տարի իր պարտեզում էր:

Այնքան էր գործ անում, որ չէր էլ հասցնում ծանծանալ: Բայց ոչ էլ հոգնում էր. ջահելի պես առողջ էր,

երեխայի պես՝ ժիր: Թթու լավաշներ էր սարդում, տեսակ-տեսակ չըեր

պատրաստում, մուրաքաներ փակում:

Բոլորը, բոլորը մեզ համար: Ամռան այցելում էինք իրեն, ձմռանը ինքն

էր գալիս: Քոյսրերով իր սիրած շոկոլադից էինք պատրաստում,

գալուն պես նվիրում, ինքն էլ տարբեր կոնֆետներ էր մեզ բերում: Աշխարհով

մեկ էինք լինում. Երեք ամիս մեր տանը պիտի մնար:

Առավտյան բոլորից շուտ էր արթնանում: Սանրում էր իր ծերմակ

մազերը ու բաքցնում ծաղկազարդ գլխաշորի մեջ, կապուտ շալը

փարաթում էր մեջքին ու խոշոր ակնոցը դնում կուրացած աչքերին:

Այս ամենը այնքան երկար էր տևում, որ նմանվում էր խորհրդավոր

ծիսակատարության. ինչքան նայեիր, չէիր ձանձրանա:

Սուրճի ժամն էր: Առանց

բացառության ամեն օր խմում էր:

Մաքրում էր անգամ բաժակի հատակի սև մրուրը, թեև գիտեր, որ օգտակար

չէ: Բայց չէր հիվանդանում, նեղեր չէր օգտագործում: Դրանից է, որ այդքան

երկար ապրեց, թեև ինձ ավելի

երկար էր խոստացել: Յիմա գիտեմ, որ խոստումները նրա համար են, որ

չպահվեն:

-Ճարյուր տարի՞՝: Անիծո՞ւմ ես:

Կմեծանաս, կիսականաս, թե ծերությունը ինչ գեշ բան ա:

Ես լրում էի. երևի իսկապես չէի

հասկանում՝ ինչ էր ծերությունը:

-Ե՞ր պիտի ռատ ըլմիմ, գնամ...-, էս խոսքերից հետո պինդ-պինդ գրկում

էի նրան, ու նա չէր տեսնում իմ

թաքուն արցունքները, ոչ մի անգամ չէր տեսնում:

Տասու սիրում էր ինձ ամենաշատը:

Դա գիտեի այնպես, ինչպես իմանում են, որ անձրն է գալու, երբ երկինքն

անաստղ է լինում: Ես իր տղա

թռոմերից մեծի առաջին զավակն էի

ու չորս ծոռներից (այդ ժամանակ)

ամենափոքքը: Նրա համար

հերիաթներ էի կարդում, երբեմն

վերջարանը ինքս էի հնարում, փոխում

ուզած ծնով: Իմ միամիտ տատը լսում

էր ինձ, համրուրում պստիկ ծակատս

ու անգիր ասում:

-Կարդա՞՛, գրի՞՛, իմ ժի՞՛ մանուկ,

Կարդա՞՛, գրի՞՛ տարին բոլոր...

Միշտ հետաքրքրվում էր

գնահատականներովս, հպարտանում իմ լավ սովորելով: Ես իմ բոլոր հինգերը նվիրում էի իրեն: Աշխարհով մեկ էր լինում: Իսկ երբ բախտս բերում էր, և իինգին գումարած էի ստանում (իսկ իմ բախտը հաճախ էր բերում), ինձնից շատ էր ուրախանում:

Հանում էր գրպանի գունավոր թաշկինակը, քարկապը քանդում ու տախս ինձ: Դա եզակի հնարավորություն էր տեսնելու, թե ինչ կար թաշկինակի մեջ. կոճքետներ էին, կոպեկներ, թելեր: Այդպիսի թաշկինակներ բարձի տակ էլ կային. միշտ փակ, միշտ կապված, միշտ նույն տեղում:

Երբ արդեն բավականաչափ մեծ էի, տասու հաճախ էր գրուցում, կիսվում ինձ հետ: Օր չէր լինում, որ չիշեր ու չպատմեր ինձ կամ մյուսներին, թե ինչպես մի անգամ՝ իրեն գյուղ ծանապարհելիս, գրպանում հիսուն դրամ դրեցի:

-Բա ես քո փողը ո՞նց վերցնեմ, հարցրել է:

-Թե չվերցնես, ուրեմն ինձ չես սիրում, մանկական խորամանկությամբ պատասխանել եմ ես: Յետո թափահարել եմ ձեռքս, իրածեցի տվել այնքան ժամանակ, մինչև ավտորուսը շարժվել է ու հեռացել տեսադաշտից: Այս դեպքը ավելի շատ հիշում եմ իր պատմելով: Գիտեմ, որ իրական է, որ հնարած չէ ոչ մի պահը, բայց իհմա այնքան հեռու է թվում, որ...

Վերջին տարիներին էլ գյուղ չէինք տանում: Գիտեմ, որ նեղանում էր, բայց չինք թողնում գնար: Արդեն մեծ էր, մենակ թողնելը վտանգավոր կլիներ:

-Կզա՞՞ գնանք գյուղ, Ախրալա գնանք, իմ թիթի ծառի թութը կուտես: Յիշում ես, չէ՞, ո՞նց էինք թափ տախս:

-Յիշում եմ, տա՛տ ջան, հիշում եմ:

-Կզամ, չէ՞:

-Կզամ, տա՛տ ջան, մի օր ամպայան Ասում են՝ աչքերը փակել ու հանգիստ քնել է: Կարծես սովորական քուն պիտի մտներ: Կարծես առավոտյան պիտի արթնանար էի: Ասում են՝

մենք պիտի երազենք իր պես երկար ապրելու մասին. չորս թռոների յոթ երեխերին տեսնելը խաղ ու պար

չի: Ասում են՝ ինչ լինում է, թող ժամանակին լինի... Չէ՛: Ժամանակակին թե անժամանակ՝ տարբերություն չկա: Կորուստը կորուստ է: Տառապանքը տառապանք: Կորցնում ես, ուրեմն, պիտի տառապանք:

Ուրիշ ժամանակարի չկա:

**Միլենա Խաչիկյան**

# Իմ ոգեշնչման աղբյուրն իմ ուսուցիչն էր

Դաշնամուրը ինձ համար  
ամենակարևոր երաժշտական  
գործիքն էր: Երբ սովորում էի  
առաջին դասարանում, ստիպեցի  
ծնողներիս ինձ տանել երաժշտական  
դպրոց՝ դաշնամուրի դասերի: Իսկ  
նրանք ինձ ասում էին, որ դեռ շուտ  
է: Ես չի համբերում, ուզում էի օր  
առաջ ոտք դնել երաժշտական  
դպրոց: Երկրորդ դասարանում ես  
ընդունվեցի երաժշտական դպրոց:  
Դաշտում էի մեծ հաճույքով:

Երրորդ դասարանում, երբ դասերս  
շատացան, սկսեցի դժգոհել, որ չեմ  
հասցնում: Ու մեկ-մեկ էլ զջում էի,  
որ երաժշտական դպրոց եմ գնում:  
Ծնողներս ինձ համոզում էին, որ  
սկսած գործը կիսատ չեն թողնում:  
Երաժշտական դպրոցի իհնգերորդ  
դասարանում տնօրենը՝ պարոն  
Բալյոյանը, կազմակերպեց մրցույթ-  
վիկոնտինա, որին մասնակցում էին  
մարզի երաժշտական դպրոցների  
լավագույն սաները: Մասնակցեցի նաև  
ես: Վիկոնտինային պատրաստվելու  
ժամանակ սկսեցի ավելի մոտիկից  
շփվել պարոն Բալյոյանի հետ: Նա  
հիմանայի երաժշտ էր և շատ լավ  
ծայր ուներ: Երբ նա երգում էր, բոլորը  
հիացած նրան էին լսում: Նա նաև  
մեծ հումորի զգացում ուներ, և մեր  
պարապմունքները շատ ուրախ էին  
անցնում:

Մրցույթում հաղթեց մեր  
երաժշտական դպրոցը: Պարոն  
Բալյոյանը հպարտ էր մեզանով:  
Ես էլ սկսեցի ավելի հաճույքով  
հաճախել երաժշտական դպրոց:  
Մեծ սիրով էի սովորում, նվազում  
էի բարդ դասեր և պարոն Բալյոյանի  
և ուսուցիչների համաձայնությամբ  
հինգերորդ դասարանից անցա  
յոթերորդ դասարան: Իմ դասերին  
հաճախ էր ներկա լինում պարոն  
Բալյոյանը, օգտակար խորհուրդներ  
էր տալիս, ստիպում էր, որ ես ավելի  
շատ աշխատեմ: Իսկ հերթական  
մրցույթ-վիկոնտինային կրկին հաղթեց  
մեր երաժշտական դպրոցը: Պարոն  
Բալյոյանը մղում էր բոլորիս զգալ  
երաժշտությունը, ապրել դրանով,  
ոգեշնչվել...

Եկան ավարտական քննությունները:  
Դաշող համձնեցի սովորիոյի և  
երաժշտական գրականության

քննությունները: Մասնագիտական  
քննությանը ես նվազում էի  
հնքնամոռաց, զգում և ապրում էի  
երաժշտությունը: Հերթով նվագեցի  
բոլոր իինգ դասերս: Երբ ուշքի  
եկա, տեսա, որ բոլոր ուսուցիչները  
ծափահարում են: Հետո սկսեցին  
հերթով մոտենալ և համբուրել ինձ,  
շնորհավորում էին, մեծ բարձունքներ  
մարդում: Երբ ուզում էի դրւու զալ  
դաիլիճից, պարոն Բալյոյանը ասաց.  
-Սպասիր, որ այսքանով չես  
ավարտում երաժշտական դպրոցը:  
Մի պահ վախեցա, մտածեցի, որ  
շատ վատ եմ նվագել: Բայց պարոն  
Բալյոյանը շարունակեց.  
-Երաժշտական դպրոցը իմ  
հովանավորությամբ թեզ է ընձեռում  
մի բացառիկ հնարավորություն՝  
շարունակել կրթությունը  
երաժշտական դպրոցում անվճար,  
հաճախել միայն մասնագիտական  
դասերին:  
Օգոստոս ամիսն էր: Ինձ էր զանգել  
պարոն Բալյոյանը, հարցնում էր, թե  
ինչպես եմ հանգստացել, արդյո՞ք  
չեմ փոխել լորջումս: Իմ դրական  
պատասխանից հետո նա ասաց, որ  
կիանդիպենք երաժշտական դպրոցում  
սեպտեմբերին:  
Այդ ժամանակ ես չի ել կասկածում,  
որ ընկեր Բալյոյանի հետ խոսում  
եմ վերջին անգամ: Երբ գնացի  
երաժշտական դպրոց, բոլոր  
ուսուցիչներն ինձ լավ դիմավորեցին,  
չկար միայն պարոն Բալյոյանը: Ինձ  
ասացին, որ նա շատ լորջ հիվանդ է:  
Ես շատ տիրեցի ու մի չարաքասովի  
օր առավոտյան իմացա, որ պարոն  
Բալյոյանը մահացել է: Մի պահ

աչքերիս առաջ երևացին այն յոթ  
տարիները, որոնք ես անցկացրել  
եմ երաժշտական դպրոցում՝ պարոն  
Բալյոյանի հետ: Այլև չփիմացա, դուրս  
եկա դասարանից, չգիտեի՝ ուր եմ  
զնում, քայլում էի միջանցքում լուր, չի  
լսում ինչ են ինձ ասում, ինչ են ինձնից  
հարցում ուսուցիչները: Երբ ուշքի  
եկա՝ հասել էի երաժշտական դպրոց:  
Դպրոցը փակ էր...

Դավաքվեցինք աշակերտներով և  
զնացինք երաժշտական դպրոց՝  
վերջին հրաժեշտը տայլու մեր սիրելի  
ուսուցչին: Դպրոցում հնչում էին  
պարոն Բալյոյանի կատարումները,  
այն երգերը, որոնք նա սիրով էր  
կատարում: Բոլորը սգում էին մեծ  
երաժշտի մահը: Նրա մահը մեծ  
կորուս էր ոչ միայն երաժշտական  
դպրոցի, Եղեգնաձորի, Վայոց ձորի  
համար, այլ նաև ինձ համար:  
Դիմա ամեն անգամ երաժշտական  
դպրոց հաճախելիս զգում եմ, որ  
այն մի տեսակ դատարկ է, անսվոր  
առանց պարոն Բալյոյանի, առանց  
մեծ երաժշտի: Դեմք նա իմ մեծ  
արթնացրեց մեծ սերը դեպի  
երաժշտությունը, հենց նա ստիպեց  
զգալ և ապրել երաժշտությունը, հենց  
նա էր իմ ուսուցիչը՝ իմ ոգեշնչման  
առյուղը: Դիմա հասկանում եմ, որ  
իմանդրության հետ պայքարի մեջ  
անգամ պարոն Ֆիլիպ Բալյոյանը  
չէր մոռացել ինձ: Թերևս նա ուզում  
էր, որ ես գնամ այն ճանապարհով,  
որը ժամանակին ինքն էր ընտրել իր  
համար...

**Էրիկ Ալեքսանյան  
ք. Եղեգնաձոր**



Լուսամկարը՝ Միլենա Խաչիկյանի



## Արտագաղթը փոխեց իմ կյանքը

Գիտե՞ք ինչ է արտագաղթը: Ինձ համար՝ հորս տարին ընդամենը 2 անգամ տեսնելու է, երբ հորեղբայրներս իրար չեն տեսել 20 տարուց ավելի, երբ 2 երբոր երեխաներ չեն ճանաչում իրար այն պարզ պատճառով, որ իրար երբեք չեն տեսել: Կյանքն այնպես է դասավորվել, որ շատ ընտանիքներ ցրվել են աշխարհով մեկ: Մեր ընտանիքն էլ բացառություն չի: Եվ հիմա ես առնչվում եմ արտագաղթին, որպես առօրյա երևոյթի:

Ապրում եմ՝ հաշտվելով այն փաստի հետ, որ հայրս կգա տարին մի քանի անգամ և մի քանի օրով ընդամենը: Ապրում եմ՝ ատելով արտագաղթը, և միաժամանակ գիտակցելով, որ կախված եմ դրանից: Կարիքն է ստիպում...

Արդյո՞ք արտագաղթը փոխեց իմ կյանքը: Յա: Այնքանով, որ արտագաղթը իմ կյանքն է: Երբ ամեն պահ սպասման մեջ ես, կարոտում, մտածում ես հեռվում գտնվող հարազատի մասին: Երբ մտածում ես, թե երբ դոնից ներս կմտնի հայրը ու կասի:

-Ես եկա վերջնական:

Բայց գիտակցելով, որ դա այնքան էլ հեշտ չի, մեր հոգում պահում ենք թեկուց ոչ այնքան «օրինակելի», բայց գոնե միշտարող այն երազանքը, որ մի օր հայրդ կասի:

-Յավաքվե՞ք, բոլորս գնում ենք:

**Գնացին:** Շատերն են գնում, ու դեռ շատերն էլ կգնան: Գնում են՝ ժանգոտ կողաքերներ կախելով իրենց դրմերից: Գնում են՝ իրենց ստելով, թե մի օր կվերադառնան:

Չեմ դուրս գալու երկրից: Գուցե գյուղից, բայց երկրից հաստատ ոչ: Չէ որ լքելով երկիրս, ես ասում եմ այս արտագաղթին:

Կփորձեմ մի քիչ էլ ես փոխեմ արտագաղթը:

## Ապրել ազատ

Գիտե՞ք, աշխարհում ամենաշատը ինչն եմ սիրում. մարդկանց: Յա, սիրում եմ բոլորին, «վատ» թե «լավ», դա կարևոր չի: Զնայած, ո՞նց կարևոր չի. Փատն ու լավը պիտակներ են: Ինձ համար մարդը լինում է երկու տիպի՝ ազատ ու կախված: Կախված՝ առաջին հերթին կարծիքից, իսկ ազատ՝ մտքով:

Մտքից ուժեղ բան կա՞: Չէ: Երբ մարդիկ փակում են իրենց կրաքերը, աչքերի առաջ մինում է:

Բայց ես սիրում եմ տեսնել այ, էղ մութը: Տեսե՞ք իի, էղ մութը: Յա: Էղ մութը թերթ ա, միտքը՝ գրիչ, ու երբ ես փակում եմ աչքերս, նայում եմ, թե ինչ կնկարի միտքս այդ մթության մեջ:

Մարդկանց կարծիքներից կախվելը ինձ համար նոյնն ա, թե մի թոկ կապես վգիցդ ու ծայրը զցես գետնին, որտեղ ամեն գնացող եկողը էղ պարանը քաշում ա մի կողմ: Յիմա կասեք՝ մեծ-մեծ ա խոսում: Զգիտեմ՝

մեծ-մեծ եմ խոսում թե չէ: Մենք մեր կյանքը դարձնում ենք սև սպիտակ, ոնց-որ շախմատի տախտակը: Բայց մենք կարող ենք էղ սև սպիտակ դաշտերի մեջտեղում թաքնված գունավոր դաշտեր գտնել ու ապրել գունավոր կյանքով:

Գիտեք, մի հրաշալի ոռք-խոսք կա՝ AC/DC ու մի ֆանտաստիկ երգ ունի՝ Highway to hell: Էղ երգի առաջին բառերն ասում են՝ livin easy, lovin free-կյանքը հեշտ է, սերն՝ անվճար: Յիմա էղ իմ կարգախոսն ա դարձել: Գիտե՞ք երբանից: Երբ սկսեցի ԱՊՐԵԼ ԱԶԱՏ:

## Բարև

Զգիտեմ՝ «խասայաթ» ա դարձել մոտս թե չէ, բայց ամեն ծանոթ-անծանոթ մարդու բարևն եմ տալիս: Շատ էլ լավ «խասայաթ» է: Բայց բարև տալը առանձին ծես ա՝ կախված մարդուց: Բարև տալուց առաջ էլ միշտ նայում եմ մարդու դեմքին, բռնում եմ հայացքն ու վերծանում նրա դեմքի «միմիկայով արձակած ալիքները» ու միայն հետո, ընրոնելով նրա հայացքը, ասում եմ՝ բարև, բարև ծեզ, բարլուս կամ եթե վիճակն այնքան էլ լավ չի, պարզապես գլխով եմ անում: Բայց երբեք չի եղել ու չի լինի այնպես, որ նայեմ մարդու դեմքին ու չբարևեմ: Իսկ եթե լինում էլ է, որ չեմ բարևում, ապա դա անում եմ դիտմամբ, որպեսզի նա վիրավորվի, բայց ոչ մեկը չի նկատում ու չի վիրավորվում: Այդ դեպքում ինձ համար նա էլ մարդ չէ: Այդ դեպքում ես նրան ուղղակի չեմ նկատում, ոչ թե չնկատելու եմ տալիս: Բայց էստեղ մի բայց էլ կա: Եթե ես բարևում եմ մեկին, ու նա, նա, նկատելով, որ բարևում եմ, չի պատասխանում բարևիս, ես ուղղակի պատրաստ եմ նրան սպանել: Մի ամգամ դասարանում նման դեպք եղավ ու պարտվեց նրանով, որ ես ու ընկերս իրար ծեծեցինք արյունլիվկ լինելու չափ:

Ուրեմն, էս նյութը կարդացողներ, ինձ տեսնելուց բարևեք անպայման, թե չէ երբ չեն պատասխանում բարևիս, աչքերիս առաջ ուղղակի մթնում է:

Յ. Գ. Ամեն առավոտ արթնանալիս ծեր ընտանիքի անդամներին բարևեք. Ախր, շատ լավ բան ա բարև:

**Վահե Ստեփանյան,  
Կայոց ծոր, գ. Մայիչկա**

## ՄԵՐ ՎԻՌԵՐԻԿ ԽՐԱՄԱՏՐ

Լարված ժամանակներ էին սահմանին: Բայց դա մեզ չէր խանգարում, որպեսզի ապրենք մեր բնական կյանքով: Ինչպես բոլոր երեխաները, այնպես էլ ես, գնում էինք դպրոց: Նշեմ նաև, որ մեզ չէին պարտադրում կրակոցից հետո դպրոց գնալ: Գնում էինք, բայց դաս չէինք անում: Խոսում էինք, թե ում տանը ինչքան վնաս է եղել: Կամ ում գիշի վերևով քանի անգամ է անցել փամփուշտը: Այդ բոլորը ծշտելուց և մեր գտած փամփուշտները իրար ցույց տալուց հետո եկա տուն: Տեսա, թե ինչպես է հայրիկս մեր ապաստարանում ինչ-որ փոփոխություններ անում:

Հարցրեցի.

-Պա՛պ, էս ի՞նչ ես անըմ:

Պապաս, թե քա.

-Խրամատ եմ փորձմ: Զարմացա, հարցրեցի՝ ինչի հըմար: Պապաս.

-Որովհետև սկսել են մեծ զենքերով կրակել: Էս խրամատն էլ փորձմ եմ, վեր ձայնային ազդանշաները (որը առաջանում է կրակոցի ժամանակ) չվնասեն օրգանիզմնիդ:

-Պապ, մենք չենք վախըմ, մեզ խրամատ պետքը չի,- ասացի:

Պապաս, թե քա.

-Սկսել են մեծ զենքերով տալ՝ թեմպէ, շիլկա, գրանատամյոտ (նոնականետ), տանկ, դրանցից պետք ա պաշտպանվենք: Էլ էն վախտվա դեշեկան, չորսի ստրելան, կալաշնիկովը կամ սնայպերը չի: Դիմիկվանը մեծ ա: Բայց դու վախես վեչ,- ավելացրեց պապան հանգստացնելով իհած:

Ճիշտն ասած, չէի վախեցել, որովհետև ամեն կրակոցի ժամանակ ականջներս սրած լսում էի, թե որը ինչի կրակոց է և, որ ուղղությամբ գնաց, որպեսզի հաջորդ օրը դպրոցում խոսենք, թե օրինակ, ինչ զենքի շիկացած փամփուշտ էր ընկել Անդրուշ քենիենց խոտի դեզի վրա և վառել ավելի քան 800 տուկ:

Ապրում ենք՝ ամեն օր մեր ռազմական բառապաշարն ու փորձը հարստացնելով:

**Լիա Ավագյան  
գ. Ներքին Կարմիրադրյուր**

## ՉԵՄԱՓԻՈՆԸ. ԱՐՍԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Օլիմպիական չեմափիոնը պատվավոր կոչում է, և մենք հպարտ ենք, որ ունենք չեմափիոն որդի:

Արսեն Գալստյանը ծնվել է Տավուշի մարզի Ներքին Կարմիրադրյուր գյուղում: Յայազգի ծյուղին է, ով հանդես է գալիս Ռուսաստանի հավաքականի կազմում: Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի ժամանակ՝ կիսաեզրափակիչում, հաղթեց մրցակցին և դուրս եկավ եզրափակիչ, որտեղ ևս հաղթանակ տարավ և դարձավ օլիմպիական չեմափիոն: Յամաձայն Արսենի խոսքի՝ ինքը Լոնդոն էր գնացել միայն հաղթանակի համար և հասավ իր նապատակին:

Արսենի ազգականներն ապրում են մեր գյուղում, և նրա հաղթանակները մենք իրենց հետ ենք նշում: Ես ավելի շատ էի ուզում իմանալ մեր չեմափիոնի մասին և հանդիպեցի Արսենի քեռու աղջկամ՝ Շուշանին:

-Ինչպիսի՞ ընտանիք էին, քանի՞ երեխա ունեին, ինչո՞վ էին զրադշում:

-Սովորական գյուղական

ընտանիք էին: Զքաղվում էին հողագործությամբ, - հպարտութեան պատմում է Շուշանը, - հայրը ֆուտբոլով էր զրադշում, իսկ մայրը ուսուցչուի էր: Նրանք երեք երեխա ունեն՝ Տիգրանը, Արսենը, Արմանը: Տիգրանը և Արմանն այժմ ծյուղոյի մարզիչներ են, իսկ Արսենը

ճյուղոյի օլիմպիական չեմափիոն է և շարունակում է սպորտով զբաղվել:

-Ե՞րբ են տեղափոխվել Ռուսաստան:

-1996 թվականին, երբ Արսենը 7 տարեկան էր: Հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ իրետակոծվել էր հայրական տունը՝ ինչպես գյուղի շատ տները: Հրետակոծության պահին գյուղի բնակչները պատսպարվել էին մի շենքի նկուղային հարկում, երբ հրետակոծությունը դադարել էր, և մարդիկ դուրս էին եկել ապաստարանից, տեսել էին, որ շատ տներ ավերակների են վերածվել: Դրանցից մեկն էլ Արսենն ուսուն էր: Արսենի ընտանիքն այլնութանք չուներ: Չղադարող պատերազմը, ավերված օջախը, սոցիալական պայմանները ստիպեցին, որ տեղափոխվեն Ռուսաստան:

-Արսենը քանի՞ տարեկանից է սպորտով զբաղվում:

-9 տարեկանից, այս հաղթանակին հասնելու համար երկար ժամապարհ է անցել:

-Հայերեն խոսո՞ւմ է:

-Ճիշտ է, նա ապրում է օտար երկրում, շփում է օտար լեզվով, սակայն հայերենը չի մոռացել և կարողանում է ազատ խոսել:

-Վերջին անգամ ե՞րբ է այցելել գյուղ:

-2014-ի հոկտեմբերին, հարսանիքից 2 օր հետո:

-Ի՞նչ մասնագիտություն ունի, որտե՞ղ է ապրում:

-Արսենը մասնագիտությամբ իրավաբան է, ապրում է Կրասնոդար քաղաքում:



Հուսանկարը՝ Լուսինե Խորայելյանի

-Նա ուզո՞ւմ է ներկայացնել Հայաստանը օլիմպիական խաղերի ժամանակ:

-Շատ կուգենար Հայաստանը ներկայացնել, բայց երկար տարիներ է, որ ապրում է Ռուսաստանում և այնտեղ հարմարվել է արդեն: Բայց Արսենը երբեք չի մոռանում, որ ինքը Ներքին Կարմիրադրյուրից է: Դաշախ է այցելում գյուղ: Փորձում է իր ուժերի ներածին չափով օգնել հարազատ գյուղին: Վերջերս օրինակ, նրա միջոցներով վերանորոգվեց մեր գյուղի մարզադահլիճը և այժմ կրում է Արսեն Գալստյանի անունը:

Մենք հուսով ենք, որ այս մարզադահլիճում մարզվող երեխաների մեջ էլ կլինեն վաղվա օլիմպիական չեմպիոններ:

### Լուսինե Խրայելյան

## Կաթիլ-կաթիլ մանկությունից

Ամենագեղեցիկ երաժշտությունը, որ լսել եմ կյանքում, անձրևի կաթկթոցն է տանիքի վրա և հատկապես այն ժամանակ, երբ նստած են սարի օդայի (տնակ) լրության մեջ ու ամբողջ էլությամբ սուզվում են դրա մեջ:

Մանուկ ժամանակ հաճախ էի լինում սարում ու մինչև հիմա էլ սիրում եմ այնտեղի կյանքը: Սիրում եմ սարի հանգստությունը, անդորրը, լրությունը ու աղմուկը: Դիշում եմ՝ գրեթե ամեն գիշեր տղաները դրւում էին գալիս օդանիցից ու սկսում հարայիրոցը: Երբ առաջին անգամ ականատես և ունկնդիր եղա դրան, սարսափ զգացի, բայց ինձ բացատրեցին, որ այդպես գայլերին են քշում: Դրանից հետո այդ «ծեսը» նույնիսկ զվարծալի թվաց ինձ:

Սարերում եմ տեսել ամենագեղեցիկ մայրամուտը. այդ ժամանակ եմ տեսել կյանքում ամենամեծ արևը, զգիտեմ՝ պատճառը բարձրությունն էր, թե այն, որ ես էի շատ փոքր:

Սարում են ապրում տատիկս ու պապիկս, և թերևս սա է գլխավոր պատճառը, որ սիրում եմ սարում լինելը: Տատիկս ու պապիկս այնտեղ անսուն են պահում, պապս նաև մեղվարությամբ է զբաղվում: Երբ փոքր էի, մորս հետ գնում էի նրանց մոտ ու շաբաթներով մնում, իսկ միջնեկ եղբայրս՝ Դավիթը, մեզնից մի շաբաթ շուտ էր գնում:

Դիմում տարեկան էի, երբ պատահեց



Լուսինե Խրայելյան

այն դեպքը, որի մասին ուզում եմ պատմել:

Առաջին տարին էր, որ գնացել էի սար: Դավիթը ինձ ու մյուս եղբորս՝ Սարգսին, տարավ սարի «տեսարժան վայրերը» ցույց տալու: Զարկվերը բարձրանալով՝ հասանք մի տեղ, որը սարեցիները կոչում են Արյուծի քար: Վերադարձին Դավիթը մեզ խորհուրդ տվեց վազելով իշնել, որպեսզի շուտ տեղ հասնենք: Ինքը շատ հեշտությամբ վազելով մի րոպեում հասավ տեղ, մենք էլ հետևեցինք նրան: Բայց մի քանի քայլից հետո սկսեցինք գլորվել: Սարգսի բախտը բերեց. Նրան բաժին էր ընկել հարթ ձանապարհ, իսկ ինձ՝ քարքարոտ: Երեսս ամբողջությամբ արյուն էր, և ամբողջ գիշեր չկարողաց քնել: Այդ օրը իր հետքը թողել է երեխս վրա. Ինքին վերևում նշանավում է մի փոքրիկ սպի: Չնայած ցավուտ էր, բայց իմաստ, երբ հիշում եմ, մտածում եմ, որ այդ ցավը փոքրիկ կաթիլներով ավելացնում է մանկության քաղցրությունը:

Աստղիկ Դավարյան  
գ. Գետահովիտ

## Երջանիկ ես այնտեղ, որտեղ ծնվել ես

Դիմա չեմ փորձի համոզել, որ մեր գյուղը բոլորից առանձնահատուկ է, որովհետև յուրաքանչյուր անձնավորություն յուրահատուկ է համարում իր ծննդավայրը:

Ես այնքան բան ունեմ ասելու իմ գյուղի մասին, որոնք առանձնահատկություն եմ համարում: Իմ գյուղը՝ Տավուշի մարզի Ներքին Կարմիրադրյուրը, առանձնահատուկ է ամեն ինչով: Որպես առաջին առանձնահատկություն նշեմ, որ մենք շատ մոտ ենք թշնամուն: Առաջին պահից ձեզ իմ գրածը արտասովոր չթվաց: Երևի կան մարդիկ, ովքեր ասում են. «Հա, ի՞նչ կա որ, համարյա բոլոր գյուղերն էլ սահմանին մոտ են, բոլորի վրա էլ կրակում են»: Ճիշտ է, դա այդպես է, բոլոր գյուղերի վրա էլ կրակում են, բոլորն էլ սահմանամերձ են, բայց ոչ ոք չգիտի, թե ինչ է նշանակում երեկոյան պատրաստվել քնելու և հանկարծ վեր թռչելով, արագ հագնելու, գնալ հարևանի տուն՝ ապահով տեղում գտնվելու համար: Դեռ կրակոցներից շատ բան կարելի է պատմել, բայց կենտրոնանամ ավելի ուրախ բաների վրա:

Մեր գյուղում են ծնվել շատ տաղանդավոր մարդիկ, որոնք այլևս այստեղ չեն ապրում: Գյուղում կա 5 խմբակ՝ ֆուտբոլի, բասկետբոլի, նկարչության, ողբուաշինության: Վերջինս նոր է սկսել գործել: Ամենաերկար ուղին ունի ֆուտբոլը: Ֆուտբոլիստ երեխաները մինչ օրս ունեցել են բազմաթիվ հաղթանակներ, ավելի ծիչտ, չեն ունեցել պարտություն: Ինչ ինչ պատճառներով մեծահասակների խմբակը այլևս չի գործում (15-17 տ.), բայց նրանց փոխարեն պարապում է նոր սերունդը (10-13 տ.), որոնք ի դեպք, նույնական մեծ հաջողությունների

Են հասել: Ուզում եմ նշել, որ գյուղում համարյա բոլորը՝ թե՝ աջիկները, թե՝ տղամերը գտնվում են լավ մարզավիճակում և միշտ պատրաստ են մասնակցելու տարբեր մրցույթների: Նկարչականը և բասկետբոլը նույնպես հետ չեն մնում ֆուտբոլից: Ես նույնպես մեծ հետաքրքրությամբ ու սիրով հաճախում եմ նկարչության և բասկետբոլի: Ուրոտաշինության մասին բան չունեմ ասելու, որովհետև նոր է սկսել գործել, և երեխաները նոր են ծանոթանում ծրագրերին և տեխնիկային: Անցնեմ ամենակարևոր և գեղեցիկ առանձնահատկություններին՝ գյուղի բնությանը և այդ բնության մեջ անցնող լյանքին: Ուրիշների առօրյան գուցե կախված է եղանակից, բայց մեր գյուղում եղանակը չի կարող մարդկանց շեղել ամենօրյա գործերից: Իսկ բնության մասին խոսելն ինձ թվում է, ավելորդ է: Տավշո բնությունը միշտ էլ առանձնացել է իր գրավչությամբ: Տարվա ամեն եղանակի այն առանձնահատուկ գեղեցիկ է: Այստեղ ամեն ինչ գեղեցիկ է յուրովի: Նոյնիսկ կիսախարխուվ տների և չորացած ծառերի համարդությունն է գեղեցիկ ինում: Ահա փորձեցի նկարագրել գյուղին առանձնահատկությունները, բայց կարծում եմ, որ մեծանալուն համընթաց կարողանամ ավելի խորը տեսնել և բացահայտել դրանք:

### Տայյանա Դուկասյան գ. Ներքին Կարմիրառքյուր

## Իմ ընտանիքի պատմությունը

Իմ ընտանիքի պատմությունն սկսվում է Վանի Այգեստան թաղամասից: Սիրում եմ պատմել իմ ընտանիքի պատմությունը, բայց արժե՞ արդյոք խոսել այդ ցավի ու տառապանքի մասին, որ նրանք են ապրել ցեղասպանության տարիներին, և որ արդեն հարյուր տարի է չի մոռացվում ո՞չ ցավը, ո՞չ ողբերգությունը: Եվ այնուամենայնիվ, պատմելով կամ վերիշելով այդ պատմությունները՝ նոյն ցավն եմ զգում, ինչ զգացել եմ առաջին անգամ լսելիս:

Պապիս պապը՝ Խեցոն, գաղթել է Վանից: Խեցոն պապը հայտնի է եղել որպես բարի, ազնիվ և գործունյա մարդ: Մի առավոտ, երբ

տեղացիներից մեկը հայտնում է նրան թուրքերի հարձակման թողքը, նրա ներաշխարհը տակմուվու է լինում: Էլ ինչ էր մնում Խեցոն պապին, եթե ոչ՝ հավաքել ընտանիքը և հեռանալ՝ վերցնելով միայն առաջին անհրաժեշտության իրերը: Ըստանիքը բաղկացած էր վեց հոգուց, ունեցել է երկու տղա, երկու աղջիկ: Ճանապարհին նրանք ականատես են լինում բազմաթիվ վայրագությունների ու ավերածությունների, կրում են բազում զրկանքներ, որոնք մնում են նրանց սրտերում՝ որպես չսայիացած վերքեր: Սկզբում նրանք ապաստան են գտնում Էջմիածնում, իսկ որոշ ժամանակ անց ընտանիքի մի մասը գալիս է Եջևանի Թալա (այժմ՝ Գետահովիտ) գյուղ: Մեր տոհմը սկսվում է Խեցոն պապի կրտսեր որդուց՝ Հարությունից: Երբ նրանք գաղթել են, Հարություն պապը տասնինգ տարեկան է եղել: Այդ ժամանակից ի վեր մեր գյուղում մեզ անվանում են «գաղթական»: Քետագյում Հարութ պապն ամուսնացել է Մարիամ անունով մի որբ աղջկա հետ: Նրանք ունեցել են հինգ զավակ՝ երկու որդի, երեք դուստր:

Հարութ պապի մասին բոլորը խոսում են գովեստով, պատմում են նրա հյուրընկալության, անսահման ազնվության և բարության մասին, որ փոխանցվել է Խեցոն պապից: Ժվում է՝ այդ ամենը տեսնելուց հետո անհնար է վերաբառնալ բնականոն լյանքի, սակայն նա ապացուցում է, որ դեռ կարելի է ապրել: Պապս պատմում է, որ մի օր Հարութ պապը երազում տեսել է Այգեստանը, իր հայրենի տունը, ընկերներին, արթնացել է ու արտասվել: Հարութ պապը երբեք չի փոխել իր բարբառը և միշտ խոսել է Վանի բարբառով: Նա իր տունը կառուցել է գյուղի ծայրին: Եվ ամեն անգամ, երբ տաճ մոտով մի օտարական է անցել, նա ասել է. «Ղարիբ մարդ է, տուն կանչենք, սոված կիմնի»: Նա շատ է սիրել ընթերցանությունը, բոլորը պատմում են, որ նրա ձեռքին միշտ գիրք կար, ինչպես նաև օրաթերթ, որտեղ նա միշտ փնտրում էր Վանի մասին տեղեկություններ: Եվ մինչև իր կյանքի վերջը նա հոյսը չի կորցրել, որ մի օր կվերադառնա Վան, կզնա իր տուն, ավարտին կհասցնի իր հոր՝ Խեցոն պապի կիսատ թողած գործը: Այս էր նրա նվիրական երազանքը:

Իմ ընտանիքի պատմությունը մի

գաղթական հայի պատմություն է՝ աշխարհասփյուր հայի պատմություն: Պապիս պապի հուշերը ինձ տանում հասցնում են մինչև Արևմտյան Հայաստան: Ահա ես այնտեղ եմ՝ Վանում՝ Այգեստան թաղամասում: Հրա՛շը, դրախտավայր... Խեցոն պապը արտ է արել, ցորեն ցանել: -Պա՛պ, այդ ե՛ս եմ՝ քո թռոան թռոք, քո զավակներն ինձ կոչել են Վանուիհ՝ քո կորսված քաղաքի պատվին, քո պատվին, պա՛պ: Ես վերադարձել եմ քո կարոտած էրգիր, եկել եմ, որ շենացնեմ, որ տե՛ր կանգնեմ իոհ ու շրին, որ հնձե՛մ այն արտը, որը դու ես ցանել, որ գտնե՛մ այն կճուծով ուսկին, որ դու ես թատի այգում: Չէ՞ որ այդ աշխատափրությունը փոխանցվել է ինձ, իմ քոյլերին ու եղբայրներին: Դե՛, վե՛ր կաց, պա՛պ, ցու՛յց տուր այն արահետը, որ տանում է դեպի քո երազանքի դուռը: Հայրենասերի քո այդ երազանքը այժմ փոխանցվել է ինձ, այն արդեն իմն է, ողջ հայությանն է... Ես իրականացնելու եմ այդ մեծ հայի սրբազն բաղձանքը, պա՛պ, իմ գերդաստանի՝ նահապետ...

**Վանուիհ Հարությունյան  
գ. Գետահովիտ**



Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի



## Ժապավենի դարաշրջանը Մաս երկրորդ

Մութ սենյակի, լուսազգայուն նյութերի ու ժելատինի էմուլսիայի միջով հասանք նրան, որ հայտնաբերվեց ժապավենը, և ֆոտոն սկսեց զարգանալ, որպես արվեստի մի նոր տեսակ: Յիմա ֆոտոն կախարդական հեքիաթ է թվում, իսկ լուսանկարիչները հրաշագործները: Դուք ինքներդ տեսներվ լուսանկարը երևակելու պրոցեսը ձեզ կախարդանքի կենտրոնում կզգաք, հավատացնում եմ:

Բոլորին սկսեց հետաքրքրել այն, շատերը սկսեցին զբաղվել ֆոտոյով, բայց ոչ բոլորին հաջողվեց ստեղծել ֆոտո, քանի որ ինչպես նշեցի, այն դարձակ արվեստի մի նոր տեսակ, իսկ դա նշանակում է, որ պետք է ունենալ որոշակի տաղանդ: Թվում է, թե լուսանկարելու համար տաղանդ այնքան էլ պետք չէ: Յա, ինչ կա կոճակ սեղմելու մեջ: Իրականում մինչև այդ կոճակը սեղմելը մարդը իր գիտակցության մի որոշակի մակարդակում սկսում է մտովի գծմծել այն պատկերը, որը պետք է ստանա: Այլ խոսքերով, անում է այն, ինչը անում են նկարիչները թղթի վրա, ուղղակի ենթագիտակցության

մեջ (մեր ենթագիտակցության մեջ երևակայական թուղթ և մատիտ կա): Յա, սկզբում դա բարդ է, մանավանդ, երբ դու երբեք ուղիղ գծեր չես կարողացել տանել, և նկարելը քեզ համար սահմանափակվել է ծուռմոտիկ տնակներ և մարդուկներ նկարելով: Բայց ժամանակի ընթացքում



անհաջող գծագրեր անելուց, դրանք նոյնքան անհաջող լուսանկարելուց և քեզ պատեպատ տալուց հետո սկսում ես ինչ-որ պատկերներ ստանալ, ուղիղ անկյունագծեր տանել: Այդ ժամանակ արած լուսանկարը դառնում է քոնը: Ես լուսանկարել սկսել եմ թվային ֆոտոխցիկով, և հիմա ամեն անգամ, երբ ժապավենով եմ նկարում, մեխանիկորեն նայում եմ խցիկի ոհսկիեյին՝ տեսմելու լուսանկարու: Պատկերացրեք ինչ ծիծաղեյի իրավիճակում եմ լինում, մանվանդ,

որ ժապավենով խցիկները դիսկիլեյ չունեն: Իրականում, ժապավենով լուսանկարելիս խորը դեպքեսիայի մեջ ես ընկնում, մինչև տեսնում ես վերջնական երևակված տարբերակը: Մեկ այլ դեպքեսիա է նկարելու գործընթացը, երբ որոշում ես էքսպոզիցիան, կոմպոզիցիան և ֆոկուսը: Բայց փոխարենը, ինչպես ես հրձվում, երբ վերջնական պատկերը քո ուզածով է լինում: Ինչ եմ ուզում ասել: Ժապավենով նկարելիս դու անում ես ամեն ինչ՝ պատկերը պատկերացնելուց մինչև այն տեսանելի դարձնելը: Եվ թվում է, որ լուսանկարչինը ամենահեշտ ձևն է ասելիքը ասելու, քանի որ նկարիչները, քանդակագործները օրերով, ամիսներով են չարչարվում իրենց գործերի վրա, իսկ լուսանկարչին տիեզերքի անձայրածիր ժամանակից միայն մեկ վայրկյանի որոշ մասն է բաժին հասնում: «Արվեստը ստեղծելու միակ պահը՝ դա վայրկյանի 1/25-րդ մասն է, երբ բացվում է փակադակը, խցիկի մեջ լոյս է վառվում, և շարժումը կանգ է առնում»: Սա ասել է Անրի Կարտեն-Բրեսոնը, ում մասին մենք կհասցնենք խոսել և տեսնել վայրկյանի այն ակնթարթները, որոնք օն է ապրել:

Բայց կարծես մենք շեղվեցինք: Յա, ինչ էի ասում: Երբ արդեն ժապավենը հասանելի էր բոլորին, և որոշ անհատներ սկսել էին ֆոտոն ստեղծել, մարդիկ այն բաժանեցին տեսակների, կամ դա ինքնարերաբար ստացվեց, չգիտեմ:

Երբ մեր՝ այսինքն մարդու ձեռքում հայտնվում է տեսախցիկ, մենք նախ և առաջ լուսանկարում ենք գերեցիկ շրջակա միջավայրը՝ այսինքն բնանկարը:

Նոյնիսկ առաջին պահպանված լուսանկարը բնանկար էր, եթե հիշում եք Նեպսի «Տեսարան պատուհանից»-ը: Նետո սկսում ենք նկարել այլ մարդկանց, մեր սիրելիներին, կամ գոնե թե մարդկանց, ում միշոցով ինչ-որ բան ենք ուզում ասել: Դա դիմանկարի հիմնական ասելիքներից մեկն է:

Նետո նկարում ենք մի դետալ, որը երևի թե ինչ-որ բան նշանակում է մեզ համար, արժեքավոր մի բան: Սովորաբար այդ առարկաները անշունչ առարկաներ են, որոնք

կարելի է այլ կերպ անվանել մեռած քնության մի մաս (դա ես չեմ այդպես մտածել): Ֆորանսերեն մեռած քնություն կլինի- Nature morte: Ծանոթ բառ է, չ՞։ Այս, նատյուրմորտ թարգմանաբար նշանակում է՝ մեռած քնություն։

Դետո դուրս ենք գալիս մեր խցիկներով փողոց, նկարում փողոցային անցուղարձը, մարդկանց։ Այդ փողոցային լուսանկարների մեջ միգուցե երևում է այդտեղի տրամադրությունը՝ անվերջ շտապող մարդիկ, բանուկ փողոցներ, մի ծայրում կանգնած գումար հավաքող երաժշտը և այլն։ Չենք միշամտում այդ անցուղարձին, պարզապես նկարում ենք կյանքը ինչպես կա։ Այդ փողոցներից մեկում ինը մեքենաներից ցուցադրություն է։ Շտապում ենք այնտեղ և ընտրում ճիշտ դիտակետը այնպես նկարելու, որ մեր լուսանկարի միջոցով տեղեկացնենք այդ



իրադարձության մասին։ Յենց այդ «տեղեկացնել» բառի հետ է կապված ֆոտոռեպորտաժ-ը, որի հիմքում իջորմացիա փոխանցելն է։ Փողոցի աղմուկից փախչելով մտնում ենք բակերից մեկը։ Բակում երեխաներ են խաղում, մոտենում ենք մի քանի դիմանկար անելու, բայց նրանց մայրենիքը իրենց տուն են կանչում։ Մենք գնում ենք այդ երեխաների ետևից և, հայտնվելով մի մեծ հանրակացարում, այնտեղ նրանց նման հազարավոր երեխաներ ենք տեսնում։ Ինքնաբերաբար ձեռքներս տանում ենք դեպի մեր խցիկը և նկարում այնտեղ ապրող անապահով ընտանիքների կենցաղը։ Նորից ոչ մի



Լուսանկարը՝ Լիլիթ Կարապետյանի

բնմականացում, ոչ մի միշամտություն։ Նկարում ենք այն ամենը, ինչ տեսնում ենք։ Լուսանկարչության այս ձևը կոչվում է **Կավերագրական կամ դրկումնենտալ**։

Յանրակացարանից դուրս գալով շարունակում ենք քայլել, սակայն արդեն մթնել է։ Եթե մենք ապրենենք առաջներում, ապա կարող էինք ուղարկի խցիկը դնել մեր պայսակը, քամի որ դժվար թե ունենայնք այդքան բարձր լուսագգայունությամբ ժապավեններ գիշերային լուսանկարներ։ Ստանալու համար։ Բայց թվային տեխնոլոգիան մեզ թույլ է տալիս նկարել գիշերը այնպիսին, ինչպիսին տեսնում ենք, առանց լորդվածության։ Դե, կարծում եմ կարելի է մի երկու անգամ նկարել լուսավորված կամուրջի ֆոնին արագ սլացող մեքենաները իրենց երկար

անհասկանայի թվացող հետագծերով։ Իրականում ժամները շատ-շատ են, և նրանք պարբերաբար թարմացվում են։

Ես որոշել եմ հետագա համարներում ավելի մանրամասն պատմել յուրաքանչյուր ժամի մասին և գուցե ծանրացնել այդ ժամի ներկայացուցիչներից մի քանիսի ու իրենց գործերի հետ։ Իսկ դուք շարունակեք լուսանկարել և մի հուսահատվեք, եթե դեռ չի ստացվում, քանի որ ինչպես ասում էր Կարտիե-Բրեսոնը. «Ձեր արած առաջին 10.000 լուսանկարները ամենավատն են»։

### Դիանա Շահբազյան



## Լավաշ թխելու ծեսը

Երբ խոսում են լավաշի մասին, միտև է ընկնում, թե ինչպես է հնագույն լավաշ թխում մեր տարբ: Լավաշ թխելը մի հատուկ ծես էր: Երկու օր առաջ

զցում էր թոնրի մեջ և սկսում երգել: Հա, անպայման նշեմ, որ մինչև յոթ հացը չլուսար, չէինք կարող ուտել: -Տատիկ, ինչո՞ւ հենց յոթը: -Վեսկավերի հացն է: -Էտ ի՞նչ ա, տատի:



պետք է տատիկս մաքրեր թոնրի տունը, ինտո պետք է տեղյակ պահեվը օգնողներին, ովեր պետք է հացը «Ետ անեին և պուլեին» (գնդեին ու գրտնակեին), և ամենապատվավոր մարդը, որ պետք է ներկա լիներ, հացթուխն էր:

Հաց թխելու առավոտը սկսում էր ժամը 4-ին: Տատիկս արթնանում էր և սկսում խմորը հունցել:

-Սոսե,- ընդհատեց ինձ տատիկս.  
- Մենք իրիցուն էինք հունցում. Ես, Վայսան ու Ափիան, խմորը ծածկըն ինք, մնում էր մինչև ժամը 4-ը: 4-ին թոնիրը վառըն ինք, պուլում ու արագ սկսըն ինք թխել:

-Բա ինչո՞ւ էիք այդքան շուտ անում խմորը, մեկ ա, արագ գախսի է:

- Ե, այ բալամ, էս վախտը թթխմոր չկար, մենք «խաչով» էինք անում:

-Իսկ «խաչն» ի՞նչ է:

-«Խաչը» էտ իհն հացից վերցրած խմորն էր, որ թթվել էր:

Ինձ ու քրոջս համար մեծ ուրախություն էր, որովհետև մենք էլ գործ ունեինք անելու: Պետք է պուերը կրեինք, բայց Աստված չանի, թե համկարծ մի պուլը կոխ տայինք: Հա, մոռացա պատմեմ, թե ինչպես էր գալիս հացթուխն Լատր տատիկը: Երբ նա գալիս էր, առաջին բացած պուլը

-Տղամարդիկ քինըմ են, առավոտը շուտ եզմերը լծըմ են, վեր վարեն հողը, և էս կոչվըմ ա «Վեսկավեր»: Վեսկավերի հացը պիտի դզվի, վեր արդեն ուրիշները ուտեն:

Սիա-, հասկացա, թե ինչու: Հիշում եմ նաև, որ Լատր տատիկը պատմում էր իր սկեսրայիր՝ Գոգոլ դայու արկածները: Գոգոլը մեր օյուղի

ամենահումորով մարդն էր, որ կես դար է, ինչ մահացել է, բայց ամեն օր հիշվում է: Օգնողները մենք ասում էր.

-Լատր, մի պատմի, թե հունց էս Գոգոլ դայուն ասալ Յաջոցըմը Այնարի պարկարու մասին:

Ու Լատր տատիկը սկսում էր, և այդպես չէինք զգում, թե ինչպես օրը ավարտվեց: Օրը ավարտվելուց հետո նորից սկսում էր մի ուրիշ աշխատանք. պետք է ամբողջ փողոցին նոր թխված լավաշ հացնեինք: Իսկ իհն կմնար, արդեն փոռում էինք մեր բակում, որպեսզի չորանար:

Ցավոք, այսօր մենք չենք տեսնի այդպիսի բան:

Հա~, մոռացա նշեմ, Գոգոլ դայու մասին կպատմեմ հաջորդ անգամ:

**Սոսե Զաքարյան  
գ. Դարբաս**

## Պապս

Փոքր հասակից պապիկս հետ շատ մտերիմ էի, նրա անունը Սուրեն էր: Հիշում եմ, միշտ գումար էր տախս. -Քինա խանութ, պապիրոս առ, որ փող մնա, քեզ միար կանֆետ կառնես, -ասում էր նա:

Երբ մայրիկս ինձ վրա բարկանում էր, նա ինձ միշտ պաշտպանում էր:

Պապիկս հիվանդ էր, դժվար էր քայլում, միշտ նստած էր բազմոցին: Մենք մի փոքրիկ կատու ունեինք, նա գալիս էր ու նստում պապիկս ծնկներին: Յարցնում էի.

-Պապիկ, կատուն խի՞ա միշտ նստում ծնկներիդ:

-Բալաս, կատուն հիվանդ մարդկանց մոտ ա քինում, ես այ հիվանդ եմ: Հիշում եմ, երբ գնում էինք այզի, նա միշտ ուզում էր մեզ հետ գալ, չնայած չէր կարողանում աշխատել: Տատիկս պատմում է.

-Պապիկիդ նետս երգան աշխատալ ենք, կոլխոզումն ենք աշխատալ, հող ենք մշակալ, արտ ենք ցանալ, արտ ենք վարալ: Շատ ա աշխատալ պապիդ, շատ դժվարություններ ա տեսալ: Պապիդ շոփեր ա իլալ, համ ալ շատ բարի մարդ ա իլալ: Գեղմը հով շենք ա շինալ, պապիդ օգնալ ա: Յյուրասեր ա իլալ, միշտ դրսից դրսալ ա պիրալ մեր տոն, ասալ ա՝ միշտ դոնադին հաց կտան, տեղ կտան: Պապիդ թորք ծանրեմներ ուներ:

Կյախս էին մեր կեղացի Սաքոյանց տոն, պապիկիդ տեսնըմ են, հարցնըմ են՝ «Սաքոն հունց ա՝»: Ասում ա՝ Սաքոն մեռալ ա: Էս թորքերը վեր են կենում, վեր քինան Սաքոյանց տոն, տեսնըմ են Սաքոն հենա պահեստի մոտ կանգնած, սկսըմ են ծիծաղելը: Ասըմ են. «Մենք գիտեինք, թե Սաքոն մեռալ ա»: Սաքոն էլ ասըմա. «Էտ հաստատ Սուրենի գործերը կիլի»:

Հինգ տարի է, ինչ պապիկս մահացել է: Շատ եմ կարոտում նրան, ինձ համար մի տեսակ անսովոր է գալ տոն և տեսնել, որ պապիկս տանը չէ, որ չեմ կարող վազել, գրկել նրան ու ասել. «Պապի, 5 եմ ստացել»: Երբ անցնում էինք Ստեփան Զորյանի «Պապը», ուսուցչուիս ասաց, որ կարդամ դասը, և ես լաց եղա...

Սիշտ հիշում եմ պապիկս, նրա դողդոջուն ծեռքերը, թախծոտ աշքերը և բարի ժախտը: Նա միշտ իմ սրտում կմնա որպես բարի, ազնիվ և հոգատար մարդ:

**Սոնա Զաքարյան**

## Հազար պատմություն մի ընտանիքում

Գալստյանների ընտանիքում ընտանի կենդանիներ պահելը դարձել է արդեն սովորույթ: Տաճը տարբեր կենդանիներ՝ աղավնի, ծագար, բաղ, շուն, կատու, ձկներ պահելը սովորական երևոյթ էր: Մի խոսքով՝ կենդանաբանական այգի: Ամեն ինչ սկսվեց մոտ 20 տարի առաջ՝ գարնանը: Մի օր պապս մի շան ձագ գրկած մտավ տուն: Բնականաբար շուն պահելը այն էլ բնակարանում, այդքան էլ հեշտ չէ: Դե, իհարկե, շանը անուն է պետք: Այդ ժամանակ հեռուստացույցով ընթանում էր բրագիլական սերիալ, որի գլխավոր հերոսուհու անունն էլ դարձավ շան անունը: Շանը կոչեցինք Մարլու: Դե հա՛, ամեն մի սկիզբ ունի նաև վերջ, բայց այս անգամ վերջը մոտեցավ շատ շուտ: Մեկ տարի անց Մալուն հիվանդացավ և սատկեց: Մեծ հանդիսավորությամբ պապս «հուլարկավորություն» արեց: Այնուհետև պապս տուն բերեց բաղ՝ Սիմային: Շուն, կատու, ծովկ լսել էինք, բայց բա՞ղ: Ընտանիքի անդամները դեմ էին, այդ իսկ պատճառով Սիման բնակություն հաստատեց ավտոտնակում: Սիման արդեն սովորել էր իր նոր ընտանիքին: Պապս կանչում էր.

-Սիմա-, բայց լսելով իր անունը, տնօտնգալով մոտ էր գալիս: Մոլոգիկ. այս անունն ասելիս Գալստյանները հիշում են իրենց երկար տարիների ընկերոջը: Օրերից մի օր, մոտ տասնհինգ տարի առաջ, տան առջև մի փոքրիկ փիսիկ էր նստել և մլավում էր: Սկզբում ոչ ոք չէր մտածում, որ կատվին պետք է պահեն տանը: Կերակրեցին, մի քիչ խաղացին հետը, եկավ ժամանակը, որ պետք է հրաժեշտ տան՝ մտավ պապս և ցանկացավ լրացնել «կենդանաբանական այգու» կենդանիների ցուցակը:

Մոլոգիկի գիտով շատ բաներ են ամեցել: Օրինակ, եղբայրս պատուհանից նետել էր նրան, որպեսզի համոզվի, թե կատուները արոյո՞ք յոր կյանք ունեն: Մոլոգիկը ապրեց մեր ընտանիքում և կիսեց մեզ հետ մեր տիսուր և ուրախ օրերը:

Պապս մեզ սովորեցրեց սիրել մեր կրտսեր եղբայրներին՝ կենդանիներին, և հոգ տանել նրանց մասին: Յիմա



Լուսամկարը՝ Մարինա Աբրահամյանի

մենք այլ կերպ չենք պատկերացնում:

### Սաթենիկ Գալստյան

## Նորից այս կատուն

-Մյաու, մյաու:

Նորից այս կատուն:

-Մարիամ, դուռը բաց, Ցուկին եկել ա: Եվ ես պետք է շտապեմ դուռը բացելու: Ցուկին մեր տան կատուն է: Նա կրում է Ֆեյսբուք սոցիալական ցանցի հիմնադրի՝ Մարկ Ցուկերբերգի անունը:

Ես հաճախ նրան անվանում եմ ծերուկ, քանի որ ունի շատ երկար բեղիկներ, չնայած որ դեռ ընդամենը մեկ տարեկան է: Նա շատ հասկացող կենդանի է, և ինձ հաճախ թվում է, թե իր մեջ մարդ է ապրում: Երբ մայրս աշխատանքից տուն է վերադառնում, Ցուկին նրան դիմավորում է: Մոմոռում է և նետվում մայրիկիս գիրկը: Նա շատ զգայուն կենդանի է:

Զգում է, թե իրեն ով է սիրում և ով չի սիրում:

Ցուկին ունի նաև փիսիկ ընկերուիի, անունը՝ Յակի. դրվել է ի պատիվ Ցուկիի, որպեսզի համընկնի նրա անվան հետ (Յակի-Ցուկի): Նրանք միշտ միասին են և միշտ պաշտպանում են իրար:

Ցուկին մեծ սեր է վայելում մեր ընտանիքում:

Բոլորս էլ սիրում ենք նրան, բայց բոլորից շատ նրան սիրում է քոյրս՝ Յոհվիմին: Նա ամեն կերպ դիմում է Ցուկիին՝ սերս, միակս, անկրկնելիս, իմ կյանքի հմաստ և այլն, սակայն Ցուկին բացի մայրիկից ուրիշ ոչ մեկին չի սիրում, իսկ քրոջս սերը մնում է անպատասխան: Քոյրս այնքան է սիրում Ցուկիին, որ նոյնիսկ նրա ծննդյան տարեդարձին տորթ էր զնել: Ամանորին էլ նվեր էր գնել՝ Զմեռ պապիկի գլխարկ, որը միայն մեկ անգամ հայտնվեց նրա գլխին, երբ քնած էր: Միակ բանը, որ նա ընդունում է քրոջս նվերներից, կատվի կերն է:

Յիմա էլ, երբ ես գրում եմ այս նյութը, Ցուկին մակարում է դուռն ետևուում: Երևի ձեզ հրաժեշտ տամ, շտապեմ նրան դիմավորելու:

### Մարիամ Յովիաննիսյան Արարատ



Լուսամկարը՝ Աստղիկ Ավետիսյանի



Վարչություն. Աղեղն Ճառապատճեն

## Մխոն, պահմտոցին ու հողաթափը

-Մխիթար, Գրիգոր, Մանե, Լիլիթ, Արմեն, տյուս Եկե՛ք, հալամոլա Ենք հաղ անում:

Այսպիսի սկիզբ է ունենում մեր գյուղական ամառային արձակուրդը:

Մի օր հավաքվեցինք ու սկսեցինք խաղալ: Բանի որ գրասենյակի բակում թաքնվելու շատ տեղ կա, էնտեղ խաղացինք: Այնտեղ Բլունց տան մոտ թրիքի կույտ կար, որը շուտով պետք է տանեին: Ես Մխիթարը, ինչպես միշտ, հողաթափով էր Եկել: Ես թաքնվել էի, և հենց նա տեսավ ինձ, ես ընկա նրա հետևից: Մխիթարը խառնված վագեց դեպի թրիքը: Վագեց, ոտքը դրեց թրիքի մեջ ու դուրս Եկավ առանց հողաթափի: Սկսեցինք փնտորել:

Զարմանալին այն էր, որ գոյնադրի կույտի մեջ չէր երևում ոչ մի հետք, բայց Մխոնի ոտքը թրիքուտ էր:

-Մխոն, վե՞րո՞ն ես տրել վետո:

-Ասայ, ընդե:

Նայում ենք՝ հողաթափ չկա:

-Մխոն, ստե՞:

-Չե, ընդե:

Ու այսպես մեկ էնտեղ է ցույց տալիս, մեկ՝ էստեղ: Յո չի լացում, իո չի լացում...

Յետոն Եկավ Մխոնի եղբայրը՝ Յայկը:

-Մխոն ջան, դրվսի չգցես, ես կգտնեմ:

Ի՞նչ եք ծիծաղում:

Կողքի տանից դուրս Եկավ Լյուդիկ տոտան.

-Դե վեր ասեմ՝ վեխճար ես, կասես՝

ասեց: Տենում չի՞ր, վեր դաքիտ թրիք կա:

Զարմանալի բան, մի փոքրիկ թրիքի կույտում չկարողացանք մի հողաթափ գտնել:

-Տղեք, սպասեք զնամ կոշիկ հագնեմ զամ, - ասաց Մխիթարը:

-Մխոն, կոշիկ հագի, որ ոտիցդ դուրս չգա:

Մխոն զնաց և արագ վերադարձավ: Մեկ էլ տեսնենք, զնացել ու մի ուրիշ հողաթափի է հագել Եկել:

Դե վեր ասեմ՝ վեխճար ես, կասես՝ ասեց:

**Սևակ Կիրակոսյան  
գ. Վահան**

## Նպատակ, աշխատասիրություն, համառություն

-Աշխատասիրություն, երեխաներ, աշխատասիրություն: Կարևոր չէ, թե դպրոց գալուց առաջ քանի թիվ կամ տար ես իմացել, ոչ էլ կարևոր է տարրական դասարանները գերազանց ավարտելը: Երբեք ուշ չէ սովորելու համար, հիշեք Արթուրին, - միշտ նշում էր քիմիայի ուսուցչուինս և ավելացնում, - հիշում եմ, որ

Արթուրը մինչը 7-րդ, 8-րդ դասարան հազիվ էր կարողանում իր դրական գնահատականը ապահովել և՛ քիմիա, և՛ մաթեմատիկա, և՛ կենսաբանություն առարկաներից: Յետոն նա որոշեց աշխատել: Նա սովորում էր, ստիպում էր ինձ, որպեսզի դասերից հետո մնամ և բացատրեմ այս կամ այն խնդիրը: Ես կարող էի մի խնդիրը նրան 5 անգամ բացատրել, բայց եթե չէր հասկանում, էլի էր պահանջում: Գիտե՞ք վերջում ինչ եղավ... Նա սովորում էր ժշկական համայսարանում՝ անվագը:

Բարեբախտաբար բախտ եմ ունեցել քիչ թե շատ ճանաչել Արթուրին: Նա սովորում էր մորեղորս աղջկա հետ մի դասարանում, և քանի որ նրանք լավ ընկերներ էին, հաճախ առիթ էի ունենում նրան տեսնել քեռուս տանը: Ինձ թվում է, ձեզ էլ հետաքրքրեց այս երիտասարդը: Պատմեմ նրա մասին մի քիչ մանրամասն:

Ինչպես նշեցի, ուսուցիչներս հաճախ էին խոսում Արթուրի մասին: Փոքր հասակում աչքի չի ընկել ուսման մեջ:



Վարչություն. Կապը Ներկայական Հայության մասին

Չգիտեմ, շաբար հիվանդությունը, թե այլ բան ստիպեցին նրան երազել քժշկի մասնափոխության մասին, և ոչ միայն երազել... Նպատակ դնել և հասնել: 12-րդ դասարանում սկսեց լրացուցիչ պարապել քիմիա և կենսաբանություն: Այդ շրջանում էլ քույրս պատմում էր, որ դասարանի համար Արթուրը պատրաստել է էլեկտրական դասացուցակ: Դուք էռությունը նրանում էր, որ ինչ դաս լինում էր, վառվում էր հենց այդ դասի լուսը: Նաև այդ ժամանակ մեր դպրոցում կար ԷՌՕՇ (Էներգետիկ ռեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր) խմբակ, որի շրջանակներում Արթուրը պատրաստել էր փոքրիկ լվացքի մեթոդ, որի արտաքինը ուղղակի աղամանի տուփ էր և ստվարաթղթեր: Փոքրիկ մեքենան նույնիսկ լվացել էր գուլպաներ: Նրան դրա համար մրցանակ էին շնորհել, և հիշում եմ, միշտ հպարտությամբ մտնում էինք ԷՌՕՇ-ի կայք և հպարտանում ժամբարակցի Արթուրով:

Եկան ընդունելության քննությունները, և Արթուրը 1 թե 2 բայի պատճառով գրկվեց անվճարի հնարավորությունից: Այդ տարին նա զօնաց համալսարան: Սկսեց պարապել և վերիիշել իր իմացածը: Հաջորդ տարվա ապրիլ-մայիսին մենք հաճախ էինք նրան տեսնում դպրոցում: Գայիս էր քիմիայի ուսուցչունում մոտ՝ չպարզաբանված խնդիրները ևս մեկ անգամ հասկանալու: Կրկին ոյմում է համալսարան և առավելագույն բայերով ընդունվում անվճար իմացածուներով:

Միշտ զարմանքով և հիացմունքով եմ նայում այդպիսի մարդկանց: Մտածում եմ, որ ես հաստատ այդքան կամքի ուժ չեմ ունենա ամեն ինչ սկսել նոր էշից, պարապել ինքս ինձ, սովորել այդքան քրտնաշան: Շատ սովորելու բան ունենք նման մարդկանցից: Եվ գիտեք ինչ, քոլոր էլ կարող ենք հասնել բարձունքների: Մարդկանց մտավոր ունակությունները տարբեր են, բայց էականը նպատակավացության, կամքի ուժի, աշխատասիրության տարբերությունն է:

### Նելի Խաչատրյան Ճամբարակ

## Մայրիկիս հմուտ ձեռքերը

Ինձ երբեմն թվում է, թե հմուտ ձեռքեր ունեցող մարդիկ հրաշագործներ են: Այդ հրաշագործներից մեկը մայրս է՝ Վիլետա Ստեփանյանը: Նա հիանալի հեյունագործ է: Նրա աշխատանքները գրավում են բոլորի ուշադրությունը: Նա իր գործերից հաճախ նվիրում է բարեկամներին, հարազատներին և համագոյւղացիներին: Շատ է ուզում վաճառել բայց չի կարողանում, որովհետև գյուղում վաճառելը, կարելի է ասել, անհնար է, քանի որ բնակիչները շատ քիչ են և հազիվ են հոգում ամենօրյա ծախսերը: Իսկ զյուղից դուրս վաճառելու համար միջոցներ ու գումար է անհրաժեշտ: Մի անգամ ամռանը աշխատանքները տարան Գոյ գյուղում վաճառելու, բայց ապարդյուն: Գործերի անգամ կեսը չէր վաճառվել, այդ պատճառով այլս չգնացին: Ու բացի այդ, միջոցները չէին բավականացնի ամեն օր գնալուն: Եվ այդպես, աշխատանքները մնում են մուլթ պահարանում:

Իսկ մայրիկս հուսով է, որ կգա մի օր, ու ինքը կկարողանա վաճառել դրանք և կկարողանա հոգալ մեր օրվա ապրուստը:

### Էյանորա Բայյան գ. Կալավան



## Երբեք մի ասա՝ երբեք

Երևի շատերդ ձանաչում եք ինձ: Սովորում եմ 12-րդ դասարանում: Շատ ակտիվ և կենսուրախ բնակորության տեր եմ: Դպրոցում չարածիություններ չեմ արել երբեք: Բայց ինչպես ասում եմ՝ երբեք մի ասա՝ երբեք...

Սովորական օր, սովորական դասերով, պարապմունքներով հագեցած: Ինձ թվում էր, որ ոչ մի հետաքրքիր իրադրություն չի կատարվում չի կատարվում:



Լուսամարդ Անդրեա Մարտիրոսյան

Իմելու: Բայց սխալվեցի... Մենք պատրաստվում էինք Նոր տարվա միջոցառման, և քանի որ ունեմ լավ գաղափարներ և աշակերտական խորհրդի անդամ եմ, իմ դասընկերներից մի քանիսի հետ միասին գնացի մեր կազմակերպչի աշխատանքներից: Բննարկումներ արեցինք, որոշումներ կայացրեցինք: Անքան էինք կանվել, որ մեզանից ոչ ոք չէր լսել զանգի ծայնը: Երբ վերադարձանք դասարան, ուսուցիչն արդեն մատյանն էր լրացնում: -Դասից 10 րոպե ուշացել եք, իսկ մնացած 35 րոպեն կմնաք պատի տակ կանգնած,- բարկացած ասաց նա: Մենք ուշացել էինք ընդամենը 3 րոպե: Առաջին անգամ էի անկյուն կանգնում: Անկեղծ ասած, միշտ երազել եմ: Եվ այսպես, 12-րդ դասարանում երազանքներ են ի կատար ածվում: Համեցեք...

### Մանե Սարգսյան Ճամբարակ



Լուսանկարը՝ Թերեզա Յայրապետյանի

## Երբ կարոտում ես...

Լոռու մարզ, գյուղ՝ Բագրում... իմ գյուղը, իմ մանկության տունը, կարոտել եմ: Բայց... Կան շատ բայցեր: Ցուրաքանչյուր մարդու կյանքում գալիս է մի պահ, երբ պետք է թողնել այն, ինչ ունեցել ես, և գնալ այն ամենի հետևից, ինչ ցանկանում ես ունենալ: Երեք ամիս առաջ ես նոյն իրավիճակում էի: Բարձրագոյն կրթություն ստանալու նպատակով հեռացա իմ ծննդավայրից: Չէ, չմտածեք, որ ես դժգոհում եմ: Այստեղ ամեն ինչ շատ լավ է՝ նոր ընկերներ, նոր ծանոթություններ, նոր շրջապատ... Ամեն ինչ հոյակապ է, սպասվածից շատ ավելի լավ: Բայց ինչքան էլ ամեն ինչ լավ լինի, միևնույն է, կարոտում եմ այն ամենը, ինչը կապված է իմ ծննդավայրի հետ: Կարոտել եմ պարզ ու բարի մարդկանց՝ իմ ընկերներին, հարազատներին: Կարոտել եմ իմ գյուղը՝ Բագրումը, հարազատ դարձած լուսավոր և ոչ լուսավոր փողոցները, մեր տաճ պատուհանից երևացող մատուռը և սաղմարթախիտ անտառները: Նոյնիսկ կարոտել եմ այն ամենը, ինչն ինձ անհանգույթուն էր պատճառում: Օրինակ՝ փոքրիկ երթուղայինը, որի մեջ հազիվ էինք տեղափորվում, իսկ իմաստ այդ ամենը հիշելով ջերմություն եմ զգում:

Կարոտել եմ Լոռվա պարզ ու միամիտ

բնակիչներին: Պահ է գալիս, որ ես ինքս ինձ նամանեցնում եմ թումանյանի Գիքորին, հարցնելով՝ տեսնես, ի՞նչ է կատարվում իմ գյուղում, ինչպես են մարդիկ, ի՞նչ է փոխվել, ամեն ինչ լավ է: Կարծես թե ցանկանում եմ այս հարցերով փարատել կարոտու: Իմ գյուղը այն գյուղերից մեկն է, որ պահպանել է ինչ ժամանակներից եկած ավանդույթները: Այստեղ մարդիկ բարյացկամ են, հյուրատեր: Մենք գրեթե ճանաչում ենք բոլորին և, տեսնելով միմյանց, ջերմորեն բարևում ենք, և այդ է պատճառը, որ կարոտում եմ իմ ծննդավայրը:

## Քրիստինե Սաքանյան գ. Բագրում



Լուսանկարը՝ Էմանուել Մկրտչովյանի

## Ել «Մարիո» չեմ խաղալու...

- Տատ, գնացի,- Վերցնելով գիշարկս դուրս եկա տանից:  
Դուրս գալով շենքից քայլեցի դեպի կանգառ: Մայթերը լիքն էին աշխատանքի և դասի շտապող մարդկանցով: Ասացի՝ լի՞քն էին: Չէ հա, ի՞չ լիքը: Լիքը կիմներ, եթե երկու դասընկեր դպրոց գնալու ժանապարհին իրար հետ գրուցեին, ոչ թե ականջակալներով երգ լսեին, լիքը կիմներ, եթե մեկը մյուսին նկատեր և, ֆեյսբուքի նամակները խորասնզված կարդալով, չտրորեր կանգնած մարդու ոտքերը, լիքը կիմներ, եթե այդ կանգնած մարդն էլ մի րոպեով կտրվեր իր հեռախոսից և ետ քաշվեր: Մրան ես արդեն սովորել եմ: Ամեն առավոտ դասի գնալիս իմ առջև բացվում է նոյն սև և սպիտակ «օնլայն» տեսարանը: Մի պահ ինձ սկսում եմ զգալ «Մարիո» վիդեոխայի մեջ: Կարծես թե իմ նպատակն է՝

շրջանցել զոմբիացած մարդկանց և հասնել մինչև կանգառ: Կանգառից հետո, երբ նստում եմ տրանսպորտ, սկսվում է երկրորդ փուլը, որտեղ իմ նպատակն է՝ վայր չընկնել և պատահարա չկպնել ինչ-որ մեկի հեռախոսին ու այն վայր չգեցել:

Դե, մինչև կանգնած հասնում եմ ուսումնարան, վերածվում եմ օնլայն շախմատի ձիու, և տեղափոխվում եմ երրորդ փուլ:

Երրորդ փուլը ամենադժվարն է: Այստեղ պետք է կարողանաս պոկել ընկերների համացանցից և ինքը չընկնես համացանցի փոսի մեջ, պետք է կարողանաս սպանել քո մեջ ֆեյսբուք մտնելու ցանկությունը: Ինչ մեջքս թաքցնեմ, ես այս փուլը դեռ չեմ անցել: Հասնում եմ ամենավերջին քայլին և այստեղ լսում եմ հեռախոսի ծննդնգործ և, իհարկե, վերցնում և մտնում ֆեյսբուք՝ նամակին պատասխանելու:

Դաշտորդ օրը սկսում եմ առաջին փուլից: Բայց ես այս կախվածությունից կձերբազատվեմ, և շրջապատ էլ կազատվի, և մենք բոլորս միասին ռեալ կյանքով ապրելու ցանկությամբ կհասնենք խաղի վերջին և չեմք հանդիպի «Game over» բառերին, քանի որ ռեալ կյանքում «Մարիո» չեմ խաղում:

**Մարիամ Բարսեղյան  
Վանաձոր**

## Ինչ կլիներ, եթե...

Ուսումնական տարին սկսելուն պես ֆիզկուլտուրայի դասերը սկսեցինք անց կացնել բոլորովին նոր, հարմարավետ ու լուսավոր մարզադաշտում: Դասից հետո չենք ուզում դուրս գալ այնտեղից, որովհետև երբեք չեն եղել նման պայմաններ: Ասեմ ավելին, արդեն բասկետբոլի թիմ է ձևավորվում:

Մեծամասնությունը ցանկություն է հայտնել ընդգրկվել այդ թիմում: Ոմանք ուղղակի ժամանակը անցկացնելու համար են գնում պարապմունքի, ոմանք էլ իրենց ապագան տեսնում են այդտեղ:

Ուսուցիչս՝ ընկեր Արսենյանը, խոստացել է ուժեղ թիմ ստեղծել, բայց երեխաների քանակը կրծատվելու է, յուրաքանչյուր թիմում մնալու են միայն տասը լավագույն խաղացողներ: Շատերից եմ յսել, որ, այսպես ասած, «գյուղի կաթ ու մածուն» կերած երեխաները ավելի ամրակազմ ու ծարպիկ են և կարող են ավելի բարձր արդյունքի հասնել: Բայց մենք ունենք մի մեծ խնդիր, որը սեփական ուժերով չենք կարող լուծել: Մեր միակ «ունեցվածքը» մի թենիսի սեղան է ու գնդակներ: Մարզական գույք ունենալու համար հովանավոր է պետք, իսկ հովանավոր չունենք: Սա գյուղում առաջին խմբակն է, որ բացվել է, բայց միշտ չէ, որ բոլորի ունակություններն ու նպատակներն են համապատասխանում: Օրինակ՝ ես չեմ կարողանում բասկետբոլ խաղալ: Իսկ ինչ վերաբերում է այլ խմբակների, այստեղ ցավալի իրավիճակ է տիրում: Համայնքում չկա որևէ ուրիշ գրադարան: Իսկ եթե լիներ Մշակույթի տուն, շատերի, այդ թվում նաև իմ կյանքը այլ կերպ կրասավորվեր: Ես կզարգացնեի իմ նկարչական ունակությունները: Մեր մնում է միայն զինվել համբերությամբ, և սպասել, որ մի օր մեզ համար էլ մի դուռ կրացվի:

**Նելլի Բեգլարյան  
գ. Վահագնի**



## Դարինկա տատս

Դարինկա տատս ասում է. «Որ ասում էի՝ իս անունը լավը չի, ինչի՞ եք դրել, եթու ասում էր՝ աշխարհի ամենալավ անունն ա»:

Երկի դուք ևս մեկ անգամ տատիկիս անունը կարդացիք, որովհետև ուշադիր չէիք կարդացել:

Այժմ տեսմենք, թե ինչ պատմություն կա թաքնված Դարինկա անվան տակ:

-Դարինկա տատս,-պատմում է

Դարինկա տատս,-ամուսնացել ա

Մակար պապիկիս հետ: Ունեցել

են չորս երեխա՝ երկու տղա,

երկու աղջիկ: 1915թ-ից հետո, երբ

նեղվածություն ու սով ա եղել, ջահել

տղամարդիկ Գյուղագարակից գնացել

են Թիֆլիս, որ աշխատեն, փող բերեն

իրանց ընտանիքները պահեն: Ամենքը

մի փեշակ և ունեցել, մեկը՝ կարուծն

անող, մեկը՝ կոշկակար: Պապս

կոշկակար և եղել: Էղ ժամանակ

թուրքերը Թիֆլիս նստած են եղել: Որ

ինացել են տեղոց մասնագիտությամբ

հայեր կան, ամենքին մի գործ են

տվել: Պապս էլ հրաժարվել ա իրանց

կոշկակարը կարկատի: Դրա համար

1918թ-ին Թիֆլիսում թուրքերը սպանել

են պապիս: Պապիս սպանությունից

հետո տատս երեք երեխու հետ փախել

ա իրա հրանց տուն՝ Ազգարակ,

որտեղ էլ ծնվել ա Ալունիկ հոքորս:

Տատս էնքան ձարպիկ ու ուժեղ կիս ա

եղել, որ կարեցել ա մենակ իրա չորս

երեխերին պահի, մեծացնի: Պապիս

հետո ինքն ա կոշկակարություն արել:

Հայրենական պատերազմի ժամանակ

Մակար պապիս ախատերը՝ Միկիտը

(լավ անուն ա չէ՝) գնացել ա բանակ և

չի վերադարձել, էրեխերն էլ մնացել են տատիս հոյսին: Էղ էրեխերի մերն էլ իիվանդ ա եղել: Տատս ութ երեխա է մեծացրել: Որ տատս մտել ա զուղամեջ, բոլոր տղամարդիկ ոտքի են կանգնել, տատիս էլ Դարինկա մամա են ասել:

-Փաստորեն տղամարդ կին ա եղել մեր Դարինկա տատը: Տա՛տ, բա ո՞նց են ծանոթացել Օֆիկ տատն ու Յարություն պապը:

-Զեն ծանոթացել: Տատիս իրա ախատերը ասել ա՝ էն Խորենանց աղջիկը՝ Օֆիկը, սիրուն, լավ աղջիկ ա (Օֆիկ տատանը էլ են Ազգարակից եղել), եկեք ուզեք: Գնացել, տեսել ու ամուսնացել են: Ունեցել են յոթ երեխա:

-Որոնցից կարևորը եղել են մեծն ու փոքրը, - ասաց տատիկիս փոքր քոյրը, ով այդ յոթ երեխաներից ամենափոքրն է, և ում մենք համարում ենք հորաքոյր, այնինչ նա հորս մորաքոյրն է: Հորիցս ընդամենը իինգ տարով է մեծ:

-1949թ-ին հորս ու մորս աքսորել են Սիրիի:

-Դարինկա տատին է՝:

-Զէ, նա մնացել էր Գյուղագարակում:

-Առանց Դարինկայի գյուղը ի՞նչ էր անելու, - ասում է հորաքոյրս:

-Դարիրը, Մակարը ու ես Սիրիորում ենք ծնվել: Ստախնի մահից հետո բոլոր աքսորվածները արդարացվել են ու ես վերադարձել: Դարինկա տատիս անունը իմ անունն են դրել, իմ անունն էլ թողիս են դրել:

Յա, ի դեպ նշեմ, որ Դարինկա նշանակում է՝ Աստծո պարզ:

**Լիլիթ Սութիասյան**

## Անհաջող վայրէջք

Ինչպես ամեն առավոտ, այնպես էլ այսօր, դժվարությամբ արթնացա, վազեցի պատուհանի մոտ, որ տեսմեն ինչպիսի եղանակ է, չնայած առանց դրա էլ երևում էր, որ մոռայլ օր է: Ժամանակը շատ քիչ էր, դասերն սկսելուն մնացել էր քան բոպե: Արագ լվացվեցի, հագնվեցի, նոյնիսկ չհասցրի նախաձաշել, վերցրի պայուսակս և վազեցի դուրս: Վերելակում հիշեցի, որ թղթապանակս տանն եմ թողել, բայց ետ բարձրանալու ժամանակ չունեի, դրա փոխարեն մտածում էի, թե ինչ եմ ասելու ուսուցչունու: Բացվեցին վերելսկի դրները, առանց ժամանակ կորցնելու դուրս եկա, մտովի արդեն վազում էի, բայց հասկացա, որ չեմ վազում, այլ թռչում եմ:

Դա թոհիչք էր՝ անհաջող վայրէջքով: Անհաջողը մեղմ է ասված, այնպես էի զլիվիվայր աստիճաններից ընկել, որ չեմ էլ պատկերացնում, թե ինչպես եմ ուժ գտել բարձրանալու: Գրլիսս բարձրացրի, հասկացա, որ թիթս, բերան ուռել են, դեմքս արյունվա է: Սովորաբար նման իրավիճակներում երեխաները լացում են կամ օգնություն կանչում, իսկ ես նստել եմ մի անկյունում, միաժամանակ և լացում եմ, և ծիծաղում: Ուժ գտա իմ մեջ, բարձրացա, սեղմեցի կոճակը և վերելսկով բարձրացա: Երբ մայրս դուռը բացեց, այնպես վախեցավ, որ դեռ աչքիս առաջ է:

Նա ինձ կարգի բերեց: Չէի համակերպվում մտքի հետ, որ պետք

է նստեմ տանը, և չկիսեմ իմ հովզերը ընկերներիս հետ: Վերցրի պայուսակս և վազեցի դուրս: Վերելակում նորից հիշեցի, որ թղթապանակս տանն եմ թողել, բայց ետ բարձրանալու ժամանակ չունեի, դրա փոխարեն մտածում էի, թե ինչ եմ պատմելու ընկերներիս: Դանդաղ, առանց շտապելու իջա աստիճաններով և բռնեցի դպրոցի ժամապարհը:

**Արուսյակ Սահակյան  
ք. Յրազդան**

## Գրականության այսօրը

Վերջերս կարդում էի երիտասարդ գրողներին, ու ասեմ, հիամբափություն ապրեցի արդի գրականությունից: Ներկայիս գերագույն խնդիրներից մեկը, որ ինձ հովզում է, դա ճացող գրականությունն է: Նկատել եմ, որ մեր սերունդը բաժանվել է երկու մասի:

Կարդացողներ և չկարդացողներ: Բայց այստեղ էլ հարցն այն է, թե ընթերցողներն ի՞նչ են կարդում: Ասում են՝ ազատության դար է, ազատ մոքեր պիտի իմեն, ազատ խոսր, բայց այդ ազատությունն արդեն վերածվում է այլասերության, իսկ վերջինս մշակույթ ու գրականություն չի կարող կերտել: Գնալով զարգանում է մի «փողոցային» գրականություն: Երիտասարդները հրաժարվում են հանրահայտ գրողներից ու կարդում են պարզունակ գրքույկներ: Իսկ

դրանց հեղինակներն էլ, մի երկու բառ իրար կպցնելուց կարծում են, թե արդեն գրող են: Օրերս ֆեյսբուքյան մի դեռահաս օգտատեր իր էջում փնուվել էր Հեմինգվուտիյի ստեղծագործություններից մեկը, այն համեմատելով բրազիլական սերիալի հետ: Շոկի մեջ էի... Դու գոնե կարդացե՞լ ես, հասկացե՞լ ես, որ նման բան ես գրում և համաշխարհային արժեք ես ոտնահարում:

Պիտի մարդկանց ճիշտ գրականություն իրամցնես, պիտի նրանց ամեն բան ճիշտ մեկնաբանես, որ այսպիսի փաստի առաջ չկանգնես: Շատ եմ ուզում, որ նորելով գրողները, մինչև իրենց խզքանը հանրությանը իրամցնելը մի լավ ծանր ու թեթև անեն, ցոյց տան փորձառուներին, խորհուրդներ ընդունեն, նոր միայն իրենց համարեն գրող: Իհարկե, կան նաև արդեն ամուր քայլեր անող երիտասարդներ: Խոսքս բոլորին չի վերաբերվում:


**Հայարփի Բաղդասարյան  
ք. Յրազդան**

## Իսկապե՞ս մենք ապագան ենք

Մենք՝ պատանիներս, ունենք մեր ընդիհանուր իմենախնդիրները: Իմ կարծիքով, դրանցից ամենակարևորը գրալվածության ապահովումն է: Խոշոր քաղաքներում տվյալ խնդիրը որոշ չափով լուծված է, իսկ փոքր քաղաքներում կամ գյուղերում...

Այն ընդիհանրապես բացակայում է՝ ստեղծելով պատանիների միջև անհամատեղելիություն, և իր ազդեցությունն է ունենում գյուղաբնակ պատանիների ինքնարտահայտման վրա: Յաճախ առաջանում են հարցեր. ինչո՞ւ է իմ գյուղը կամ նոյնիսկ քաղաքը գրուկ սպորտդպրոցներից, ժամանցի վայրերից, թանգարաններից: Սակայն դրանց լուծում չի տրվում:

Ինձ հովզու մուս խնդիրը մասնագիտության ընտրությունն է: Միայն ցանկությունը բավարար չէ: Մինչև ընտրություն կատարելը հարկավոր է հասկանալ՝ որն է առավել պահանջված, և պահանջված լինելով՝ արդյո՞ք մի քանի տարի անց տվյալ մասնագիտությամբ հնարավոր կիմի աշխատանքի ընդունվել: Ներկայում պատանիներից



շատերը, եթե ոչ բլորը, ցանկանում  
են դառնալ թժիշկ, հրավարան,  
ծրագրավորող ու մի շարք «նորան»  
մասնագետներ: Այսպիսով, բազմաթիվ  
մասնագիտություններ «հանում  
են»՝ աշխատատեղերի պակասի ու  
անմողունակութան պատճառով:

Սուրեն Կարապետյան  
գ. Զրառատ

## ԻՆՉՈՒ Է ԻՆՉ ԻՆՎՈՐԱՄ ԱԲՈՎՅԱՆ քաղաքում

Ինձ հուզում է իմ քաղաքի  
անբարեկարգ վիճակը:  
Խոտածածկ վայրեր հազվադեպ  
են հանդիպում, արձանները և  
հուշարձանները խարխույ վիճակում  
են: Բացակայում են նորոգված  
շենքերը, և դրա փոխարեն շատ են  
հանրակացարանները, որոնց ամեն մի  
փոքրիկ սենյակում բնակվում են 6-8  
հոգի:

Ինձ հուզում է նաև քաղաքի  
լուսավորության հարցը: Վճառված  
են գրեթե բոլոր լամպերը, և արդեն  
երեկոյան ժամերին, մանավանդ՝  
ծմեռը, պարզապես հնարավոր  
չի լինում քայլել դրսում, և շատ  
անգամ մարդիկ վախը սրտում  
են հասնում տուն: Ես էլ եմ  
այդ մարդկանցից և հազիվ եմ  
բասկետբոլի պարապմունքից  
հետո հասնում տուն, որը շատ  
երկար ժամապարհ է: Կարծում  
եմ՝ պետք է մեծ ուշադրություն  
դարձնել լուսավորության  
հարցերին. այս խնդիրը լուծելով՝  
կնվազի գողությունների և այլ  
հանգաօրոքությունների թիվը:

Ապրենի Առուան

Ինձ հոգում է օրեցօք ահազնացող  
աղքատությունը: Շատ երեխաների  
համար սեպտեմբերի մեկը և դրան  
նախորդող մի քանի օրերը երջանիկ  
օրեր են, քանի որ նրանց համար գնում  
են նոր հագուստ, պայուսակ և այլ  
իրեր: Սակայն մի ստվար զանգվածի  
համար այդ օրը այնքան էլ երջանիկ  
չէ, քանի որ կարիքի պատճառով չեն  
կարողանում դպրոց հաճախել:  
Մի ընկեր ունեի, որի հետ միասին  
էինք մեծացել: Երբ առաջին անգամ  
դպրոց պետք է գնայինք, ծնողներս  
ինձ գնել էին այն ամենը, ինչ  
անհրաժեշտ էր:

Երբ խաղում էինք, նրան  
հարցրի.  
-Անի, ծնողներդ քեզ ի՞նչ են  
գմել դպրոցի համար:  
ԱՅԻՆ մի պահ նայեց աչքերին,  
հետո գլուխը թեքեց և ցածր  
ձամով շշնջա.

-Գիտե՞ս, Լիլ, ես այս տարի  
չեմ կարող դպրոց գալ:  
-Քայլ ինչո՞ւ, չէ՞ որ մենք  
երազում էինք միասին  
սովորել:  
Անին որոշ ժամանակ լրու  
էր, օրուխը կախել էր, և ես  
նկատեցի արցունքի մի  
կաթիլ գլորվեց և ընկավ նրա  
դողացող ծեռքերի վրա:  
-Լիիթ, ես դպրոց չեմ գնալու,  
որովհետև չունեմ նոր  
հագուստ, պայուսակ, տետրեր,  
գրիչներ...  
Այդ օրվանից շատ  
տարիներ են անցել, և ես  
իհնա հասկանում եմ Անին, նա  
հասկանում եմ, որ այդ ժամանակ  
ովկայու ու զավիր եր նոր հայա

Հիմք Վարդանյան

Փողոցում ինձ մոտենում են շատ  
տարեց մարդիկ և գումար մուրում:  
Ես համոզված եմ, բոլորը շատ լավ  
մարդիկ են, և ժամանակին աշխատել  
են մեր երկրի համար: Այսօր նրանք  
ուղարկի ցանկանում են պետությունից  
աջակցություն ստանալ, տաքուկ տուն  
և սնունդ ունենալ:

Մենք մեր դպրոցի տնօրեն ընկեր  
Քեշիշյանի հետ գնացել էինք  
ծերանոց: Ես շատ ազդվել էի, երբ  
տեսա միայնակ ծերերին լացելիս:  
Նրանք ասում էին, «Էրեխտ'ք ջան,  
խնդրում ենք, չթողնենք ձեր տատիկ-  
պապիկներին, ծնողներին դրսերում,  
մեռ էն»:

Այդ ծերերի մեջ կան պատերազմի վետերաններ, որոնք ժամանակին կրվել են հանուն հայրենիքի, իսկ հիմա ստանում են այնքան փոքր թոշակ, որը չի հերիքում անզամ վարձավարների համար. և նոյնամբ մնում են սովոր։

Հինգելա Սարգսյան

Ինձ հոգում է, թե ինչպես են մարդիկ իրենց ապրուստը վաստակում. մեկը ուրիշի տաճն է աշխատում, մյուսը՝ մուրացկանություն է անում: Եվ այդպիսի ընտանիքների երեխաները չեն կարողանում հաճախել դպրոց, ուսում ստանալ: Նրանք օգնում են



իրենց ծնողներին հացի գումարը  
վաստակել:

Գիտեմ նաև Երեխաների, ովքեր գնում  
են դպրոց, բայց որ միջողառումներ

Եմ լինում, նրանց չեն ընդգրկվում:  
Կարծում եմ այսպիսի երևաների  
վրա ավելի շատ ուշադրություն պետք  
է դարձնել, ու նրանց հետ պետք է  
ընկերություն անել: ԶԵ՞՞որ նրանք  
մեղավոր չեն, որ իրենց կյանքն  
արախ է ուսասակութե:

այլ բառ է լրացավորված։  
Ես չունեմ ծնողներ... Հաճախ մարդիկ  
դա իմանալով խոսափում են ինձնից,  
աշխատում են քիչ շփվել, որովհետև  
մտածում են, որ վաստ եմ... Բայց  
նրանք չեն հասկանում, որ պետք չէ  
մարդկանց թերագնահատել, չէ որ  
բոլորն էլ կարող են այդ ճակատագիրն  
ունենալ: Մարդիկ չեն ուզում շփվել  
ինձ հետ նաև իմ ծնողների ունեցած  
խնդրի մասին իմանալով: Եղել են  
դեպքեր, որ շփվել են, բայց իմանալով  
իմ ընտանիքի մասին, հեռացել են՝

առանց պատճառն ասելու:  
Ես շիվում եմ բոլորի հետ առանց  
իմանալու նրանց կյանքը և առանց  
քննարկելու ձականագրերը: Հուսով  
եմ, կգա ժամանակ, երբ բոլորը  
կիասկանան, որ պետք չէ խուսափել,  
և կօգնեն այն մարդկանց, ովքեր ծանր  
վիճակում են...

Հառլը Պետրոսյան



Լուսանկարը՝ Հռիփսիմե Եղիազարյանի

## Իրական շփումների անհրաժեշտությունը

Այսօր Հայաստանում շատ խնդիրների կողքին են կրնեի նաև պատահների՝ հատկապես մարզերում բնակվող պատահների վաստեղեկացվածության խնդիրը։ Մարզերում ապրող աշակերտները չփառեն, որ իրենց հնարավորություն ունեն մասնակցելու միջազգային մրցույթների, ֆորումների, տարրեր ծրագրերի, անդամագրությունների, քանի որ դպրոցներում նման բաների մասին տեղեկություններ չեն տալիս։ Նման ծրագրերի մասին հիմնականում իմանում են այն աշակերտները, ովքեր Երևանում սովորող ընկերներ և ծանոթներ ունեն։ Միայն վերջին երկու-երեք տարիների ընթացքում է, որ որոշակի չափով մեծացել է տեղեկացվածության աստիճանը։ Երբ ես դեռ դպրոցական էի, նման դասընթացների, ծրագրերի մասնակցել եմ միայն անգերենից, քանի որ ուսուցիչ էր հետաքրքրվում, իմանում և իր աշակերտամբ էր, որ մենք մասնակցում էինք դրանց։ Դա նաև խթան էր, որպեսզի մենք ավելի լավ սովորեինք։ Սակայն նոյն դպրոցում սովորող քոյրիկիս ուսուցիչը չէր հետաքրքրվում, և նրանք հնարավորություն չէին ստանում որևէ ծրագրի մեջ

ընդգրկվելու։ Առաջին անգամ համալսարանում էր, երբ զգացի, թե որքան տեղեկացված են քաղաքի երեխաները՝ ի տարրերություն մարզերի երեխաների։ Դասընթացի ժամանակ սկսեցին խոսել ֆորումներից, և ես սկզբում չէի հասկանում ինչի մասին է խոսքը, այնինչ նրանք դրանց մասնակցում էին դեռ դպրոցական տարիքից։ Դա նաև օգնել էր նրանց ազատվել բարդույթներից։ Իմ կարծիքով, պետք է տեղեկացված պահել նաև մարզերի երեխաներին, քանի որ նրանց մեջ հաստատ կգտնվեն տաղանդավոր և, հնարավորության դեպքում, մեծ ապագա ունեցող երեխաներ։ Պատահների հիմնախնդիրների շարքին կարելի է դասել նաև կենանի շփման պակասը, և դրանում տեխնիկայի դերը։ Այսօր շատ երեխաներ նախընտրում են երկար նստել համակարգչի առաջ՝ իրենց հասակակիցների հետ դրսում խաղալու վիճակը։ Կամ էլ եթե նախկինում գրաղված մայրիկներին փրկում էր երեխաներին մոլուքիլով հանգստացնելը, այժմ դա անում են համակարգչային խաղերը։ Ես ինքս էլ շատ ծանոթներ ունեմ, որոնց երեխաները դեռ երեք-չորս տարեկանից սկսել են օգտվել համակարգչին, մինչդեռ մենք ինքներս այդ տարիքում նոյնիսկ չէինք էլ կարող երազել հեռախոսի մասին։ Այսօր տեխնիկայի

մեծ առաջընթացը նոյնիսկ հնարավորություն չի տալիս երազել։ Սոցիալական կայքերի առկայությունը պատճառ է դարձել կենդանի շփման պակասի։ Յիմա երիտասարդության մեջ մասը գրանցված է Facebook, Twitter, Instagram սոցիալական կայքերում և գուցե օրվա մեծ մասը անցկացնում է այդտեղ։ Մեծ մասի համար լուսանկարվելն անհրաժեշտ է նոր գլխավոր նկարի համար։ Իմ կարծիքով այսօր փոխվել են նաև շատ արժեքներ։ Շատերը հին ընկերների հետ հանդիպելու փոխարեն նախընտրում են մի քանի նամակ փոխանակել, դրանով իրենց պարտավանությունն ավարտած համարելով։ Այսպիսով շփման պակասը, շփում ասելով համականալով գուտ համակարգչի կամ հեռախոսի միջոցով շփումը, հանգեցնում է մեկ այլ հիմնախնդրի, այն է՝ բարդույթներ ունենալուն։ Եթե երիտասարդներին հարցնես. արդյո՞ք գիրը կարդում են, թե ոչ, և դրան հետևի ոչ պատասխանը, ապա նրանք հաստատ արդարանալու տարրերակ կգտնեն՝ պատճառաբանելով, որ ժամանակ չեն ունեցել, մինչդեռ բավականին երկար ժամանակ կարող են անցկացնել համակարգչի առաջ։ Տեխնոլոգիաները ստեղծված են հեշտացնելու մարդու կյանքը, բայց ոչ զրկելու նրան իրական կյանքով ապրելու հնարավորությունից, քանի որ մանկության, պատանեկության, երիտասարդության տարիները համակարգչի առաջ անցկացնելը կզրկի հետագայում ունենալ հիշողություններ ընկերների հետ անցկացրած լավ պահերից, որոնք ավելի արժեքավոր են։

**Հռիփսիմե Եղիազարյան  
ք. Հրազդան**

## Պատերազմից շատ տարիներ հետո

Հարություն Սարգսյանը մեր գյուղից  
է՝ Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղից: Նա 52 տարեկան է: Գյուղում  
բոլորը նրան շատ են հարգում,  
որովհետև մասնակցել է Արցախյան  
ազատամարտին:

-Քանի՞ տարեկան էիք, երբ մենքնեցիք  
Արցախ մասնակցելու պատերազմին:

-30 տարեկան էի: Ամուսնացած  
էի: Արդեն ունեինք երեք երեխա և  
սպասում էինք չորրորդին:

-Կարո՞ղ եք մի երկու դեպք պատմել  
պատերազմից:

-Ապրիլի 24-ին՝ Երեսնի օրը,  
Աղբեջանը ուժեղ հարձակում  
իրականացրեց: Մեծ զորքով,  
ականանետներով, ինքնաթիռներով  
սկսեցին հարձակումը:

Յամողպած էին, որ մեզ  
կիաղթեն, այնինչ ստացվեց  
հակառակը: Մենք ավելի  
ուժեղ էինք, ավելի  
համարձակ, որովհետև  
պայքարում էինք հայրենի  
հողի համար, և մենք  
հայթեցինք այդ մարտում:  
- Դուք միուսպես՝ Էթո կամ

Վայր վրա պատրի լիք քան  
վիրավորված ընկեր ունեի՞ք:  
-Այս, ես վիրավորվել եմ, և  
ունեինք շատ վիրավորված,  
մահացած և նահատակված  
ընկերներ: Շատ հարազատ  
ընկերներ եմ կողոքել մարտի  
դաշտում, որոնց ամեն օր  
հիշում եմ՝ Աբրահամին,  
Արորուշին՝ Յարութին:

Ուզում են, սպառչում...  
Ուզում դաշտում ամեն մեկը  
հանուն ընկերոջ պատրաստ  
էր գնալ զոհաբերության: Մի  
ուրիշ կապ կար բոլորին միջև:  
-Դուք, որ իմացաք  
վերադառնում եք տուն, ի՞նչ  
առածիք:

Եթիւն հասունէ Եթիւն ուսուն

-Ծանք համապատասխան, բոլորն սկզբանից էինք: Դրա համար էլ ուրախ էինք մեր հաղթանակով, տուն գնալու մասին չէինք մտածում:

-ինչո՞վ եք զբաղվել տուշ  
վերադառնալուց հետո:

- Են վերադառնալոց անմիջապես  
հետո ենթարկվել եմ վիրահատության  
Մարմնին մեջ ականի բեկորներ  
և լ. Տ. Բ. աշխարհական աշխարհական

կայիս: Հետո վիրավորվելուց  
լսողությունս նույնպես վատացել էր:  
Բուժվում էի:

-Ինչպես է դասավորվել ձեր կյանքը  
պատերազմից հետո:

-Վերադասնալուց հետո  
հողագործությամբ եմ զբաղվել և  
զբաղվում եմ մինչ այսօր:

-ի՞նչ եք կարծում, այսօր  
ազատամարտիկները  
համապատասխան ուշադրության  
առժանանքով են:

- Ազգատամարտիկները միշտ էլ արժանացել են անուշադրության: Եթե ուշադրության էլ արժանանում են, որեմն ամենաշատ:

-Զեր կարծիքով, Ե՞րբ կավարտվի այս լարված վիճակը հայ-ադրբեջանական հարաբերություններում:

Կկարողանա՞ն այս երկու ազգերը նորից մտերիմ հարևաններ դառնալ: - Քարազատ կդանան այն ժամանակ, երբ մարդու ուլենը այնքան աշխատի, որ զգա, թե ինչ տարբերություն. հայ, թուրք, ուզբէկ, ռուս... Այժմ մենք անպատճառ ենք գնալ այդ քայլին:



ՎԵՐԱՏՄԱՆԻ ՏԱԿԳՅԻՐ՝ ԱԼԹԻՍՊՈՏԱՆ

-Ի՞նչ կցանկանաք մեր ապագա  
սերնդին:

-ի հարկե, ամենակարևորը, որ ապրեք  
խաղաղության մեջ, հանգիստ, ու  
չտեսնեք այն, ինչ մենք ենք տեսել:

-Հնորիանապութուն, հարապարսից

-Ծալիւազարդություն, ուղացարքություն  
համար: Եվ կներեք, որ ծեզ հիշեցրինք  
այս ռժվար օտերի մասին:

-Չեզ էլ շնորհակալություն, որ հիշեցիք  
ինձ:

Ալբերտ Մկրտչյան  
գ. Վահրամաբերդ

## Մանկությունը մի թռչուն է...

Պարապմունքից էինք գալիս, անցանք  
այգու մոտով, հայացք պտտվեց ու  
կանգ առավ այգու վրա՝ տերևների  
հեղեղ էր: Անցանք պարսպի վրայից  
ու նատեցինք մոտակա նատարանին:  
Ու քար լրության մեջ նայում էինք  
շուրջներս: Մեկ էլ Արտաշը ու Հայկը  
եկան հեռվից խաղալով ու իրար վրա  
տերևներ շաղ տալով: Բարեեցին ու  
շարունակեցին, տերևներից բլուրներ  
էին սաքում, իրար վրա տերևներ  
էին սփռում ո՛, ու զվարծանում էին:  
Հետո միացան մեզ էլի երեխտը, ու  
բոլորով նայում էինք այդ երկուսին, որ  
ամբողջ այգին գլուխներն էին վերցրել:  
Նրանց խաղը վարակիչ եղավ նաև  
մյուս փոքրերի համար, բայց ոչ մեր:   
Երբ նկատեցինք, որ արդեն մենակ  
ենք մնացել նատարանին, ու մի քանի  
երեխաներ ամբողջ այգով իրենց  
ձայնն են օգել, ու մենք էլ մի քիչ մրսում  
ենք, բարձրացանք ու գնացինք դեպի  
այգու մուտքը: Մի պահ ես կանգ առա,  
մերսիս պստիկ Մարիամիկը ասում էր՝  
խալա, դու էլ գնա, ու նայում էի ներքև,  
որ տերևների մի փունջ վերցնեմ:  
Մեկ էլ մեծ Մարիամը սկսեց՝ թաց է,  
կեղսոտ է, դու էլ մրսում ես, ու... Ու  
սլեպոր:

Ես զայսի էի պարապմունքից ու  
արդեն այնքան հոգնած էի, որ չէի  
կարողանում կրանալ ու տերևներ  
հավաքել: Իսկ Յասմիկը, որ  
ծիծաղելով շորի մեջ տերևներ էր  
փաթաթում, որ տաներ շաղ տար ԱՅԻԻ  
վրա, նոյմիսկ չնկատեց, որ արդեն  
«ծեր 17-ամյա աղջիկը», հիացմունքով  
ու կարոտով է մտածում խայի ու  
տերևների մասին: Ու այդ 17-ամյա  
աղջիկը հասկացավ, որ.

«Մանկությունը մի թշչուն է,  
Թելով կապված մեր սրտերին,  
Թելը պոկվում ու նա թշչում է  
Ու հեռանում է մեզանից...»

Ու մի բան է: Շատերին թվում է, թե իմ ծննդավայր Ամասիայում միայն լեռներ են, մարգագետիններ ու արոտավայրեր: Բայց Ամասիայում նաև այգի կա: Եթե չեք հավատում, եկեք ինըներդ տեսեք:

## Մարիամ Դայրապետյան գ. Ամասիա

## Դերասան լինելը կոչում է

**Հարցագրույց հայրիկիս՝ դերասան  
Ռաֆիկ Խառատյանի հետ**

- Հայրիկ, ինչո՞ւ ես ընտրել հենց դերասանի մասնագիտությունը:
- Որովհետև փոքր հասակից սիրել եմ թատրոնը, սիրել եմ կինը, և դպրոցն ավարտելուց հետո Աստված կամեցավ, որ աշխատեմ Գյումրու Վ. Աժենյանի անվան պետական դրամատիկական թատրոնում դերասան: Երազանքու կատարվել է:
- Այսինքն, դու մանկո՞ւց էիր որոշել դառնալ դերասան:
- Այո, ես մանկուց երազել եմ դառնալ դերասան:
- Իսկ քո ընտանիքը ինչպե՞ս ընդունեց դառնալ դերասանի մարդկանց հետ ես խաղացել, հայրիկ:

- Ես ներկայացել եմ տարբեր ժամաներում, և կոմեդիա, և դրամա, Աստծոն հաջողությամբ, բոլոր խաղացած դերերս կարողացել եմ հաղթահարել:
- Ի՞նչ հայտնի մարդկանց հետ ես խաղացել, հայրիկ:
- Ես խաղացել եմ Լևոն Թուխիկյանի, Խորեն Աբրահամյանի, Կարապետ Սարգսյանի, Ալեքսանդր Քոչարյանի, Սերգեյ Չոլախյանի և այլ հայտնի մարդկանց հետ:
- Իսկ կա՞ն դերեր, որոնք կուգենայիր խաղալ:
- Այո, կան, հուսամ կամաց-կամաց կստացվի:
- Երբեք չե՞ս զցացել, որ դերասան ես դարձել:
- Երբեք:
- Ի՞նչ դժվարություններ ունի այսօր

պետք չէ դերասան դառնալ: Հնարավոր է՝ ուրիշ մասնագիտություն ընտրեն, և դա իրենց համար ավելի հոգեհարազարտ լինի, իսկ եթե ընտրեն թատրոնը և չկարողանան առաջ գնալ այդ ասպարեզում, ապա հետո շատ կզոշան:

**Լիիթ Խառատյան  
ք. Գյումրի**

## Ուրբաթը

Ամռան օրերից մեկն էր: Մեր շենք տեղափոխվեց մի տղամարդ, ով հարևանների վկայություններով, երիտասարդ էր, և ազգականի դատարկ տուն էր տեղափոխվել մոտակա գյուղերից մեկից, որպեսզի աշխատանք գտնի Ամասիայում: Աշխատանք չկար: Ամասիացիներից շատերն է հեռացել էին քաղաքից այդ պատճառով:

Նրան իր ապրելակերպով նմանեցնում էին «Որբինզոն Կրուզո» գրքի հերոս Ուրբաթին, և մենք սկսեցինք նրան այդպես անվանել: Ուրբաթը շիշ էր հավաքում, հանձնում և հաճախ այդ փողով երեխաներին քացցրավենիք էր գնում: Նա փորոցից հավաքում էր ծխախոտի մնացորդներ և ծխում: Իսկ թե ինչ էր ուսում, ինչպես էր ապրում, մենք չգիտեինք: Շուտով սկսեց Ամասիայի ցրտաշունչ ձմեռը: Ուրբաթին մեկ-մեկ տեսնում էինք փողոցում: Զմուն օրերին աղբ էր հավաքում, այլում և տաքանում: Հունվար ամսին էր, եթե հարևաններն սկսեցին խոսել, թե նա տանից մի քանի օր դուրս չի եկել, և ոտնաձայներ էլ չեն լսել: Կանչեցինք տան տիրոջը: Նա բացեց դուռը, և տեսավ, որ

Ուրբաթը մահացել է: Նա սրտի կաթված էր ստացել: Նա մահացել էր մենակության մեջ: Բժիշկները ասացին, որ եթե նրա կողքին գտնե մեկը լիներ, կարող էր նրան փրկել: Այդ ամենը երբ մենք իմացանք, շատ տիրեցինք: Մենք մեզ էինք մեղադրում, թե ինչու գոնե մի օր նրա դուրս չըացեցինք և չօգնեցինք: Ըստ իս, մենակության մեջ մահանալը ամենասարսափելի և ամենատխուր մահն է:

**Հարություն Հայրապետյան  
գ. Ամասիա**



այդ որոշումը:

- Հայրս չէր ուզում, սակայն կամաց-կամաց ընտելացավ այն մտքի հետ, որ իր տղայի մասնագիտությունը դերասանությունն է:
- Հիշո՞ւմ ես քո առաջին ներկայացումը:
- Ես խաղացել եմ ինքնագործ խմբերում, որից հետո տեղափոխվել եմ թատրոն, և իմ առաջին մեջ ները եղել է «4 նմանակ եղբայրներ» ներկայացման մեջ, որտեղ ես կերտում էի 4 եղբայրներին:
- Քանի՞ տարի է, ինչ աշխատում ես թատրոնում:
- Թատրոնում աշխատում եմ 1979թ.-ից մինչև իհմա, բայց որպես դերասան՝ 1989 թվականից:

դերասանը, թատրոնը:

- Դժվարություններուն ամենուրեք են, թատրոնին պետք է հանդիսատես, դերասանին է պետք հանդիսատես: Դերասանի համար ի՞նչը է կարևոր: հանդիսատեսը, և ինչու չէ, բարձր աշխատավարձը:
- Կուգենայի՞ր, որ երեխաներդ նոյնպես դերասան դառնան:
- Եթե սեր ունեն թատրոնի, կինոյի հանդեպ, ինչու ոչ:
- Ի՞նչ կմաղթեիր մեզ՝ ապագա թատերասեր սերնդիս:
- Կմաղթեմ, որ ճիշտ ընտրություն կատարեն: Եթե սեր ունեն դեպի թատրոնը, բայց չեն կարողանում կամ չեն ցանկանում հաղթահարել դժվարությունները, ուրեմն, նրանց



Լուսամկարը՝ Արփիմե Ճղոփկյանի

## Ազատան. Ակարահանումներ

Շիրակի պատանի թղթակիցներով գնացել էնք գյուղ Ազատան՝ ֆոտոներ անելու։ Շատ հետաքրքիր էր գյուղացիների ապրելակերպը։ Ես նկատեցի մի ծեր մարդու՝ քարին նստած։ Մոտենալով ասացի։

- Բարև ծեզ։

Պատասխան չստացա։

- Ինչըս ե՞ք։

Կրկին պատասխան չկա։

Սկսեցի ներկայանալ.

- Ես Դավիթն եմ։ «Մանանա»

կենտրոնի սան եմ և եկել եմ նկարել սովորելու։ Յո դժմ չեք, որ ծեզի նկարեմ։

- Ի՞նչ է էղե, տղա ջան։

Դարձյալ նոյնը։

- Ես «Մանանա» կենտրոնի սան եմ։

Եկել եմ նկարել սովորելու։

Վերջապես հնչեց այդքան երանելի պատասխանը։

- Տղա ջան, դու մեր Սարոյի թոռը չե՞ս։ Յասկացա, որ պապիկը այդքան էլ լավ չի լսում, բայց ալարեցի այդքանը կրկին ասել։

- Տա, պապ ջան։ Տա։ Կրողնի՞ս

նկարեմ։

Յայցքին ավելացնելով ժպիտ ասաց։

- Նկարե, տղա ջան։ Սպես լմ'վ է։

- Շատ լավ է։

Ես նկարեցի նրան և ժպիտով հաջողություն մաղթեցի շատ բարձր ձայնով։ Սակայն կասկած մնաց իմ մեջ։ «Տեսմես լսե՞ց, թե չէ՞»։

- Էղ ի՞նչ կենես, այ տղա, - ձայնին

- Զէ, տատ ջան։

- Աղջիկ էլ չես ուզե՞»։

- Դե, չէ։

- Իյա՛ Յասմիկ, Տաթև, Վարդ... Արեք։ Իմ դիմաց կանգնեցին 7-ից 15 տարեկան 7 աղջիկ։

- Որի՞ն կուզես, բայս։

Սկզբում փորձեցի մտածել՝ ում ընտրեմ։ Յետո ինքս ինձ սաստելով պատասխանեցի։

- Ոչ մեկին։

Շիծաղելով ասաց։

- Դե, որ աղջիկ չես ուզե, գոնե բոյ մեր բաղչի խաղողը ուտես։ Յասմիկ, Տաթև, Վարդ... Յլը խաղողը բերնք։ Խաղողը շատ համեղ էր, բայց հասկացա, որ եթե մի քիչ էլ երկար մնամ, դժվար կարողանամ գնալ տուն, մի խոսքով, եկավ հրաժշտի պահը՝ մի հուզվել, մի լաց, ոնց որ լինեի նրանց կորած տղան։ Ես քիչ-քիչ հեռանում էի։

- Էլ չե՞ս գալու, - օգտագործելով վերջին ճիգը անհանգստացած բղավեց նա։

- Մնա՝ իինգ տարուց կերևամ, - նրան հանգստացնելով ասացի ես ու հեռացա ինքնավստահ քայլով։

**Դավիթ Այվազյան  
ք. Գյումրի**

տալով բարձր տոն՝ հարցրեց մի ուրիշ տատիկ։

- Յեչ Նկարեմ զը, տատ ջան։ Ավելի ծիշտ, սորվիմ զը նկարել։

Արդեն ձայնը փափկացնելով հարցրեց։

- Նկարելուց բացի կարո՞ղ ա ուրիշ բան ուզես, բայս։



Լուսամկարը՝ Կիմա Ենգոյանի



Լուսանկար՝ Միլվա Հովհաննիսյան

## Զմեռը մեկ փաթիլի մեջ

Տարվա եղանակներից ինձ ամենից շատ դուր է գալիս ծմեռը: Ինչպես ուրիշները՝ ես ծմեռը չեմ տեսնում ձյան, ամանորի, ցուրտ եղանակի մեջ, այլ ընդամենը մեկ փաթիլի մեջ: Այդ մեկ փաթիլում ես տեսնում եմ ամեն ինչ, և՛ ձյունը, և՛ ամանորը, և՛ ծմուն զանազան այլ հիանալի երևոյթներ: Բնությունն ունի հեքիաթային երևոյթներ, որոնք ապշեցնում են բոլորին: Զնոհանը ես մեծ մասն անցկացնում եմ տանը, վարարանի կողքին նստած:

Ինչո՞ւ հենց մեկ փաթիլ ձյան մեջ, պատասխանը պարզ է, որովհետև հենց այդ փաթիլով է սկսվում ծմեռը: Այդ փոքրիկ փաթիլները նման են մարդկանց, թե ինչո՞ւ, իհմա կասեմ: Եթե մի քանի փաթիլ ընկնեն գետնին, միանգամից կիավեն, իսկ եթե միլիոնավոր, միլիարդավոր փաթիլներ ընկնեն գետնին, ապա կծածկեն ողջ տարածությունը: Այդպես էլ մարդիկ: Եթե մարդը միայնակ է, ապա նրա մոտ դժվար թե ինչ որ բան ստացվի: Իսկ եթե միասնական լինեն, նրանց առջև կրացվեն համարյա բոլոր դրները:

Այդ մեկ փաթիլում ես տեսնում եմ ամեն ինչ: Դժվար թե մարդիկ ինձ հասկանան: Ամեն մարդ իր մտածելակերպն ունի և առաջնորդվում է դրանով: Մեկը՝ ռոմանտիկ է, մեկը՝ ռեալիստ, և այդպես շարունակ:

Զմոհանը շատ հաճախ ընկերներով, այսպես ասած, «տղերքով» դրւու ենք գալիս փողոց և խաղում ծմեռվա ամենատարածված խաղը՝ ծնագնդիկ: Յիմնականում ընկերներս ինձ կանչում են.

-Սերոժը տա՞նն ա:

Թե ասա՝ ո՞ւր պիտի լինեմ էս ցուրտ ծմոհանը: Ինչպես միշտ, վառարանի կողքին նստած:

**Սերյոժա Բաբոյան  
գ. Մալիշկա**

## Խնդրի երկրորդ երեսը

Ծնկերներիս հետ գնում էինք դաշտ՝ ֆուտբոլ խաղալու, երբ նկատեցինք, որ կտրում են դաշտի շրջակայքի առողջ ծառերը: Ծնկերոջս հետ որոշեցինք մոտենալ ու հարցնել, թե ինչու են կտրում ծառերը: Նրանք պատասխանեցին.

-Գախս եք, ծառերի ցոգովները ուստում եք, դրա համար էլ կտրում ենք:

-Քայ արժե՞ ցոգովի համար ծառ կտրել:

-Ախր, երեխեք ջան, ծմոհան փայտ չունեմ, փող էլ չեմ կարողանում աշխատել, որ փայտ գնեմ, ստիպված ծառերը կտրում եմ:

Մենք ոչինչ չասացինք և հեռացանք, քանի որ նա ճիշտ էր:

Տեսնո՞ւմ եք, մի խնդրից առաջանում է մեկ այլ խնդիր: Եթե այդ մարդն ունենար գումար՝ վառելիք գնելու համար, ապա չեմ կտրի իր իսկ տնկած առողջ և երիտասարդ ծառերը, այլ կզներ գոնե չորացած ծառի փայտ:

Էկոլոգիական կրթություն ստանում ենք, բայց կարծում ենք, ժամանակն մտածել աշխատատեղերի մասին:

**Բորիս Խորայելյան, 15տ.  
գ. Մալիշկա**

## Վարպետ Մելիքը

Յիշում եմ, երբ փոքր էի, մի օր առավոտյան ինչ-որ ձայն էր լսվում: Դոնից դուրս նայելով, ես փորձեցի պարզել, թե ինչ ձայն է դա, և տեսա սպիտակ մազերով մի ծերունու, ով դանակ տաշում էր կարմիր տուփ քարը: Նա այնքան էր աշխատել քարերի հետ, որ ծերքերն արդեն կոշտացել էին: Միայն ծերքերին նայելով երևում էր, թե որքան աշխատատեր մարդ է:

Քե՞զ էլ հետաքրքրեց, թե ով էր նա: Ազատեկ գյուղի վարպետի

ընտանիքում ծնկեց չորրորդ որդին՝ Մելիքը: Որդիներից միայն Մելիքը բռնեց հոր ուղին և դարձավ քարտաշ, իսկ մյուս երեք եղբայրները՝ Մելիքիկը, Սուրիկը և Յուսիկը, մեկը՝ ինժեներ, մյուսը՝ հաշվապահ, իսկ երրորդը՝ դարձավ տնօրեն: Նրանք ունեին ևս երկու քոյլ: Նախնիները եկել էին խոյից դեպի Ազգատեկ, որը նշանակում է ազատ տարածք:

Քրոջ հետ Ազատեկից տեղափոխվելով Երևան, Մելիքը կառուցել է իր և իր քրոջ տները, այնուհետև իր տունը վաճառելով, տեղափոխվել քաղաք Վայք (Չափսինում՝ Ազիզբեկով): Եվ արդեն Վայքում կառուցել է իր սեփական տունը:

Որոշ վարպետներ այդ թվում նաև ինքը, կառուցել են Վայքի մշակույթի կենտրոնի շենքը և այլ բնակելի շենքեր: Նրա կառուցների մասին կարելի է խսել ժամերով: Մարդ, ով աշխատեց նոյնիսկ իր կյանքի վերջին տարիներին, կառուցելով Մարտիրոս գյուղի եկեղեցին:

Այդ մարդը պապս էր՝ վարպետ Մելիքը:

Նա արդեն վեց տարի է՝ մահացել է: Մահացել են նաև նրա երկու եղբայրները և քոյլերը: Այսօր էլ նրա կառուցած շինությունները կանգուն են, և նրան իհշում են որպես աշխատատեր մարդու, որպես վարպետ Մելիք:

**Կարեն Զանոյան  
ք. Վայք**

## Արժե՞ սովորել

Ես տասներկուերրորդ դասարանցի եմ և, ինչպես ընկերներիցս շատերը, այնպես է ես, ընտրել եմ ապագա մասնագիտություն՝ լրագրող: Դա ամենաբարդ ու ամենապատասխանատու մասնագիտություններից մեկն է, քանի որ քննիչներից է կախված, թե ինչ մարդիկ կիմանան այս կամ այն իրադարձության մասին, ճի՞շտ է արդյոք, թե ոչ: Ու իմ բոլոր քննությունները (հայոց լեզու, ստեղծագործական աշխատանք և բանավոր հաղորդակցման (Էլ ուրիշ անոն չունեի՞ն դնելու), կապված են հայոց լեզվի գրականության հետ: Հակառակ ընկերներիս, որոնք պարապում են մի քանի առարկա, ես պարապում եմ մի հայոց լեզու և գրականություն: Շատերը զարմանում են, թե ինչպես եմ մեկ առարկա պարապելով ընդունվելու: Այս կրոնից բախտութերել է, խորանում եմ մի առարկայի մեջ: Ամբողջ օրը հայոց լեզու, պարապումներ, պարապումներ, պարապումներ, և ժամանակ էլ չի մնում դպրոցական մյուս առարկաների համար: Ծնողներս պնդում են, որ բոլոր առարկաները սովորեմ այնպես, ինչպես հայոց լեզուն: Նրանց ասելով, ամբողջ օրը պետք է գիրքը ծեռքից չգտնեմ: Հասկանում եմ, ինձ համար են անում դա, սակայն ինձ այնքան էլ պետք չէ իմանալ, օրինակ՝ 1975թ մայիսի 26-ին ինչ է եղել: Իհարկե, լրագրողին ցանկացած գիտելիք պետք է: Որքանո՞վ գեղեցիկ կիմի, եթե ես գնամ մանովի ասովսի որևէ թեմայի շուրջ ու գիտելիք չունենամ արձարձվող հարցի մասին: Բոլոր առարկաներից ես ունեմ այնքան գիտելիք, որքան ինձ պետք է:

Ուսուցիչներս ինձ լավ գիտեն և հասկանում են, որ իրենց առարկան ինձ համար այնքան էլ կարևոր չի, ու միշտ հանդուրժում են: Այս մասին սոցցանցում մի հետաքրքիր բան կա գրած. «Թող Աստված Երկար տարիների կյանք տա այն ուսուցիչներին, որոնք հանդուրժում են մեզ, քանի որ չենք սովորում իրենց առարկաները»:

Դ.Գ. Բայց նկատել եմ. վերջերս համը հանում եմ: Խոստանում եմ երկուշաբթի օրվանից դաս պատասխանել:

**Մուշեղ Վարդանյան  
ք. Վայք**

## Մի վերջանա, իմ սքանչելի օր

Հանգստյան օրերից հետո նորից երկուշաբթի: Ես շատ եմ սիրում առավոտյան քունը, որովհետև ամենալավ երազները սկսում են արկի ծագելուց հետո, բայց ինձ արթնացնում է դասի գնալու պարտավորվածությունը: Սովորության համաձայն, կանգնում եմ հայելու առաջ՝ ժպտում ու ասում, որ այսօր հիանայի օր է լինելու: Այդքանից հետո, իհարկե, ուրախ տրամադրությամբ և ժպիտով դուրս եմ գալիս տանից: Ես շատ եմ սիրում խոսել, անընդհատ գրուցել մի հետաքրքիր թեմայի շուրջ և այդ պատճառով էլ երբեք մենակ չեմ գնացել դպրոց: Հասանք դպրոց: Ես դասարանի ավագն եմ, և դա ինձ համար մեծ պարտավորություն է, միևնույն ժամանակ, նաև հետաքրքիր գործ: Զանգը հնչեց: Այժմ պետք է կենտրոնանալ դասին, բայց իհարկե, ինչպես վերը նշեցի, ես շատախոս եմ, և լինում է այնպես, որ ինձ դիտողություն են անում: Ես սիրում եմ իմ բոլոր ուսուցիչներին՝ հատկապես մեր դասին ընկեր Սիմոնյանին: Ես նրան սիրում եմ, որովհետև թեկուզ նա շատ մեծ է, բայց միշտ կենսուրախ է: Դպրոցում ամեն ինչ լավ է անցնում, երբ ես տրամադրվում եմ, որ այսօր հիանայի օր է լինելու: Մեր դպրոցի հոգեբանը խմբակ է վարում, որի մեջ ես նոյնպես ընդգրկված եմ: Նա ասում է, որպեսզի ծեր կյանքը միապաղոյ չինի, պետք է ամեն օր տուն գնալու ժամապարհը տարբեր լինի: Նրա խորհրդով ես որոշեցի այս անգամ ընտրել բոլորովին ուրիշ ժամապարհ:

Դե ահա,

Ես մի փոքր հոգնած գալիս եմ տուն և համտեսում եմ մայրիկին համեղ սստեղծագործությունները»:

Նա էլ ինձ նման չի սիրում միշտ նոյն բաները՝



միապաղաղություն: Հանգստանալուց հետո պատրաստում եմ դասերս: Դա տևում է մինչև ժամը յոթը, բայց այս անգամ ես շուտ վերջացրեցի, իսկ մայրիկը տանը չէր... Դեմ, ձեր մտքով է նոյն բանն անցավ: Ես որոշեցի պատրաստել խմորեղին: Տան մթերքները բավականացնում էին միայն ոռվետի: Ճիշտ ասած, չեմ սիրում լրության մեջ գործ անել, և ես դրեցի իմ սիրած երգերն ու գործի անցա: Ամեն բան լավ էր ստացվում: Ես գիտեմ մայրիկն ինչ է ուզում: Նա սիրում է, որ ինչ գործ էլ անելու լինես, մաքուր անես: Ես այդպես էլ արեցի: Սեղանին դրված էր միայն պատրաստ թխված ոռվետը: Մայրիկը եկավ: Նա սկզբում չնկատեց, բայց հետո առավ վառվածի հոտը (Ես չէի ուզում ասել, բայց մինչ ես ափսեներն էի վանում, մի փոքր վառվել էր իմ ոռվետը): Նրան շատ դուր եկավ իմ անակնկալը: Հրավիրեցինք նաև մորաքրոջը: Ոչ մի կտոր չէր մնացել: Արդեն ուշ էր: Ես պառկեցի ընելու, սակայն մտածում էի այս օրվա մասին: Օրն ուղղակի հիանայի էր: Ես հասկացա, որ ամեն բան գալիս է առավոտյան քունը օրվանը նկատմամբ տրամադրվածությունից: Ամեն օր ես արթնանում եմ այդպիսի զգացումով և վայելում կյանքը: Ես փորձում եմ նաև իմ դրական էներգիայից փոխանցել մարդկանց, որպեսզի բոլորն ուրախ լինեն: Մայրիկս ասում է, որ իմ մեջ չքացահայտված շատ տաղանդներ կան: Ինձ թվում է, մենք կրացահայտենք դրանք միասին:

**Նոնա Պետրոսյան  
ք. Եղեգնաձոր**



## Հարազատ միջավայր

Ինձ միշտ հետաքրքրել է կենդանական աշխարհը: Յուրաքանչյուր կենդանի ունի իր առանձնահատկությունները: Դիշում եմ, միշտ ուշադրություն եմ դարձել փողոցային կատուներին, խոճացել, կանգնել, մի քիչ մտածել ու հետո, գրկելով կենդանուն, վազել եմ տուն: Ճիշտ է, դժվար է այդքան կենդանիներ տանը պահելը, բայց ինձ միշտ հաջողվում էր համոզել տնեցիներին: Անեն ձմեռ մի կատու դառնում էր մեր ընտանիքի անդամ: Տասու, տեսնելով նորեկ կատուներին, ամեն անգամ ասում է.

-Ե՛, Սոֆյա՝, եխ՝ կատու: Լավ, բե՛ր, բե՛ր, տեսնենք էս մեկին որտեղ ենք տեղափորում:

Տասու արդեն հարմարվել էր իմ այդ բնավորությանը: Զմռանը վորքերին փորձում էի տուն բերել և տեղափորել վառարանի մոտ: Ա՛յ, դա համոզելը մի քիչ դժվար էր ստացվում:

Դպրոցից տուն կամ տնից դպրոց ճանապարհին, երբ մի կատու էինք տեսնում, և ես սկսում էի կանգնել ու մտածել, ընկերներս ասում էին.

-Եխ գնաց իրա կենդանական աշխարհը: Արի՛, ուշանում ենք, դրա ժամանակը չի:

Մանկության երազանքն էր՝ դառնալ մեծահարուստ և վարձել աշխատողներ, որոնց գործը կիմներ փողոցից գտնել անօգնական

կենդանիներին և պահել: Բայց քանի մեծացա, այնքան հասկացա, որ երազանք իրագործելով բարդ է: Չանս երկու տարի է, ինչ պահում եմ հայրս է գնել: Չանս անունը Շերման է: Սիրում եմ պատուիանից հետևել շանս և կատուներին խաղերին, համար կատուների հետ: Նրանք վախենում են և թաթով հարվածում շան պոչին, իսկ նա ավելի է ոգևորվում:

Ամռանը շանս հետ ֆուտբոլ են խաղում, իսկ կատուներս սիրում են, երբ իրենց հետ թելի կծիկով են խաղում:

Կատուներից մեկը շատ է կապված շանս հետ: Կարելի է ասել, որ նրանք անբաժան ընկերներ են: Զմռոք նրանք միասին են քնում՝ չսառչելով համար: Դիմնականում չեմ սիրում կատուներին անվանակոչել, բայց այս մեկի անունը Չիտա է, որի անունն էլ կապված է մեկ այլ պատմության հետ: Ունեմ մի շատ յուրահատուկ կատու, ում ամբողջ կյանքին ընթացքում կիշտեմ: Նա միշտ ուղեկցում էր ինձ դեպի դպրոց: Շատ հավատարիմ էր, իսկ ես էլ շատ կապված էի նրա հետ: Մի օր էլ տուն վերադարձա, բայց նա չկար: Շետաքրքրվեցի և օրեր անց իմացա, որ մեքենայի տակ է ընկել: Դա ինձ վրա շատ ազդեց:

Ինձ համար դժվար է լինում նրանցից բաժանվել, բայց, երբ տեսնում եմ, որ կենդանիները շատացել են, և դժվար է նրանց պահելը, ես հետաքրքրվում եմ և գտնում եմ մարդիկ, ովքեր ցանկություն կիայտնեն պահել նրանց: Վերջապես գալիս է ծմեռը, և միակ հոգսը, որ ես ունենում եմ, դա կենդանիներին տեղափորեն է: Շերմանը և Չիտան մնում են ավտոտնակում, իսկ փոքրերը տան կողքի սենյակում, գիշերն էլ վառարանի մոտ:

Հաճախ կենդանիների մեջ նկատում եմ այնպիսի հատկություններ, որոնք մարդկանց մեջ երբեք չեն տեսնում: Երբ մենակ եմ լինում, սկսում եմ կիսվել կենդանիներին հետ կամ պատմել անցկացրած օրվա մասին: Իսկ նրանք ել այնպիսի դեմքի արտահայտություն են ընդունում, իբր թե հասկանում են: Շուսամ, հասկանում են:

**Սոֆյա Աբրահամյան  
ք. Եղեգնաձոր**

## Վիրտուալ մոլորակի բնակիչները

Տանը աղ չկար, խանութներն էլ փակ են այդ ժամին, ինչ արած, պետք է դիմել հարևան Վարդանուշ տատիկի օգնությանը: Նրա թռոնիկներն էլ նոր էն եկել արտասահմանից, նրանց տանը շատ գրաղված կիմներն, բայց ուրիշ տարբերակ չունեմ: Բացում եմ դարպասը և կանչում՝ Վարդուշ տատիկ: Դուրս է գալիս և մոտենալով՝ ինձ փորձում ձանաչել:

-Այս, այդ դու ես, իմ քաղցրիկ, ինչ է պատահել:

-Սոյլ վերջացել է, խանութներն էլ փակ են, եթե խնդրեմ, մի փոքր կտա՞՞ք:

-Իհարկե, անցիր ներս, հիմա կրերեմ: Մտնում եմ ներս, սակայն ոչ որ ինձ չի նկատում, ամեն մեկի ձեռքին մի հեռախոս և պլանշետ կա, նրանք նստած են և գրում են ինչ-որ բաներ, ինձ այնպես ավելորդ և վաս եմ զգում այդ միջավայրում, միաժամանակ հասկանալով, որ այստեղ ոչ որ ինձ չի նկատի, ստիպված դուրս եմ գալիս և տեսնում Վարդուշ տատիկին՝ մի աման աղով:

-Շնորհակալություն, - ասում եմ ես և գալիս տուն: Իմ այդ օրվա տեսածը այնքան էր ազգել ինձ վրա, որ հիմա ինձ միայն այդ հարցն է հոգում, թե ինչու մարդիկ, իրական շփոմը թողած, նախընտրում են այդ անհետաքրքիր և ծանձրայի համացնային շփումը: Չէ՞ որ այդպես շփվելով մարդիկ սկսում են մոռանալ զգացմունքների, մարդկային վերաբերմունքի և առհասարակ հոգւոր արժեքների մասին, կորցնում են շերմությունը միմյանց նկատմամբ: Տեխնիկան այնքան է զարգացել, ամենուրեք այդ համակարգիչներն են, և երեխաները, զբաղվելով համակարգային խաղերով և սոցցաներով, մոռանում են դասերի մասին և իրենց ամենալավ շրջանը՝ մանկությունը, անցկացնում չոր ու ցամաք համակարգչի առջև:

Դիշում եմ, երբ փոքր էի, արագ-արագ սովորում էի դասերս, որ շուտ վերջացնեի, գնայի դուրս «գործնագործ» կամ «քռնոցի» խաղալու, իսկ հիմա երեխաները շտապում են վերջացնել դասերը և նստել համակարգչի առջև: Չես էլ ուզում պատկերացնել, թե ինչ կիմնի ապագայում, եթե այսպես շարունակվի տեխնիկայի զարգացումն ու տարածումը: Բոլորը կմոռանան

մարդկային, իրական շվման մասին, և կամաց-կամաց բոլոր մարդիկ ողբուներ կրտանան: Յուսով եմ, որ մի օր այս ամենի վերջը կդրվի, քանի դեռ Երկիր մոլորակը չի դարձել Վիրտուալ մոլորակ:

**Գոհար Չաքարյան  
գ. Մալիշկա**

## Ես ուզում եմ իմանալ

Բարև ծեզ: Իմ անունը Նարեկ է: Սովորում եմ Մալիշկայի թիվ 1 դպրոցում: Յետաքրքրվում եմ էլեկտրոնիկայով: Սպորտաձևերից սիրում եմ լող և վոլեյբոլ: Ճիշտն ասած, կարդալու հետ այնքան էլ սեր չունեմ: Չեմ սիրում նաև շարադրություններ գրել, բայց դե, ինչ արած, ես էլ այդպիսին եմ: Չափից շատ սիրում եմ ռեժիսորի գործը, սակայն ուսումս չեմ ուզում շարունակել այդ ուղղությամբ, քանի որ կարծում եմ, որ ֆիլմ նկարահանելու համար պետք է ուղղակի տաղանդ և ցանկություն ունենալ: Ուսման առումով նախընտրում եմ գնալ ճարտարապետության ուղղությամբ: Չափից ավելի երազող եմ, ինչն ինձ վրա ազդում է և՛ դրական, և՛ բացասական: Լինում է այնպես, որ ինձ խրախուսում են, որոշ դեպքերում էլ բոլորն ուղղակի ծիծաղում են ինձ վրա: Լավ եմ հիշում՝ 5-րդ դասարանում բնագիտության դասին ուսուցչուիս ասումների մասին ինչ-որ բան էր բացարում: Նա դասից դուրս մի հարց տվեց և ասաց, որ պատասխանողին 10 կնշանակի: Բոլորն սկսեցին ենթադրություններ անել, իսկ ես ընկա երևակայության գիրկը: Սկզբում ամաչեցի բարձրածայնել՝ մտածելով, որ այդպիսի բան լինել չի կարող: Տեսնելով, որ ոչ ճիշտ չի պատասխանում՝ փորձեցի ոհսկի դիմել, և ոչ իզոր: Խոսք չավարտած ուսուցչուիս ընդհատեց ինձ.

-Դիմանայի՞ է, կեցցե՞ս: Այդպես ես վաստակեցի առաջին 10 գնահատական բնագիտությունից: Հիշում եմ նաև, թե ինչպես էինք ընկերներով բարձրացել սարի գլուխը: Ես նայեցի ներքև և սիրահարվեցի այդ տեսարանին: Ակսեցի մտովի կառուցել մի սարք, որի օգնությամբ կարելի է նետվել սարի գագաթից ցած՝ և հանգիստ վայրեցք կատարելով հիանալ տեսարանի գեղեցկությամբ,

բայց այնպես, որ ցանկացած պահի կարելի լինի մնալ օդում: Երբ ես կիսվեցի այդ գաղափարով ընկերներիս հետ, ստացա ինձ այնքան էլ դուր չեկած պատասխան: -Դա խո՞ տու խիվանդ չես, ես յան յար շինես դեն:

Երբ ես վերադարձա իրականություն, նրանք արդեն սարի ստորոտին էին, և ես ստիպված եղա արագ-արագ հասնել նրանց, որ մենակ չմնամ... Մի անգամ էլ մայրիկիս հարցրի, թե ինչ չափման միավորով են հաշվում գրելու ժամանակ գրչի թողած թանաքի հաստոպայունը, և ոչ մի պատասխան չստացա: Նոյն հարցը ուսուցչուիս ուրբելուց հետո ստացա հետևյալ պատասխանը. «Երբեք չէի կարող մտածել, որ նման հարց կարելի է տալ»: Ես մինչև իմա էլ չեմ ստացել այդ հարցի պատասխանը... Դե լավ, էլ չշարունակեմ, թե չէ, վախենամ, դուք էլ կսկսեք ծիծաղել:

**Նարեկ Բաբայան  
գ. Մալիշկա**

## Իմ անմոռանալի շաբաթը

Սովորական չորեքշաբթիներից էր, դասերով լեցուն: Յեռախոսս սեղանին էի թողել, մեկ

էլ տեսնեմ մի անծանոթ համարից զանգ եկավ: Արագ վերցրի ու սրտատրով մտա սենյակ: «Մանանա» կենտրոնից էին զանգել, ասացին, որ սպասված դասընթացի համար ես ընտրվել եմ, կուզե՞մ մասնակցել:

-Դիմարկե, շատ եմ ուզում մասնակցել, ասացի ես:

Թոշկոտում էի սենյակով մեկ: Մերոնք մտածեցին, թե գժվել եմ, բայց երբ ասացի, թե ինչն ինչոց է, ամեն բան հասկացան: Այդ դասընթացի օրերը իմ կյանքի ամենաակտիվ և ուրախ օրերն էին: Ես այնքան բան սովորեցի այդ օրերի ընթացքում, որ մի կերպ էր գլխիս մեջ տեղափորվում: Յետո

հասկացա, որ ամեն ինչ շատ հեշտ ու պարզ է, պարզապես պետք է ընկալել: Վերջին օրն էր, գնացինք Զարիթավի գյուղ՝ ֆուտոներ անելու: Բաժանվեցինք երկու խմբի ու գնացինք հակառակ ուղղություններով: Ծա՛տ ցուրտ էր Զարիթավում, ճանապարհների սառուցքը դեռ չէր հավել: Յետաքրքիր ժամանակ անցկացրինք՝ փորձելով կիրաել մեր նոր գիտելիքները լավ ֆուտոներ ստանալու համար: Երբ վերադարձանք այնտեղ, որտեղից բաժանվել էինք, տեսանք մյուս խմբին, որը նոյնպես վերադառնում էր: Ես փորձեցի մոտենալ նրանց՝ սառուցքների վրայով: Բախսս չբերեց, ոտքս սահեց, ու ընկա, բայց դա էլ թիչ էր, շարունակում էի ցած սահել: Զկարողանալով բարձրանալ, որոշեցի հոյսս բախտի վրա թողնել: Բայց քանի որ մեր շատ բարի Մուշեղն այնտեղ էր, հաշվեք, թե հարցը լուծված է: Նա վագելով մոտեցավ ինձ, ու ի զարման ինձ, սահելով ավելի ցած իջավ, քան ես էի: Ես էլ իբր կատակեցի:

-Հը՞ն, Մուշ, իմա ե՞ս եմ քեզ փրկում, թե՞ դու ինձ:

-Զէ, սահելով արի հետևիցս, - ասաց Մուշը:

Յետոնեցի նրա հրահանգներին: Նա բոնեց ծեռքիցս ու օգնեց բարձրանալ: Ու ինչպես ասում են. «Մե՛ խին, մե՛ ծիծաղ...»:



Յ. Գ. Ապրես Մուշ ջան, ես էս դեպքը հաստատ չեմ մոռանա: Ափսոս ոչ մեկը չանմահացրեց էդ պահերը, հետո կնայեինք նկարները, կծիծաղեինք: Մեկ էլ ապրի Յայաստանի պատանի թթակիցների ցանցը, որ մեր առօրյան դարձրեց այսքան հագեցած:

**Յասմինկ Գիվարգիկյան  
գ. Մալիշկա**



## Արդուկն ու փողկապը

Նորառծ գեղեցիկ Արդուկը շատ ուրախացավ, երբ նրան գնեցին և տեղափոխեցին այն վերանորոգված բնակարան, որը պետք է դառնար նրա երկրորդ տունը: Երկար ժամանակ նա մնացել էր խանութի ցուցափեղին կանգնած, բայց միշտ ուրախացել էր իր ընկերների համար, որոնց գնել և տարել էին նոր բնակարաններ: Նա համբերատար սպասել էր իր հերթին: Նոյնիսկ Ամանորյա տոներին էլ նրան չգնեցին:

Եվ ահա այսօր նա երջանիկ է: Ինքն էլ կունենա ընտանիք և ընկերներ: Նոր բնակարանը մաքուր էր, լավ կահավորված և ումեր բարի տանտիրուի: Առաջին օրը նրանով հիացան և կողք դրեցին: Առավոտյան արթնացավ ծանոթ ձայնից և զարմանք ապրեց, որ իր հին ընկեր Փոշեկում էլ էր այդ տանը: Փոշեկուից հետո տանտիրուին միացրեց Արդուկը: Գեղեցիկ ու մաքուր սավանները սրբիչները, վերնաշապիկներն ու շրջազգեստները արդուկվում և տեղավորվում պահարանի մեջ: Յերթը հասավ գոռող Փողկապին:

-Զդիպչե՞ս ինձ, առանց քեզ էլ ես կոկիկ ու գեղեցիկ եմ: Արդուկը կուլ տվեց վիրավորանքը, շուտափոյա ավարտեց գործը և մոռացավ տիհած միջադեպը: Սակայն դա վիրավորանքի սկիզբն էր միայն: Գոռող, մեծամիտ ու չար Փողկապը նվաստացնում էր Արդուկին և բոլոր հագուստներին տրամադրում նրա

դեմ: Օր-օրի ավելանում էին  
Արդուկի հասցեին հնչող կշտամ- բանքները: Եվ Արդուկն արդեն կարոտով էր հիշում խանութի ցուցափեղ- կում անցկաց- րած իր անհոգ օրերը: Մի առավոտ տանտիրու-

ին երկար փնտրեց Փողկապը, բայց չգտավ: Երեկոյան փնտրութերը շարունակվեցին, սակայն ապարոյուն: Գիշերը, երբ բոլորը քնած էին, Փոշեկուլը ծայն տվեց Արդուկին.

-Հանգիստ եղիր, իմ լավ բարեկամ: Ես նրան կուլ եմ տվել: Նա էլ երթեք չի նեղացնի քեզ:

Հաջորդ օրը տանտիրուին Փոշեկուլը մարդեխս նկատեց փոշերաթախ Փողկապն ու առանց ափսոսելու դեն նետեց:

**Շուշանիկ Մելիքյան  
թ. Աբովյան**

## Կախարդական բաժկոնը

Մի օր բակում երեխաների հետ պահմտոցի էինք խաղում: Փակողը մի տղա էր: Ես հագել էի խոտի գոյսնի մի բաժկոն: Նա սկսեց հաշվել: Ես թաքնվել էի մի ծառի հետևում: Նա բացեց աչքերը: Կամաց-կամաց մոտեցավ իմ ծառին, ուզում էր տեսնել՝ ով կա այնտեղ: Ես խուճապի մատնվեցի: Մտածեցի, որ բռնվել եմ ու հասկացա, որ կարող եմ պառկել խոտի վրա: Ես փակեցի իմ դեմքը, ձեռքերս դրեցի գրապաններիս մեջ: Նա մոտեցավ, ուշադիր նայեց և մինչ ուզում էր հասկանալ ինչ է, կամ ով է, ես վագեցի ու ինձ թթեցի: Նա զարմացավ ու հարցրեց.

-Որտե՞ղ էիր:

Ես պատասխանեցի.

-Չեմ ասի, ով իմ գաղտնի տեղն է: Եվ մտածեցի. «Այ քեզ բախտ, սրանից հետո միշտ կիագնեմ իմ այս բաժկոնը և կթաքնվեմ խոտերի մեջ»:

## ԱՅԻ Ուզունյան

### Ոեքսը

Մեր բակում մի շուն կա: Նրա անունը Ոեքս է: Ես նրան շատ եմ սիրում: Մի օր իմ ընկերոջ հետ նստած զրուցում էինք: Յանկարծ Ոեքսը մեր դիմացով անցավ: Ընկերս վախից թաքնվեց, իսկ ես մի կտոր միս շպրտեցի նրա դիմաց: Ոեքսը միսը վերցրեց և գնաց: Երբ Ոեքսը գնաց,



ընկերս եկավ և նստեց կողքիս: Ես նրան հարցրի:

-Կախեցա՞ր:

-Այո՞,- պատասխանեց նա:

Եվ մենք շարունակեցինք մեր զրոյցը: Մի քանի օր անց իմացանք, որ Ռեքսը կորել է: Երբ շան տերը մեզ մոտեցավ և հարցրեց, թե չե՞նք տեսել իր շանը, ընկերս ջղանացած ասաց.

-Ձեր շունը մնել է, -և միանգամից վազեց տուն: Իսկ ես, որ խղճում էի շանը, ասացի, որ չեմ տեսել և նրա հետ միասին գնացի փնտրելու:

Վերջապես գտանք շանը:

Ընկերս մի քանի օր բակ չիջավ, և ես բարձրացա նրանց տուն, որպեսզի բացատրեմ, որ չի կարդի մեծերին ստել, և շներից վախենալ պետք չի. չէ՞ որ նրանք էլ են կենդանի էակներ: Հաջորդ օրը նա իջավ բակ: Բայց առաջինը ոչ թե ինձ մոտեցավ, այլ շան տիրոջը և ներողություն խնդրեց իր ասածի համար:

Ես շատ ուրախացա:

#### Վահրամ Խաչիկյան, 10տ.

### Առանց ծնողների

Ամեն տարի ամռանը Վանաձոր գնալուց 2 օր առաջ հարցուվորդ անելով ծշտում եմ՝ եթե գնամ Վանաձոր, ինձ հետ գալո՞ւ են հանգստանալու, թե ոչ, որ տիրություն թողնեմ Երևանում: Չեմ ուզում հանգիստս փշացնել: Զնյայծ գիտեմ, որ նրանք չեն գալու: Բայց հարցնում եմ՝ կարող է ո գան: Բայց, երբ իմանում եմ՝ չեն գալու, տիրու երգում եմ իմ հորինած երգը. «Չեն գալու, ինչ ափսոս, որ չեն գալու»:

Ահա և եկավ այն օրը, երբ պետք է գնայինք:

-Ուրա, ուրա, -դուրս ցատկեցի սենյակից և վայրէջք կատարեցի մայրիկին առջև:

-Մի քիչ առաջ չէ՞ր տիրում, -հարցնում է նա:

Պատասխան չկա, մարդ չկա: Մինչ նա խոսում էր, հաջորդ ցատկս ինձ տարավ դեպի հայելին: Սանրված էլ չէի: Ուրախացած սանրվում եմ:

-Ի՞նչ ես անում, - հարցնում է հայրիկս: Ուսերս եմ բարձրացնում: Գնում եմ հավաքեմ թափած մազակալերս: Իսկ մազերս մի այլ մազակալով եմ հավաքում, քանի որ կեսը փշացրել էի: Երբ արդեն դուրս էինք եկել բակ՝ առաջինը ես նստեցի մեքենան: Դուռը շրիսկացնելով փակեցի և



Հուսանկարը՝ Լիլիթ Վարդանյանի

մի նկատողություն էլ դրա համար

ստացա: Ճանապարհին մի քիչ

քննեցի: Երբ արթնացա, հասնում էինք

Դիլիջան: Մի լաց, ձչոց:

-Չեմ ուզում գնալ, չեմ ուզում:

Ծնողներս էլ ինձ փորձում էին

հանգստացնել: Հասանք տեղ, տեսա

ընկերուիիներիս և մտքումս ասացի:

«Հազիվ էլ ծայնս կտրել»:

Սկսեցի կարոտել Երևանի

ընկերուիիներիս և լաց չէի

կարողանում զսպել:

-Տատիկն եկավ, կարող ես գնալ,-

ասաց մայրիկը, բայց նրա ասածը ինձ ավելի ու ավելի էր տիրեցնում:

Համբուրելով ժամանակ էլ շահում,

որպեսզի զգնային, մեկ է գնացին: Իսկ

երբ վերադառնում եմ Երևան, տիրում

եմ Վանաձորի համար:

#### Անի Նալբանդյան, 9տ.

### Զուգարանում

Մայրենիի դասն էր, ամենաձանձրալի

դասը: Մտածում էի՝ ի՞նչ անեմ:

Նկարե՞մ, չէ, շատ նկարելուց իմ

ձեռքը արդեն չի աշխատում: Եթե

պատուհանից նայեմ դուրս, ավելի

կճանձրանամ, չէ՞ որ արդեն չորս

տարի է այնտեղ ոչ մի քանի չի

փոխվում: Գիտեմ, կգնամ զուգարան

ու այնտեղի պատուհանից կնայեմ

անցնող մարդկանց ու մեքենաներին:

Գնացի զուգարան և այնտեղ մի աղջիկ

տեսա: Ես մտածեցի, որ նա բարի է և

լավ ընկեր կդառնա:

Ես հարցրի.

-Բարև, իմ անումը Դարյա է, իսկ քո՞նք:

-Իմը՝ իրեն: Ես եկել եմ այստեղ,

որովհետև հիմա ամենաձանձրալի

դասն է՝ ոռուաց լեզու:

-Սեզ մոտ իմա մայրենի է, ես եկա, որ մարդկանց նայեմ:

-Արի՝ խաղանք: Ժամը 9:30 է, մենք կիասցնենք խաղայ:

-Բրնոցի: Դու կրոնես,- ասացի ես ու փախս:

Շատ ուրախ էինք: Շետք ես առաջարկեցի խաղալ պահմտողի, բայց զուգարանում կամ միջանցքում:

Մի քանի րոպեից իրենը նայեց ժամացոյցին:

-Ի՞նչ ես նայում, դեռ կես ժամ կա,- ասացի ես:

-Զէ, չէ,- բղավեց իրենը,- դասը վերջացավ:

Մենք վագեցինք դասարան, նա՝ իր, ես՝ իմ: Իմ ուսուցչուիին հարցրեց.

-Ո՞ր էիր ամբողջ դասին:

Ես մտածեցի՝ ի՞նչ ասեմ: Եթե ասեմ, որ խաղացել եմ, «Երկուս» կդմի: Ես կանգնեցի մի հինգ րոպե, հետո մի ծայն լսվեց.

-Ընկեր Խաչատրյան, կարելի՞ է:

Ես փախսա, որովհետև նա կիհշեր «Երկուսի» մասին:

Մի քանի անգամ ես տեսա իրենին, երբ տուն էր գնում: Իսկ

երբ մի օր ես և հայրիկս զրոսնում էինք, իրենին տեսանք, նա ինձ

սովորեցրեց հեծանիվ քշել: Մի քանի անգամ նա եկավ մեր բակ, և մենք խաղացինք միասին: Իսկ դպրոցում,

դասամիջոցներին ես ու իրենը գնում ենք խաղալու: Մի օր ես գնացի իրենի դասարան, իսկ նա եկել էր իմ

դասարան: Մենք չգտանք իրար, իսկ երբ վերադառնուի հանդիպեցինք, մի հինգ րոպե ժիջաղում էինք: Մենք մինչև հիմա լսվ ընկերներն ենք:

#### Դարյա Մարջանյան, 10տ.

## Օկտավ Պանկու Յաշ

### Իմ և Կոկորդիլոս-հայրիկի կարծիքները համընկնում են



Իմ կարծիքը, եթե ուզում եք իմանալ, այսպիսին է: Բոլոր փոքրիկ երեխաները, բոլոր տղաներն ու աղջիկները՝ բաց, շագանակագույն կամ սև մազերով, խաժ, երկնագույն և

մոխրագույն աչքերով, կճատ ու ուղիղ քթերով, կրտսեր, միջին և ավագ խմբ երեխաները, բոլորը, բացարձակապես բոլորը, պետք է երեկոյան ժամը 8-ին պառկեն քնելու: Ահա իմ կարծիքը: Իսկ ես, երեխաներ, շատ ժամփաներ եմ անցել, շատ բան եմ տեսել և շատ բան եմ լսել: Եվ եթե դուք ինձ չեք վստահում, ապա կարող եք զրուցել իմ կոշկակարի հետ: Նա ծեզ հաստատ կասի, որ իմ ժամփորդությունների ընթացքում ես մաշել եմ 99 զրոյգ զանկապաններ, 66 զրոյգ կոշիկ և 33 զրոյգ սանդալ: Լավ է դեռ, որ ես չեմ հագնում կրկնակոշիկ, ճտքավոր կոշիկ, թե չէ գումարս չէր բավականացնի:

Իմ ժամփորդությունների ժամանակ ես անցել եմ մի երկրով, որը, ինչպես և մենք, անուն ուներ: Այդ երկիրը կոչվում էր Աֆրիկա: Մեր երկրից Աֆրիկա շատ հեռու է, այնքան հեռու, ինչքան Աֆրիկայից մեր երկիր: Բայց քանի որ այս դեպքը տեղի է ունեցել հենց Աֆրիկայում, ապա չեմ նայի, որ այդքան հեռու է և կպատմեմ ծեզ:

Աֆրիկայում կոկորդիլոսների ընտանիք էր ապրում. Կոկորդիլոս-հայրիկը, Կոկորդիլոս-մայրիկը և Կոկորդիլոս-որդին: Կոկորդիլոս-հայրիկը հածախ էր ասում. «Իմ կարծիքը հետևյալն է, որ բոլոր փոքրիկ կոկորդիլոսները, աղջիկները և տղաները, կանաչ, շագանակագույն և ծիսագույն, սրածայր, ուղիղ ու բութ երախներով, փոքրիկ, միջին և մեծ պոչերով, բոլորը, բացարձակապես բոլորը, պետք է ժամը 8-ին անկողին մտնեն»:


Սակայն Կոկորդիլոս-որդին ուշադրություն չէր դարձնում, թե ինչ է ասում Կոկորդիլոս-հայրիկը: Կոկորդիլոս-որդին վարվում էր

այնպես, ինչպես խելքին փշեր: Պառկում էր քնելու ոչ թե 8-ին, այլ 9-ին, ամօգամ 9-ից էլ հետո: Նապա մտածեք, երեխաներ, 9-ից հետո... Բա դա լսված բան է: Նաշորդ օրը Կոկորդիլոս-մայրիկը պետք է քաշեր նրա պոչից, որ որդին քնից արթնանար: Մի անգամ Կոկորդիլոս-հայրիկը հարցրեց որդուն.

-Ե՞ր ես վերջապես ինձ լսելու և ժամը 8-ին անկողին մտնելու:

Փոքրիկ Կոկորդիլոսը պատասխանեց.

-Այն ժամանակ, երբ դու ինձ ժամացույց գնես: Թե չէ՝ այսպես ես չեմ իմանում, թե երբ է ժամը 8-ը լինում, դրա համար էլ ուշ եմ պառկում: Կոկորդիլոս-հայրիկն ու Կոկորդիլոս-մայրիկը խորհրդակցեցին, ծանոթ Կոկորդիլոսից պարտքով գումար վերցրեցին և իրենց որդուն



Ժամացույց գնեցին: Մենք այդպիսի ժամացույցներին անվանում ենք ծեռքի ժամացույց: Բայց քանի որ կոկորդիլոսները ծեռքեր չունեն, ապա ժամացույցներն էլ կոչվում են պոչի ժամացույցներ:

Սակայն նայելով ժամացույցին, Կոկորդիլոս-որդին ասաց.

-Ծառ փոքր է այս ժամացույցը, չեմ տեսնում, թե երբ են սլաքները ցույց տալիս ժամը 8-ը:

Դարձյալ Կոկորդիլոս-մայրիկը և Կոկորդիլոս-հայրիկը խորհրդակցեցին, դարձյալ պարտքով գումար վերցրեցին և ավելի մեծ ժամացույց գնեցին: Մենք այդպիսի ժամացույցներին անվանում ենք զարթուցիչ: Բայց կոկորդիլոսների աշխարհում, որոնք կարող են առանց զարթուցիչի էլ արթնանալ, քանի կոչվում են «Քնելու ժամանակն է»:

Սակայն այս ժամացույցն էլ Կոկորդիլոսիկն որուր չեկավ:

-Սա էլ է մանր թվատախտակով, ասաց նա:

Եվ դարձյալ խորհրդակցեցին Կոկորդիլոս-հայրիկն ու Կոկորդիլոս-մայրիկը, դարձյալ գումար պարտք արեցին, գնացին Կոկորդիլոս-ժամագրծի մոտ և ասացին.

-Ցույց տուր մեզ ամենամեծ ժամացույցը ամենամեծ ժոժանակով:



Նրանք գնեցին շատ երկար ժամանակով ժամացույց, այնքան երկար, որ երկում էր անգամ Բուգեոյից, որը

Կոկորդիլոսիկի տանից շատուշատ հեռու էր գտնվում:

Այս, երեխաներ, եթե դուք իմանայիք, թե ինչպիսի դժվարությամբ Կոկորդիլոս-հայրիկն ու Կոկորդիլոս-մայրիկը ժամացույցը տուն բերեցին: Կոկորդիլոսիկը տեսավ նոր ժամացույցը, և արդեն պատրաստվում էր ասել, որ սրա թվատախտակն էլ այնքան մեծ չի:

-Այս ժամա... - սկսեց նա:

Բայց քանի որ ուղիղ 8-ն էր, մեծ ժամացույցի րոպեների վլաքը բռնեց Կոկորդիլոս-որդու շալվարի փողքից և շարուեց նրան մահճակալի վրա: Ճիշտ նոյն պահին ժամացույցի զանգերն ազդարարեցին ժամը 8-ը: Յենց առաջին հարվածի ժամանակ Կոկորդիլոս-որդին ինքն իրեն հարց տվեց. «Սա ի՞նչ է: Ո՞վ ինձ հրեց»:

Իսկ երկրորդ

հարվածին ինքն

իրեն բացատրեց.

«Պարզ է, սա

ժամացույցն է...»:

Երրորդ հարվածին

ասաց. «Ես թեզ ցույց

կտամ...»:

Չորրորդ հարվածին՝ «Իսկ եթե ժամացույցը նորից ինձ անկողնուն նետի՞...»:

Յինգերորդ հարվածին. «Զարժե սրա հետ գոլիս դնել»:

Վեցերորդին. «Իսկ ի՞նչ կլինի, եթե ես պառկեմ»:



Յոթերորդին. «Ես կպառկեմ»:

Իսկ ութերորդ հարվածից հետո Կոկորդիլոսիկը պառկեց մահճակալին, քնեց և մինչ առավոտ չարթնացավ:

Իհարկե, այս պատմությունը չէր կարող մեզ մոտ պատահել, քանի որ մեր երկրում կոկորդիլոսներ չկան: Բայց այնուամենայնիվ, ես և Կոկորդիլոս-հայրիկը քնելու հարցում համա-

կարծիք

ենք:



## Մարկ Տվեճ

### ՀԵԺԱՆԻՎԻ ՍԱՆՃԱՀԱՐՈՒՄԸ

Հավ մտածելուց հետո ես որոշեցի, որ գլուխ կհանեմ: Ես գնեցի մեկ շիշ արձն թրջողներ և հեծանիվ: Ինձ տուն ուղեկցեց հրահանգիչը, որպեսզի նախնական տեղեկություններ հաղորդի: Մենք առանձնացանք ետնաբակում և գործի անցանք: Հեծանիվս այնքան էլ մեծական չէր, այլ այնպես, ասես մտրուկ լիներ, մի հիսուն դյոյմանոց, կարճիկ արգելակներով, բայց շատ արագնթաց, ինչպես վայել է ձիու մտրուկին: Հրահանգիչը համառոտ նկարագրեց առավելությունները, հետո նստեց մեջքին և որոշ տեղ վարեց, որպեսզի ցույց տա, թե ինչ հեշտ է: Նա ասաց, որ ամենից բարոյ վրայից թռչելուն է, բայց դա մենք հետո կսովորենք: Սակայն նա սխալվում էր: Ի զարման նրա, պարզվեց, որ բավական է միայն ինձ նստեցնել հեծանիվին և հեռու քաշվել, իսկ մի կողմ ցատկել ինքու կանեմ: Ես ցատկեցի շատ արագ, չնայած փորձ չունեմ: Հրահանգիչը կանգնեց աջ կողմից և հեց հեծանիվը, բայց հանկարծ բոլորս հայտնեցինք գետնին, ներքևում՝ նա, ես՝ նրա վրա, իսկ վերևում՝ հեծանիվը:

Զննեցինք հեծանիվը: Բան չէր պատահել: Անհավանական էր:

Հրահանգիչը համոզում էր, որ այդպես էլ պետք է լիներ: Եվ իրոք, զննումը հաստատեց նրա ասածը: Ես պետք է հասկանայի, թե ինչ ապշեցուիչ ամրության ապրանք է ինձ հաջողութեանը ծեռք բերել: Մենք մեր կապտուկների վրա արձն թրջողներ դրեցինք և ամեն ինչ սկսեցինք նորից: Այս անգամ հրահանգիչը կանգնեց ձախ կողմից, սակայն ես էլ շուր եկա ձախ կողմի վրա: Արյունքը նոյնն էր:

Հեծանիվը դարձալ անվանական էր: Մենք նորից թրջեցինք կապտուկները և սկսեցինք նորից:

Այս անգամ հրահանգիչն իր համար անվտանգ տեղ ընտրեց. կանգնեց հեծանիվի հետևը, սակայն չգիտեմ ինչպես, բայց ես հաջողացրի դարձալ իր վրա ընկնել: Նա հիացմունքից ուշքի չէր գալիս և ասաց, որ անհավանական է. հեծանիվի վրա անգամ քերծվածք չկա: Իմ վնասվածքները թրջելով ես ասացի

զարմանայի է, իսկ նա պատասխանեց, որ երբ լավ տիրապետեմ հեծանիվի կառուցվածքին, ապա կիամոզվեմ, որ միայն դինամիտը կարող է շարքից հանել այն: Հետո նա կաղալով գրավեց իր տեղը: Այս անգամ նա կանգնեց հեծանիվի առջևից և հրահանգեց մեքենան հետևից իրել: Մենք շատ արագ շարժվեցինք, սակայն անմիջապես էլ զարկվեցինք աղյուսներին: Ես դեկի վրայով թռիչք գործեցի ու բերանքսիվայր ընկա, հրահանգիչը ընկավ մեջքից վրա, և ես տեսա, որ հեծանիվը ծախրում է օդում՝ ծածկելով արևը: Լավ է, որ ընկավ մեզ վրա, քանի որ հարվածը թռվացավ, և հեծանիվը անվանա մնաց:

Հինգ օր անց ես վեր կացա անկողնուց, և ինձ տարան հիվանդանոց՝ հրահանգիչն տեսակցության: Նա արդեն ապաքինվում էր: Մի շաբաթ էլ չէր անցել, ես արդեն առողջ էի: Պատժառն այն էր, որ ես միշտ ցատկելուց գգուշավոր էի, միշտ մի փափուկ բանի վրա էի ընկնում: Ոմանք խորհուրդ են տայիս մայթին, բայց հրահանգիչն ավելի հարմար է:

Վերջապես հրահանգիչը դուրս գրվեց հիվանդանոցից և իր հետ բերեց չորս օգնականների: Կատ զաղափար չէր: Նրանք չորսով պահում էին շենք մեքենան, մինչ ես բարձրանում էի թամբին: Հետո շարվում էին աջուծախ կողմից, վազում կողղովս, իսկ հրահանգիչը հետևից հրում էր:

Հեծանիվը, ինչպես ընդունված է ասել, ութեր էր գորում, այս էլ ինչ այլանդակ ութեր: Որպեսզի տեղում նստած մնամ, ես ստիպված էի շանք գործադրել, միշտ բնության հակառակ մի բան: Իմ բնույթին հակառակ, բայց ոչ երբեք բնության օրենքներին: Այլ կերպ ասած, երբ ինձնից ինչ որ բան անել էր պահանջվում, իմ էությունը, սովորույթները, դաստիարակությունը ստիպում էին ինձ հայտնի կերպով վարվել, բայց ինչ-որ անձանոր բնության օրենք, պարզվում է, պահանջում էր հակառակն անել: Այստեղ ես պատեհություն ունեցա մկատել, որ իմ մարմինը ողջ կյանքում սիալ է դաստիարակվել: Մարմինս թաղված էր անկրթության մեջ, և չգիտեր մի այնպիսի բան, որ օգտակար լիներ իրեն: Օրինակ, եթե պատահում էր, որ ընկնելի աջ կողմի վրա, ես հետևելով բնազդին, կտրուկ ձախ էի թեքում դեկը, ինչով խախտում էի բնության օրենքը: Օրենքը հակառակ էր պահանջում.

առջևի ամիվը պետք է թեքել այն ուղղությամբ, որ ուղղությամբ ընկնելու ես: Եղր քեզ ասում են այդ մասին, հավատալը դժվար է: Եվ ոչ միայն դժվար է, այլ անհնար: Իսկ անելն ավելի դժվար է, անգամ եթե հավատում ես, որ դա է պետք անել: Չի օգնում ոչ հավատը, ոչ գիտելիքը,




ոչ էլ ամենահամոզիչ փաստարկները. Սկզբում ոչ մի կերպ չես կարողանում ստիպել քեզ նորովի գործել: Ասաշին պլան է գալիս գիտակցությունը. նա համոզում է քո մարմնին հրաժարվել իին սովորույթներից և սովորել նորը: Օրեցօր աշակերտը նկատելի հաջողությունների է հասնում: Յուրաքանչյուր դասի ավարտին նա ինչ-որ բան սովորում է, և հաստա գիտի, որ սովորածը ընդմիշտ կմնա իր հետ: Սա գերմաներեն սովորել չէ. Երբ երեսուն տարի շոշափելով ես առաջ ընթանում և սխալներ ես անում: Քեզ թվում է, վերջ, սովորեցիր, բայց չէ, իմաս էլ քիթ են խորհում անկանոն բայերի խոնարհում, և ամեն բան սկսվում է սկզբից: Ոչ, իմաս ես տեսնում եմ, թե գերմաներեն լեզվի դժբախտությունը որն է: Նրա վրայից չես կարող ընկնել ու ջարողել քիթ: Սա ակամայից կստիպի քեզ գործի անցնել: Եվ այնուամենայնիվ, ես կարծում եմ գերմաներեն պետք է սովորել հեծանիվ քշելով մեթոդով: Այլ կերպ ասած, մի ստոր բան վերցնել ու այնքան նստել վրան, քանի դեռ չես սովորել, և ոչ թե անցնել հաջորդին, կես ժամապարհին նետելով առաջնորդը: Երբ կսովորես քեզ պահել հեծանիվը

Վրա, առաջ շարժվել և թեքվել տարբեր ուղղություններով, պետք է անցնել հաջողի խնդրին՝ նատել հեծանիվի վրա: Դա արվում է այսպես. աշ ոտքով ցատկում ես հեծանիվի վրա՝ ծախը պահելով արգելակի վրա և երկու ձեռքով ամուր բռնելով դեկից: Յենց կիրահանգնեն, ծախ ոտքով կանգնում ես արգելակի վրա, իսկ աշն ամնապատակ կճոճվի օրում, որովայնով ընկնում ես թամբի վրա և ընկնում ես՝ միգուց աշ, միգուց ծախ կողմի վրա, բայց միանշանակ ընկնելու ես: Վեր ես կենում և ամեն ինչ սկսում սկզբից: Եվ այսպես մի քամի անգամ շարունակ:

Որոշ ժամանակ անց սովորում ես հավասարակշռությունի պահպանել, ինչպես նաև կառավարել մեքենան, առանց դեկր «արմատահան» անելու: Եվ այսպես, վարում ես առաջ, հետո կանգնում ես արգելակի վրա, մի քիչ ծիգ գործադրելով անցկացնում ես աշ ոտքով թամբի վրայով, հետո նստում ես, աշխատում ես շունչ քաշել, հանկարծ ուժեղ հրում դեպի աշ կամ դեպի ծախ, և նորից վայր ես թռչում: Սակայն շուտով կապտուկների վրա այլևս ուշադրություն չես դարձնում, աստիճանաբար սովորում ես աշ կամ ծախ ոտքով համեմատաբար ավելի հաստատուն վայր ընկնել: Այս նոյնը մի վեց անգամ կրկնելուց հետո և մի վեց անգամ էլ ընկնելուց հետո հասնում ես կատարելության: Դաշորդ անգամ թամբին ավելի ծկուն ես հայտնվում և դեռ մնում ես վրան, իհարկե, եթե բամի տեղ չընես օրում աննապատակ ճոճվող ոտքերդ, և մոռանալով արգելակների մասին: Եթե միանգամից արգելակների մասին մտածեք, լավ չի լինի: Շատ շուտով կսովորեք ոտքերը անմիջապես արգելակին չդնել, այլ այն բամից հետո, երբ սովորեք հավասարակշռություն պահպանել թամբի վրա: Այդ ժամանակ կարելի է ասել, որ դուք տիրապետում եք հեծանիվի վրա նստելու արվեստին: Եվ մի փոքրիկ գործնական աշխատանքից հետո դա անելը հեշտ կիմի, սակայն հանդիսատեսին խորհուրդ է տրվում հեռու մնալ, եթե դուք իհարկե նրանց դեմ ոչինչ չունեք: Դիմա ժամանակն է սովորել սեփական ցանկությամբ հեծանիվից իշնել: Կամբին հակառակ վայր թռչելը կսովորեք ձեր կամքից անկախ: Շատ հեշտ է երկու-երեք բառով բացատրել, թե դա ինչպես է արվում: Առանձնապես բան չի պահանջվում,

իավանաբար դա այնքան էլ դժվար չէ: Պետք է ծախ արգելակը իշեցնել այնքան, քանի դեռ ոտքը չի ստացել ուղիղ դիրք: Յետք անիվը ծախ թեքել ու թռչել վրայից այնպես, ինչպես ծիու վրայից են թռչում վար: Իհարկե, բառերով դա հեշտից էլ հեշտ բան է, սակայն իրազործելը շատ դժվար է: Զգիտեմ ինչու, բայց գիտեմ, որ դժվար է: Ինչքան ուզում ես ջանք գործադրի, սակայն չես կարողանում իշնել այնպես, ինչպես ծիուց են իշնում: Ինչքան էլ չարչարվում ես, մեկ է, գլխիվայր ես ընկնում, ասես տանիքից: Եվ ամեն անգամ վրադ ծիծաղում են: Մի ամբողջ շաբաթ ես ամեն օր սովորում էի օրը մի կամ մեկուկես

միշտ դարանակալում են մեզ այնտեղ, որտեղ չենք սպասում և մեզ անակնկայի են բերում: Եթե անձնական փորձը մեզ ինչ-որ բան կարող է սովորեցնել, ապա Մաթուսաղյին ոչ ոք չի հասնի: Եվ եթե նա կենդանանար, ապա առաջին հերթին ծեռքը կտաներ էլեկտրական հաղորդալարին և տեղում կամշչանար: Այնպես որ, ավելի ճիշտ կիմներ ու անվտանգ, եթե նա սկզբում ինչ-որ մեկին հարցներ, կարելի՝ է բոնել հաղորդալարից: Բայց դա նրան այնքան էլ չի սպասում: Նա կվստահեր իր փորձառությանը և կգերադասեր սեփական փորձով համոզվել: Եվ իրուս խրատ կիմանար, որ էլեկտրահարված նահապետը



Ժամ: Տասներկուժամյա կուրսից հետո ուսուցումն ավարտված էր, այսպես ասած, սևագիր: Ինձ հայտարարեցին, որ այժմ ես կարող եմ հեծանիվ քշել առանց օգնության: Նման արագահաս հաջողություններն անհավանական են թվում: Որպեսզի ծիավարության ընդիհանուր կիմունքներն իմանաս, ավելի շատ ժամանակ է պահանջվում: Ճիշտ է, ես կարող էի մենակ էլ սովորել, առանց ուսուցչի, սակայն դա ավելի վտանգավոր կիմներ: Ես ի ծնե ծկուն չեմ: Ինքնուսը հազվադեպ է ամեն բան ճիշտ իմանում, և տասն անգամ ավելի քիչ, եթե ուսուցչի հետ սովորեք: Բացի այդ նա սիրում է գոլու գոլվել և գայթակղել թեթևամիտ մարդկանց: Ոմանց թվում է, թե դժբախտ պատահարները, այսպես ասած, «կյանքի փորձ» են, որը մեզ օգտակար է: Կուգենայի իմանալ, թե այդ ինչպես ս: Ես երբեք չեմ տեսել, որ նման փորձառությունը երկրորդ անգամ կրկնվի: Դրանք

այլևս երբեք էլեկտրական լարերին ձեռք չի տա: Բացի այդ դա նրան շատ օգտակար կիմներ, և հրաշայի կերպով կավարտեր դաստիարակությունը այնքան ժամանակ, քանի դեռ մի օր խելքին չփառ դիմամիտը քշփորել՝ իմանալու համար, թե ինչ է ներսում: Բայց մենք շեղվեցինք: Ամեն դեպքում ուսուցիչ վարձեք, դա կօգնի խնայել թե ժամանակ, թե թրջողներ: Վերջնական հրաժեշտից առաջ իմ հրահանգիչը հետաքրքրվեց, թե ես արդյո՞ք բավականաչափ ֆիզիկապես ուժեղ եմ, և ես հածույքով տեղեկացրի, որ բնավ ուժեղ չեմ: Նա ասաց, որ այդ պատճառով սկզբում ինձ համար դժվար կիմնի սարն ի վեր քշել, բայց շուտով կվարժվեմ: Նրա մկանուտ մարմնի և իմ մարմնի միջև տարբերությունը բավական նկատելի էր: Նա ուզում էր տեսնել, թե ինչպիսին են իմ մկանները: Ես նրան ցուցադրեցի ձեռքիս մկանները, այն լավագույնը, ինչ ունեի: Նա մի կերպ

զսպեց ծիծաղն ու ասաց.

-Զեր մկանները լիսկած են, փափուկ, կլոր ու մատներիս տակից փախչում են:

Դավանաբար իմ դեմքը լարվեց, որովհետև նա ավելացրեց.

-Զարժե վշտանալ: Շուտով ձեր մկանները քարացած երիկամի պես կդառնան: Միայն թե ամեն օր հեծանիվ քշեք, և ամեն ինչ լավ կինի: Դրանից հետո նա ինձ հրաժեշտ տվեց, և ես ինքնուրույն գնացի արկածներ որոնելու: Ըստ էության, որոնել պետք չէ, դրանք, ինչպես ասում են, իրենք են թե գտնում: Ես ընտրեցի մի խաղաղ և սակավամարդ փողոց երեսուն յարդ լայնությամբ: Ես հասկանում էի, որ մի քիչ նեղոտ է, բայց համոզում էի ինձ, որ եթե տարածությունը ծիշու օգտագործեմ և շուրջս նայեմ, մի կերպ կանցնեմ:

Իհարկե, մեն-մենակ հեծանիվ նստեմ այնքան էլ հեշտ չէր:

Չկար քարոյական աջակցություն, կարեկից նկատառումներ: «Լավ է, այ իհմա ծիշու է: Առաջ, համարձակ առաջ»: Բայց աջակցություն, ամեն դեպքում, գտնվեց: Դա մի տղա էր, որ ցանկապատին նստած շաքարաբլոր էր կրծում:

Նա հետաքրքրվեց ինձնով և անընդհատ խորհուրդներ էր տալիս: Երբ ես առաջին անգամ վայր ընկա, նա ասաց, որ չէր խանգարի, եթե առջևից ու հետևից քարծեր կապեի վրաս: Երկրորդ անգամ խորհուրդ տվեց երեքակնամի հեծանիվ քշել: Երրորդ անգամ ասաց, որ ես անգամ զամբյուղի մեջ նստել չեմ կարող: Չորրորդ անգամ ես մի կերպ նստեցի և տարութերվելով սկսեցի քշել՝ գրադեցնելով ողջ փողոցը: Տեսնելով



իմ երերուն ու դանդաղ շարժումները, տղան արհամարհանքով լցված բրավեց.

-Վայ, հայրիկ ջան, ողջ արագությամբ սուրում է:

Յետո նա վայր իջավ ցանկապատից, մայթով այսուայնկողմ էր գնում և արհամարհական դիտողություններ շպրտում: Շուտով նա ցած իջավ մայթից և սկսեց քայլել իմ հետևից: Փողոցով մի աղջիկ էր քայլում, գլխին՝ լվացքի տախտակ: Նա ծիծաղեց,

ուզում էր ինչ-որ բան ասել, բայց տղան տիրական տոնով ասաց.

-Դանգիստ թող նրան, նա թաղման է գնում: Ես ծնվածս օրվանից գիտեմ այս փողոցը և կարծում էի, թե այն սկսողի նման հարթ է. Բայց ի զարմանս ինձ, պարզվեց՝ ծիշու չէ: Նոր քշողի ճեռքում հեծանիվն անհավանական զգայուն է: Նա ցույց է տալիս խութերն այնտեղ, որտեղ անգեն աչքով տեսանելի չէ: Նա տեսնում է թեքությունները: Ամենուր վերելքներ կային, ես քրտնքի մեջ

կորած ճգնում էի, բայց հեծանիվն այնուամենայնիվ ամեն քայլափոխի կանգ էր առնում: Այդ ժամանակ տղան բրավում էր.

-Այդպես, այդպես, հանգստացիր, ուր ունես շտապելու: Մեկ է՝ առանց քեզ թաղումը չեն սկսի:

Քարերը սարսափելի խանգարում են: Անգամ ամենափոքրերը սարսափ էին առաջացնում: Ես քշում էի դեսպի բոլոր քարերը, հենց փորձում էի շրջանցել, չի կարողանում: Դե դա մեր էության մեջ է՝ էշի համառությամբ բախվել ամեն բամի:

Ի վերջո, ես հասա մինչև փողոցի ծայրը, բայց պետք էր շրջելու

հետ: Այսուհետո ոչ մի հաճելի բան չկա, մանավանդ, երբ առաջին

անգամ ես անում, և հաջողության հասնելու շամսերը չնչին են: Զո՞

ուժերի նկատմամբ վստահությունը աստիճանաբար նվազում է, ամեն

տեսակ վախեր են առաջանում, բոլոր մկաններու լարվածությունից քարանում

են, և սկսում ես զգուշությամբ կորեր զծել: Բայց նյարդերու չեն դիմանում, կորն աստիճանաբար վերածվում

է կյանքի համար վտանգավոր զիգզագի: Դանկարծ մետաղե

նժույգը համտեսում է խայթոցներն ու կատաղած մագցում մայթին, հաշվի չառնելով հեծյալի պաղատանքները


և գրծադրած ճիգերը: Սիրտդ կանգ է առնում, շունչը կտրվում է, ոտքերդ քարանում են, իսկ հեծանիվը ավելի


ու ավելի է մոտենում մայթեզրին: Վրա է հասնում վճռորշ պահը, փրկվելու ամենավերջին հնարավորությունը:

Իհարկե, այդ պահին բոլոր հրահանգները միանգամից թռչում

են մտքից, և դու անիվը շրջում ես մայթեզրից, մինչեւ դեպի մայթեզրն

էր պետք թեքել դեկը: Եվ հասակով





մեկ փովում ես այդ անհյուրընկալ ու գրամիտածածկ ճանապարհի մեջտեղում: Ինչ արած, այս ամենը ես իմ կաշվի վրա եմ զգացել: Ես մի կերպ սողալով իջա անխոցելի նժոյգիս և նստեցի մայթեզրին ու սկսեցի հաշվել կապուկներս: Դեռ ես շրջվեցի անցած ճանապարհով: Եվ համկարծ նկատեցի կաղամբով բեռնված սայլը, որն ինձ ընդառաջ էր գալիս: Եթե որևէ բան պակասում էր վտանգը գագաթնակետին հասցնելու, դա հենց սայլն էր: Ֆերմերն իր սայլով գրանցեցրել էր փողոցի մեջտեղը, և ամեն կողմից թռղել էր հազիվ տասնյորս-տասնինը յարդ ազատ տարածք: Նրան ձայն տալ չէի կարող: Սկսնակներին բղավել չի կարելի: Դենց բերանը բաց անի, ուրեմն վերջ: Նրա ողջ ուշադրությունը պետք է կենտրոնացած լինի հեծանիվի վրա: Բայց այդ սարսափելի պահին տղան ինձ օգնության հասավ, այս անգամ ես նրան հոգաչափ շնորհակալ էի: Նա ուշ-ուշով հետևում էր իմ նժոյգի ընդհատ ու ոգեշնչված շարժումներին և տեղեկացրեց ֆերմերին: -Զախ, ձախ ընդունիր, թե չէ այն էշը վրադ կելին:

Ֆերմերն սկսեց մի կողմ քաշվել:

-Չէ, չէ, աչ: Կանգնիր: Այն կողմ մի գնա: Աչ: Զախ: Աչ: Զախ, աչ... Կանգնիր, մնա տեղում. թե չէ բանդ բուրդ է:

Դենց այդ պահին ես բախվեցի սայլին

ու հեծանիվով հանդերձ շուր եկա: Ես ասացի.

-Զոլավոր սատանա: Ի՞նչ է, չտեսա՞ր, որ ես քշում եմ:

-Տեսմելը՝ տեսա, բայց ի՞նչ իմանայի, թե դուք որ կողմ եք քշելու: Ո՞վ կարող էր իմանալ, ասացեք խնդրեմ: Մի՞թե դուք ինքներդ գիտեիք, թե որ կողմ եք քշելու: Ես ի՞նչ կարող էի ամել:


Դա ծիշտ էր մասամբ, և ես մեծահոգաբար համաձայնեցի նրա հետ: Ես ասացի, որ իհարկե, միայն ինքը չէ մեղավոր, այլ ես նույնպես: Մի հինգ օրից ես այնպես հմտացա, որ տղան չէր կարողանում իմ հետևից հասնել: Նա ստիպված էր դարձյալ մագլցել ցանկապատի վրա և հեռվից նայել, թե ես ինչպես եմ ընկնում: Փողոցի վերջում մի քանի քարե աստիճաններ կային, մոտ մեկ յարդ իրարից հեռու: Նոյնիսկ տանելի կառավարելուց հետո ես այնքան էի վախենում այդ քարերից, որ ամեն անգամ վրաերթ էի անում:

Այս քարերից ես ամենաշատն եմ տուժել, եթե չխաշվենք շներին: Ես լսել էի, որ անգամ ամենաառաջնակարգ սպորտսմեններին չի հաջողվում շրջանցել շներին: Նրանք անպայման ճանապարհը շեղում են: Կարծում եմ ծիշտ է, սակայն ինձ թվում է, որ նրանք չեն կարողանում վրաերթի ենթարկել շներին, որովհետև շատ են ուզում շրջանցել: Ես բնավ էլ չէի ուզում հեծանիվի տակ գցել

շանը: Բայց բոլոր այն շները, որոնք պատահում էին ինձ, ընկնում էին իմ հեծանիվի տակ: Այստեղ իհարկե տարբերությունը մեծ է: Եթե դու շամում ես վրաերթի ենթարկել շանը, ապա նա կարող է ծիշտ հաշվարկել և մի կողմ թռնել: Բայց եթե դու ցանկանում ես շրջանցել նրան, ապա նա չի կարող ծիշտ կողմնորոշվել, և ստվորաբար հայտնիում է այն կողմում, որ կողմում պետք չէր: Ինձ հետ միշտ այդպես էլ պատահում էր: Ես քշում էի բոլոր այն շների վրա, որոնք գալիս էին դիտելու, թե ես ինչպես եմ հեծանիվ վարում: Նրանք սիրում էին ինձ դիտել, որովհետև մեր շրջակայքում հազվադեպ էր պատահում մի բան, որը հետաքրքիր կիներ շներին: Ես շատ ժամանակ եմ վատել, որպեսզի ստվորեմ շներին շրջանցել:

Դիմա ես քշում եմ ուր ուզում եմ, ու եթե մի օր բռնեմ այդ տղային, հաստատ վրաերթ կանեմ, եթե իհարկե նա ուղղված չլինի:

Գներ ձեզ համար հեծանիվ: Եթե ողջ մնաք, հաստատ չեք փոշմանի:



Նկարը՝ Տաթևիկ Տեր-Ղովհաննիսյանի, 13տ.



Հասարակությունը կարելի է դատել նրանով, թե ինչպես է այն վարվում  
երեխաների հետ:

**Նելսոն Մանդելա**



Հայաստանի պատանի թղթակիցների ցանցի անդամների նյութերը պատրաստվել են Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ:  
Դրանք արտահայտում են հեղինակմերի տեսակետները և չեն կարող դիտարկվել որպես Եվրամիության դիրքորոշման արտահայտում:



Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Մանանա-հրատ» ՍՊԸ  
Վկայական՝ 02Ա046931 տրված՝ 31.12.1999

Թողարկումը պատրաստել են «Մանանա»  
մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնի սաները

Նկարները՝ Տաթևիկ Տեր-Յովհաննիսյանի, 13տ., Ռազմիկ Զաքարյանի

Երևան, Մաշտոցի 45Ա, բն. 40, հեռ. 58 16 70  
Էլ. փոստ. 17am.reporter@gmail.com  
www.17.am, www.mananayouthcenter.org



Տպագրված է «Նոյյան Տպան» տպագրատանը («ՆՏ հոլինգ» ՍՊԸ)  
Տպաքանակ՝ 2000